



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր»  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.


սրառման և տուրածի կողմէց ցույց ցունելած ձևով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ կողմէց ստեղծելու համար նոր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material











३८

891.99  
ԵՐԵ

ԳԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

1991.03.17

≡ ԴՐԱԿԱՆ ≡  
ԲՈՒԻՐԲՈՆՅԱՆ



Հ/ 27970

Թուրքական և Բ. Լ. Պ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

?

Այս վեպը յեմ՝ զբած չեմ՝ ծաղրելու, ծիծառեցնելու յեվ հեզնելու համար. այս վեպը զբած եմ, վորովեազի մարդիկ կարդան յեվ դառնապես արտասիլեն:

1918 թ. Վ. Ա. Աղիկավիադ

Ա. Պ.



«Մեր շատախոս ցեղի մեջ կան անհատներ,  
վորոնք, առանց ոլիմազրության, պիտի ընդունեյին  
մահապատճի շարշարանքը՝ յեթե անոնց թոյլ  
տրվեր կառափնատի բարձունքն ճոռոմ ճառա-  
խտություն մարտասանել՝ առանց յերկյուղի թե  
Սանտերի թմբուկները պիտի ընդհատեյին իրենց  
ճարտարաբանությունը»:

ՇԱՌԼ. ԲՈԴԼԵՐ



# ԴՈԿՏՈՐ ԲՈՒՐԲՈՆՑԱՆ

1

Թեև առասպելներ և զրույցներ չկապվեցան իր հայտնության շուրջը նախորոք, բայց մանուկի ծնունդը բոլորովին աննըշան չանցավ:

Մայրը ծննդաբերութենե յոթը ժամ առաջ ֆիզիկական անխուսափելի ցավեր զգաց, վորուն համար մոտիկ հարսաններ կանչվեցան, ինչպես և ժողովրդական դայեկ մը (մանկաբարձուհի) և դիշերվան ժամը 11-ին ծնավ մանուկը Խարբերդի Զմշկածագ ավանին ամենաբուռժուա տան ներքնահարկին մեջ:

Մանուկը իր արևային կյանքի առաջին բոպեյին իսկ... զայրացավ, և դայեկին զրկին մեջ՝ աղված ժամանակ, ուղղմական ճիշեր արձակեց:

Դայեկը, վոր շատ փորձված կին եր՝ զարմացավ...

— Զալըմ տղա յե, ըսավ դայեկը, յեթե մեծնա, ի՞նչ պիտի ըլլի:

Ըստ հայկական քրիստոնեյական սովորության՝ ծնունդին ութնոր հետո մկրտեցին մանուկը և անվանակոչեցին զայն Տիրատուր:

Տիրատուր չեր լար, այլ կը զայրանար և կը ճշեր իր հայտնությունը զգացնելով վոչ թե միայն տան անդամներուն, այլ հարեան բոլոր տուներուն:

Եեթե անիկա լեզու գիտենար՝ պիտի աղաղակեր,

— Ահա յես եմ վոր հայտնվեցա:

Իր ծնունդի գիշերը պատահեցավ դեպք մը, վոր անմիջապես կերպարանափոխվեցավ... զրույցի. Իր ծնողները, քույրերը և յեղբայրները և բոլոր հարեանները ապշեցան մեացին: Զրույցը բնականորեն խոշորցավ և սկսավ պատկառանք ներշնչել:

Իր ծնունդի գիշերը աքլորները իրենց բույներուն մեջ կանչեցին... մինչև առավոտ:

Ահա այդ գեպքը...

Շատերը կես գիշերեն հետո արթնցան և նստեցան իրենց տնկողիններուն մեջ, խաչ հանեցին և մըթմըթացին քիթերնուն տակ.

— Որ մը որանց աքլորները այսպես չեյին կանչեր, ինչ եպատահեր:

Անոնք չեյին գիտեր, վոր ծնած եր... Տիրատռւրը:

Բայց հաջորդ առավոտ դայեկը մեկնարանեց աքլորներու կանչը.

— Ակոր աղային նոր ծնած տղուն համար եր, ըսավ դայեկը, հայվանները մեզմե աղեկը գիտեն, ատոր համար կը կանչեյին:

Բոլորն ալ հավատացին դայեկին և իրարու ալ հավատացուցին:

Այս յեղավ Տիրատուրի կյանքին առաջին զրույցը, վորուն մասին այնքան խոսվեցավ վոր, իր մեծանալեն հետո՝ ինքն ալ լսեց և հավատաց անոր:

Եերբ մեկ քանի որ հետո մայրիկը առավ յերեխան իր գրկին մեջ ծիծ տալու՝ միացավ դայեկի կարծիքին, վորովհետև իր մանուկներեն և վոչ մին այդպիսի խոժոռ նայվածքներ ուներ և այդպիսի գոռող և ռազմընդունակ ճիչ: Իր մեծ քույրերը, վորոնք անհունորեն վոգեորված եյին նոր մանուկով՝ նույն դիտողությունն ըրին: Հայրն ալ մոտենալով իր կնոջ անկողնին, նստեցավ անոր վոտքերուն քովիկը, բռնեց անոր ձեռքը և ըսավ.

— Այս նոր տղանիս ուրիշ բան ե...

— Չեմ կարծեր, պատասխանեց կինը մայրական կոկետությամբ, Տիրանս ալ այդպես եր, բայց հետո հանդարտեցավ, ակնարկելով իր անդրանիկ զավակին:

Հայրը շհամոզվեցավ:

— Տիրանը ուր, սա ուր, աքլորները մեզմե աղեկը գիտեն, այս տղան նշանավոր մարդ պիտի դառնա:

Սորը աչքերուն մեջ հայտնվեցան յերջանկության լայն ցոլքեր, գլուխը ծոեց յերեխայի վրա, դուրս ձգեց իր լեփ-լեցուն ծիծերը և հանձնեց Տիրատուրին, վոր ատեն Ակոր աղան ծռեցավ և մանուկը համբուրել ձևացնելով՝ համբուրեց կարոտազին Տիրատուրի մոր ծիծը: Տիրատուրը կաթը ծծած ժամանակն իսկ փոքրիկ մռնչյուններ կարձակեր և վոտքերը անհանգիստ եյին:

Մինչև անգամ Տիրատուրը մկրտող քահանան յերբ տուն յեկավ և աղոթք մը կարդաց՝ հարեց.

— ...Յեկ ծնավ մանուկ մեծ և սքանչելի:

Այս զրույցի աղղած պատկառանքին տակ Տիրատուր մեծացավ դառնալով իր ծնողներու առանձին գուրգուրանքի առարկանախ քան ծխական վարժարան մանելը անիկա արդեն ծանոթ եր բոլորին իբրև արտակարգ տղա: Հայրը, վոր քիչ շատ գրել կարդալ զիտցող մարդ եր և նաև կը հասկնար յեվրոպական պատմութենե՝ իր Տիրատուրի մասին խոսած ատեն որ մը դայն կոչած եր Բուրբոն: Այս նոր անվանակոչությունը այնքան ալ պատահական չեր: Հայրը կարդացեր եր Ալեքսանդր Տյումայի վեպերը և ծանոթ եր Ֆրանսական միապետության Բուրբոնյան արքայական տան պատմության, վորուն մեջ հատկապես իր ուշադրությունը գրաված եր Լուդովիկոս Ժ. բդը, նշանավոր Լուի Կատորզը:

Հայրը պատահականորեն չկոչեց իր տղան Բուրբոն: Փոքրիկ Տիրատուրը հինգ տարեկանեն սկսավ տանը մեջ պոռակ.

— Յես եմ...

Ակոր աղան անմիջապես հիշեց Լուդովիկոս Ժ. բդի խոսքը — «L'est c'est moi» (պետությունը յես եմ) և յերբ գտավ վոր իր Տիրատուրն ալ միենույն ծանրությամբ և գոռողությամբ «յես եմ» կը հայտարարե՝ զայն կոչեց — Բուրբոն: Տան բոլոր անդամները և հարեանները, առանց հասկե ալու Բուրբոն անունին պատմական նշանակությունը՝ հետեւցան Ակոր աղային և հետզհետե ամբողջ ավանն ալ:

Ահա թե ինչպես ֆրանսական Մեծ Հեղափոխությամբ, արյան հեղեղներով վերջ գտած ամենահզոր արքայական տուներեն մեկը դարձյալ հարություն առավ Փ. բդ Ասիայի ամենախուլ և հետ ինկած ավանի մը մեջ հանձինն... փոքրիկ Տիրատուրի:

Առենե մը հետո միայն տան անդամները, ընտանիքի մռափիկ բարեկամները և Տիրատուրը մկրտող քահանան զիտեյին անոր իսկական անունը:

Յերբ քիչ մընալ մեծացավ Բուրբոն, հետամուտ յեղավ հաս-

կընալու հորմեն իր անունին նշանակությունը։ Հայրը անոր պատմեց Լուի Կատորդի պատմությունը։ Փոքրիկ Բուրբոնի մատաղ իմացականության վրա խոր տպավորություն ներգործեց և պատությունը յե՛ս եմ։ Հայտարարությունը և անկե հետո ինքն ալ ավելի շեշտավոր և ավելի կոկողավիղ կրկնեց զայն տան մեջ և ընկերներու առջև։

Եերբ անիկա հայտարարեց՝ «Ես եմ», իր տունը արձագանգեց. «Դուն ես», Կամաց կամաց բոլորն ալ հավատացին վոր՝ անիկա յե՛։

Միական վարժարանի մեջ խաղի ժամանակ Բուրբոն կը հրամայեր. «Յես պիտի ըլլամ ձեր առաջնորդը»։ Յեվ առանց հավանություն ստանալու—«Բերդ» խաղալու համար կձեռնարկեր կարգադրությանց, կը ցատկեր, կ'ելլեր բարակույտին գագաթը և կը հրամայեր։

—Եղթա կաղմեցէք, ուշադրություն, բերդը մտնողներ կան, դժւն դուրս յել, յերկու հոգի ներս, հինգ հոգի դաւրս։

Իր ընկերները կը մոռնային, վոր ինքնակոչ կերպով Բուրբոն դեկաված եր խաղը՝ կհնազանդեյին, Յեթե պատահեր վոր մեկըն ու մեկը հարց բարձրացներ անոր ղեկավարության շուրջը, փոքրիկ Բուրբոն արհամարհանքով կը նայեր ըմբռութին վրա և կը հրամայեր ծեծի յենթարկել և զրկել զայն խաղի հաճույքեն։

Յեթե խաղի պատեհություն շըլլար՝ Բուրբոն կստեղծեր բանմը, վորուն առաջնորդը հանդիսանար։

Որ մը փողոցին մեջ հանդիպեցավ իր ընկերներու մեկ քանիին։

—Յեկեք իմ յետենս, աղաղակեց անիկա գլուխը վեր բռնած և խիսա հրամայողական յեղանակով։ Անոնք անմիջապես հնազանդեցան։ Մեկ յերկու փողոց քալելե հետո՝ Բուրբոն նշմարեց վոր, մեկ քանի հոգի ալ ավելցան, այն ատեն հանկարծակի յետ դարձավ, զինվորական շարքի կանգնեցուց զանոնք և դարձյալ հրամայեց քալել, վորքան առաջ գնաց, այնքան շարքը խտացավ, մինչև անդամ փողոցի շները հետեւցան անոնց, Փոքրիկ Բուրբոն միշտ առ-

ջնեն, գլուխը հրացանի մը կոթին պես ուղիղ և անճկուն։ Մինչև  
անդամ շները իրմեր առաջ չի քալեցին հառելով Բուրբոնին և յե-  
րերցնելով իրենց պոչերը։ Կամաց կամաց խումբը փոխվեցավ փոք-  
րիկ ամբոխի մը։ Լուսամուտներե գլուխներ դուրս ցցվեցան և  
տանիքներու քիվերուն վրա մարդիկ հավաքվեցան զիտելու։ Հե-  
տրգնետե բարձրացան աղմուխներ, ուրախության և արտակարգ  
դեպքի մը կանչվատուքներ լսվեցան։ Ուրիշ փողոցներե և թաղերե  
մարդկանց հոսանք մը յեկավ տեսնելու բրարանցումը։

—Դարձյալ Բուրբոնն ե, զարմանալի տղա յե, յեղբայր, մեծ  
մարդ պիտի ըլլա, կըսեյին շատեր։

Եերը Բուրբոն թափորը հասցուց մինչև իրենց տան մեծ դու-  
ռը, բարձրացավ անդուխներուն վրա, աջ ձեռքը բարձրացուց  
վեր իրեն լուս հրաման, վոր թափորը կանգ առնե։ Թափորը կանգ  
առավ և տիրեց ծանր լուսություն։ Բուրբոն պահ մը խոժոռ նայ-  
վածքներ պատցուց իր շուրջը, կուրծքը ցցեց, ձեռքը դարձյալ  
բարձրացուց, աչքերը հառեց յերկնքին և պոռաց։

—Յըրվեցեք։

Ժխոր, աղմուխ։ Թափորին մեջ մինչև անդամ կարելի յեր  
նշմարել տարիիրոտ մարդիկ։

Փոքրիկ Բուրբոն ներս մտավ ծանր քայլերով, քույրերը հա-  
վաքվեցան իր շուրջը, մեկը զրկեց, մյուսին տվավ։ Յերջանկու-  
թյունը անչափ եր իր ծնողներուն համար։ Բուրբոն խոսելով թա-  
փորի մասին՝ ըսավ։

—Յես կազմակերպեցի…

Փոքրիկ Բուրբոն հետզհետե սկսավ իր հեղինակությունը տա-  
րածել ծխական վարժարանի մեջ։ Փոքրիկ տղոց մեջ ծագած բո-  
լոր վեճերը կը լուծվեյին Բուրբոնի հեղինակավոր վճիռովը։

Անիկա շուկայի մեջեն կանցներ հեծանիվի պես արագ, Խա-  
նութպանները կը դառնային իրարու և մատով Բուրբոնը ցուց-  
նելով կըսեյին։

—Բուրբոնը… կ'անցնի։

Բուրբոն չեր քալեր, կսուրար…

Որ մը յերբ ճանապարհի վրա մեկը անզգուշությամբ իրեն զարնվեցավ՝ կեցավ Բուրբոն, վոտքեն մինչև զլուխը լավ մը դիմեց արհամարհական նայվածքով և... անցավ:

Իր անցքը վողոցներուն մեջ յերբեք անշմարելի չեր:

Միական վարժարանը տակավին չավարտած՝ իր ծնողները մտածեցին Բուրբոնը ուղարկել կոլեջ: Այս վորոշումը անմիջապես գործադրության դրվեցավ, Բուրբոնը կուղարկվեր Խարբերդ, Յեփրատ Կոլեջ մեծ և ահավոք հույսերով, իրուն գիշերութիւն աշակերտ: Փոքր Աօխայի այդ կողմերը այն ատեն, ինչպես այժմ, կանոնավոր շառեներ չկային և զավախ զանազան զյուղերեւ և քաղաքներեւ կենտրոն գալու համար պետք եր տաժանելի և յերկար ճամբորդություն մընել ձիերու, եշերու և ջորիներու վրա նստած:

Բուրբոնի ճամբորդությունը վորոշված որեն որ մը ուշացավ, վորովհետեւ խեղճ հայրը առանց նկատի առնելու իր տղու ասպետական վողին փոխանակ ձիեր վարձելու՝ յերկու խոշոր եշեր վարձած եր մեկը նստելու և մյուսն ալ՝ իրեղենները բեռցնելու:

Բուրբոն յերբ տեսավ եշերը՝ զայրացավ և մերժեց իշու վրա նստել:

— Զի կուզեմ, գեղեցիկ ձի կուղեմ, աղաղակեց Բուրբոն և ասպետի մը անվայել կերպով լացավ:

Բույրերը միացան իրենց գոռող և բողոքող յեղբոր հետ և պահանջեցին անպայման յերկու միազույն ձիեր վարձել: Մայրը ուրախութենեն զբկեց փոքրիկ Բուրբոնը, ժպտեցավ և ըստավ:

— Մի լար, աննման յավրձւ, քեզի համար ձիեր կը վարձենք, յերկու կարմիր ձիեր անպայման, մի լար:

Բուրբոն աշխերը սրբեց, ամոթեն չնայեցավ վոչ վոքին յերեսը և սպասեց հոր վերադարձին, վոր անմիջապես զացած եր զուրս իր տղուն կամքը կատարելու համար:

Հայրը համարեցավ իշապանին վճարած կանխավճարեն և վարձեց յերկու ձիեր, վոչ կարմիր սակայն, անկեղծորեն առարկելով վոր ձիապանները յերկու կարմիր ձիեր չունեյին:

Ձիերեն միայն մեկը կարմիր եր:

Բուրբռոնը ներքուստ շհամողվեցավ, բայց համակերպեցավ պայմանով, վոր ինք պիտի նստեր կարմիր ձիուն վրա, իսկ մյուսին՝ պիտի բեռցնելին իրեղենները:

Իրեղենները բեռցուցած ատեն Բուրբռոն նշմարեց, վոր իր սուրը շիկար, Հրամայեց իր մեծ քրոջ գտնել սուրը և անմիջապես բերել, Թույրը վազեց և բերավ, Զիապանը առավ սուրը և կատակելով յերեխայի հետ կախեց սուրը անոր վրայեն։ Բուրբռոն շիհասկցավ ձիապանի հոգերանությունը։

— Զիապան մը չի կրնար կատակել ինձի հետ, մտածեց անիկա։ Բուրբռոնի սուրը փայտե յեր, թեն անիկա շատ լավ դիտեր տարրերությունը փայտին և պողպատին, բայց անոր համար անհրաժեշտը սուրին ձևն եր—յերկար և կոր, վրան թիթեղյա աստղիկներով զարդարված։

Բոլորին համբուրելե և բոլորեն համբուրվելե հետո՝ զնաց և կանգնեցավ ձիուն քով առանց ցույց տալու, թե չեր կրնար վրան բարձրանալ, Հայրը գրկեց և նստեցուց զայն անասունին վրա։ Բուրբռոն յերկարեցավ և բռնեց ձիուն բաշը, իսկ սանձը մնաց ձիապանին ձեռքը։

— Կեցէք բարով, աղաղակեց Բուրբռոն զլուխը վեր ցցած և աչքերը հառած... յերկնքին։

Զիապանը ճանապարհին քանի մը անգամեր նշմարեց, վոր փոքրիկ Բուրբռոն ձիուն վրա, տարված իր մանկական յերազներով, կը քաշեր իր փայտե սուրը և տեսակ մը հրամաններ արձակելու նշաններ կըներ ողին մեջ, սպառնազին պտտցունելե վերջը՝ կը դներ դարձյալ պատյանին մեջ։

Զիապանը այն ատեն չեր կարող դիտակցիւ թե ով եր իր ձիուն վրա նստողը...

Ցերք Խարբերդ հասան՝ ըստ իր ստացած պատվերին՝ ձիապանը առաջնորդեց Բուրբռոնը Ամերիկյան Յեփրատ կողեջը իր իրեղեններով միասին և հանձնեց զայն զիշերոթիկ հարկարամնի գըլիսավորին, վոր ընդունեց փոքրիկ և սիրուն նորեկը սիրալիր ժըպիտներով և անմիջապես կարգադրեց 10-15 տարեկան աշակերտ-

ներու ննջարանին մեջ մահճակալ մը սարքել անոր համար:

Յերբ ծառան շալկեց իրեղենները և տարավ՝ Բուրբոն հետեւ վեցավ անոր իր փայտե սուրը վրան կախած: Աշակերտները զարմանքով և հետաքրքրությամբ դիտեցին այս փոքրիկ տղան, իր սուրը և գլուխին բռնած ձեւը—աքլորի պես հպարտ և առնական:

Յերբ իր ննջարանը տեղավորվեցավ, մեկ քանի ըստեւ հետո՝ վոտքի կանգնեցավ և ինքնն իր առանցքին վրա կիսարուրակի ձեւվով դարձավ և սկսավ արհամարհանքով դիտել շուրջը: Մեկ քանի հասակակից աշակերտներ մոտեցան անոր և բաղձացին տեսնել... սուրբ: Բուրբոն քմծիծաղով և մեծ մարդու մը ծանրությամբ տվագ սուրբ: Աշակերտներն մեկը դուրս քաշել փորձեց դայն պատյանեն, բայց չհաջողեցավ, Բուրբոնը առավ անոր ձեռքեն, քաշեց սուրբ պատյանեն, բարձրացուց վեր և պոռաց.

—Պատրաստ, ո՞ն...

Պատիկ աշակերտները ի սրտե նախանձեցան այս նորեկի այդքան վարժ սուսերախաղի վրա:

Իրիկվան Բուրբոն կանչվեցավ դլխավորի գրասենյակը: Գացած ասեն իր մահճի քովի ընկերը, վոր այլևս մտերմացած եր նորեկի հետ և մինչև անդամ անոր անունը դիտեր, զգուշացուց վոր սուրը վար առնե ուսեն և ապա յերթա դլխավորի մոտ, բայց Բուրբոն արհամարհական և խիստ նայվածքով մը «վոչ» պատասխանեց և գնաց... սուրով: Բուրբոնը շատ զարմացավ այդ զգուշավորության վրա, վորովհետեւ անիկա իր մաքին մեջ միայն մեկ մտածում ուներ—սուրը ցուցունել վարժարանի դլխավորին—մը տածում մը, վոր մանկորեն և ջերմադին դորովանքով փայտայած եր: Անիկա կընար լաց լինիլ և հիվանդանալ յեթե համոզում գոյացներ վայրկյան մը, վոր առիթը չպիտի ունենար իր սուրը վարժարանի դլխավորին ցուցնելու:

Դլխավորը ապշությամբ նայեցավ նորեկի վրա և դիտեց դայն վոտքեն մինչև գլուխը:

—Այդ ի՞նչ բան ե, հարց տվագ դլխավորը ցուցունելով անոր ուսեն կախված սուրբ:

— Իմ սուրս եւ, յես սուր ունիմ, պատասխանեց Բուրբոն:

— Բայց գլուխոցին մեջ այլին չպիտի պատցնես, հարեց զըլիսվորը, այդպիսի բաներ վնասակար են և հակառակ բարի և քըրիստոնյա մանուկի մը վոգիին:

Բուրբոն վոշինչ չհասկցավ ոլխավորի քրիստոնյական փիլիսոփայութենեն:

Բուրբոն աչք մը պատցուց իր ուսեն կախված ահեղ գործիքին վրա և մտածեց.

— Եես կսիրեմ սուրը և կուանեմ զայն:

— Ի՞նչ և անունդ, հարցուց զլխավորը:

— Բուրբոն... պատասխանեց անիկա թավ և ծանր շեշտերով:

— Բուրբոն:

— Այս, Բուրբոն...

Դիմավորը վոտքեն մինչև գլուխը դարձյալ զննողական ակնարկ մը պատցուց, Բուրբոն շատ լուրջ ընդունեց այդ զննողությունը, անիկա մեծ հավատք ուներ իր անունի պատմականության մասին: Իր սուրեն առաջնագույնը իր... անունն եր:

— Բուրբոն... յես եմ, կը կրկներ անիկա անդադար իր մտքին մեջ և հաճախ անգիտակցաբար կ'արտասաներ բարձրաձայնուրիշներու ներկայության:

Բուրբոն շուտով դարձավ աչքի դարնող աշակերտ մը վարժարանին մեջ, վոչ թե առաջդիմական ընդունակություններուն համար, այլ իրքև կոկողավիդ տղա և իրըն... ճարտասան:

Յեկրտառ Կոլեջի մեջ սովորություն կար, վոր նախակրթարանին մեջ աշակերտին դոց սովորեցնել կուտային գրական արտասանելի կտոր մը և շարաթ որերը աշակերտը կ'արտասաներ դայն ցուցանելով իր առողանության և ճարտասանության ձիրքերը: Բուրբոն առաջինը հանդիսացավ ճարտասանության մեջ իրըն ընաւուր տաղանդ: Իր ուսուցիչները զինքը սկսան կոչել... պերճախճան: Յերբեմն կպատահեր, վոր Բուրբոն կմռնար բռն հեղինակին խոսքերը, բայց անիկա բռու մը, շատ խոշոր և իր խելապատակին մեջ չպարփակություն ու կ'ապելցներ, շարժելով

Հ 27970



հեղինակը հասկցողներուն ծիծադը և չհասկցողներուն հիացումը:

Բուրբոն ինք առաջինն եր, վոր կը հիանար իր վրա և կը թուլացներ ուրիշներու հիացման զգացումը:

Բուրբոն կերթար ճարտասանության ուսուցչի մոտ և ժամերով կինդրեր վոր ամեն շաբաթ զինքը բեմ բարձրացնե, մինչդեռ ուրիշ աշակերտներ խույս կուտային: Կը պաղատեր Բուրբոն վորպեսզի իր համար ընտրելին անպայման ռազմաշունչ վոտանավոր մը: Որ մը անոր բաժին ինկավ արտասանել Վիկտոր Հյուկոյի մեկ նշանավոր ճառը՝ ուր, ի միջի այլոց, կըսե. «Մարսելլ, վոտքի հանե քու զավակներդ և դռւ, Տիմոն, բարձրացներ սուրդ»: Բուրբոն գիշերներով յերազեց հնար դանել սուր կախելու և «Ճիմոն», բարձրացնուր սուրդ» արտասանած ատեն քաշելու սուրը և նոճելու ողին մեջ՝ աշակերտներու զիններուն վրա սպառնազին և... ծափեր խլելու, բայց արգեն յերկու տարվան աշակերտ եր և գիտեր, վոր անկարելի յեր այդ յերազը կյանքի կոչել, բայց անիկա չի դադրեցավ... յերազել, քունին մեջ վեր վեր ցատկելով և շաբաթ որվան ճառեն բառեր արտասանելով:

Արտասանության ատեն, համենայն դեպս, սուր քաշելու ձեր փորձեց աջող կերպով առանց... սուր ունենալու:

Բուրբոն բարձրացավ վարժարանի բարձրագույն դասընթացը յերբ տակավին տասնեւից տարեկան եր: Անիկա ճարտասանության մեջ ցույց տվավ արտակարգ կարողություն, գրեթե չը տեսնը ված տաղանդ մը կուեցի տարեգրությանց մեջ: Ծնորհիվ իր ճարտասանական բնատուր տաղանդին՝ անիկա յերեսութական կարողություն ցույց տվավ նաև լեզուներու մեջ, իսկ մացյաբ դասերը կանցներ ու չեր անցներ:

Կոլեջական մինուորտը, սակայն, հեղաշրջեց Բուրբոնի հիմնական յերազները: Կամաց կամաց անիկա մոոցավ սուրերը, հաղթությունները, բայց միշտ պահելով իր ասպետական... ձեվերը, Բուրբոնի հոգին սկսավ տանջիկի տիտղոսներու համար: Դըժքախտաբար Բուրբոնի միտքը ոգնության չեր հասնիր անոր հոեկան թոփշքներուն:

—ի՞նչ կոչվիլ, հարց կուտար ինքնիրեն, դոկտոր թե պրֆեսոր:

Որվան գասերը լրացնելե հետո՝ յերկար և առանձին պառույտներ կը ներկայի պատույտի ճամբուն վրա և անդադար կը մտածեր —դոկտոր թե պրոֆեսոր: Շատ անգամ ուսուցիչներ և ուսանողներ կը տեսնելին զինքը, վոր աչքին կապույտ տոնուցած՝ մադերու գանդուրները սանտրած ջրով, վոր արևոտն տակ կը փայլելին, ընդունելու և մերժելու շարժումներ կը ներ, վորոնցմեն միայն յերբեմն լսելի կրլային—այս... վո՞շ... պիտի՝ ըլլամ... պիտի՝ յերթամ... յես մնձ եմ... —բառերը:

Բոլորը միամտորեն կը կարծելին, վոր Բուրբոնը ճառ կպատրաստեր: Վոչ. անիկա ճառը կ'արտասաներ արդին:

Բուրբոն, ինկած ձևերու և փառասիրությանց հետևե, ժամանակ չունենալով զիտական հմտություններ ամբարելու իր այնքան պարապություն հորանջող գանդին մեջ՝ դարձավ բացականչությանց և պլաստիկ ձևերու խրավիլակ մը: Իր ճառած առեն բառերը բերնեն գուրս կխուժանավարելին «ինքնարություն» և անկարգապահ վայրագությամբ: Իր ճառերը կամաց կամաց ստացան տասներորդ և հիսուներորդ տապագրություններ: Որինակներ կը բերեր չին Թարեն, նոր Թարեն, միշտ արհամարհելով Միջին Թարը, կաթոլիկ յեկեղեցին, որինակներ կը բերեր... Ապագա Թարեն: Դժվար եր գուշակել թե Բուրբոնի մտքին մեջ ինչպես կպատկերանար Ապագա Թարը, մշակույթի, վիլխոսփայության, հասարակական իրավակարգի, զիտության և գեղարվեստի (կը ճառեր սյս ըուրի մասին) ի՞նչ ձեն եր, վոր կը ներկայանար անոր ահավոր յերկակայության առջև և արդյոք կը հասկնար «Ապագա Թար» բացատրությունը, վորովհետև իր ճառերուն մեջ իմաստուն ունկնդիրներ ապշած կը լսելին այսպիսի խոսքեր: «Ապագա հակայիշվյերկար դարերն անգամ կը վկային իմ գաղափարներուն ճշդությունը»: Բուրբոնի յերկակայությունը այսքան եր թոշած առաջ, վոր կը գտնվեր ապագա դարերու ներկայության և անոնք իրքեւ սահմանական յեղանակ, ներկա ժամանակ... կը վկային:

Մեր դաքեն հեռու այս ճառերը իրենց վերջավորության մեջ հիասթափության չեցին արժանանար, վորովհետև անոնք դարձարված կը լլային զգայացունց աղաղակներով, կիկերոնյան դասականությամբ և անսահման վոգեորությամբ:

Վեհ վար կը նախար հաղթել Բուրբոնին polemic-ի մեջ, վորովհետև անիկա իր ոլատասխաններուն մեջ տեսակետի հետեղականություն չեր հետապնդեր, տրամարանության գրոշ չեր տար, այլ մեկը մյուսին յետեւ կը շարեր անտևներ և թվականներ, նախ քան զի՞րիստոսը չեր տարբերեր Քրիստոսեւ յետքը կատարված իրողություններեն, իր համար ամեն ինչ մեկ եր, միայն թե արտասահմությունը ըլլար բարձրակոչ, հռետորա-ասպետական և ամբոխավարային: Յեթե ամենքն ալ համաձայնեյին, վոր Բուրբոնի նաորին մեջ տրամարանություն չիկար և պատմական փաստերը խեղաթյուրված եյին, բայց ամենքն ալ կիսուտովանեյին, վոր նաոր ինքնին... պերճախոսական եր, Բուրբոն կը ճգներ աջողիլ իր բռն նպատակին մեջ—հռետորություն:

Նեխած եր Յեփրատ կոլեջի մթնոլորտը: Կոլեջի միսիոնարական իշխանությունը ամեն ժամ քրիստոնեյական աղոթքներով և Ս. Հոգու և Վորդի Մարդո առասպելներով կ'ուռեցներ ուսանողությունը: Բուրբոն ներքին մեծ կոիվներով եր զրադակած, իր յերեակայության սուրերն ու նիգակները պատերազմ եյին հայտարարած քրիստոնեյական վարդապետությանց զեմ—«Սուրը բաշողը սուրով պիտի հատուցվի: Մնկ յերեսիլ վոր զարնեն՝ մյուսը դարձուր»:

Սուրը... Բուրբոնի յերեակայությանը մեջ միշտ փայլակնաձև և պատյանեն դուրս, աղիողորմ և անավոր:

Անիկա յեկավ վերջնական յեզրակացության, վոր կարելի եր գոկտոր կամ պըռոֆեսոր գառնալ և սուր ունենալ:

—Տիտղոս, անպայման պետք ե կրեմ, կը մտածեր ինքնիրեն: Իր սենյակին մեջ նստած՝ մատիտը կ'առներ ձեռքը և սպիտակ թուղթի վրա կդրեր—Դոկտ. Բուրբոն, Պրոֆ. Բուրբոն—գանազան ծաղկազրերով կզարդարեր այս ստորագրությունները, կը ճգներ հարմարցնել իր ստորագրությունը մեծ մարդոց ստորագրու-

թյանց և միշտ անընթեռնելի (այդպես եյին մեծ մարդոց ստորագրությունները):

Իր դասընկերները զբաղած եյին իրենց առողյա դասերով և աղջիկներու հետ զարգասելով՝ 17-18 տարիքին ասիկա անխռուսափելի յե կավով շինված մարդոց համար Բայց Բուրբոնի հոգին ըռնված եր այլ կրակով և աղջիկներու հրապույրը կ'արժանանար իր խորագույն արհամարհանքին, սակայն հրճվանքով լած եր, վոր կողեջի հարկաբաժնի շատ աղջիկներ սիրահարված եյին իր վրա: Այս բանը Բուրբոնի չե՛ր պատմված, բայց լսած եր Բուրբոն իմացականության փոխարեն ոժտված եր յերեվակայությամբ, ևսած եր անիկա, վոր Սիրանուշ անունով ուսանողուհի մը սիրահարված եր իր վրա: Այսպես եր յերեակայած:

— Յես չեմ կրնար սիրել Սիրանուշը կամ վորես ուրիշ գեղեցկուհի, տրամարանեց Բուրբոնը, մեծ մարդիկ կիները շեն սիրեր, ինչպես Սոկրատ, Պլատոն և... Ժան դ'Արկ: Յես չեմ կրնար իմ յերիտասարդությունս... զոհել աղջկան մը համար:

Կամաց կամաց անոր յերեակայությունը «թանձրացագ» և վորոշեց նամակ մը զրել որիորդ Սիրանուշի, պարզերով սիրո մասին իր ունեցած տեսակետները:

Սիրանուշ կողեջին աղջկանց հարկաբաժնի մեջ ամենեն գեղեցիկ աղջիկն եր:

Ահա այն նամակը, վոր Բուրբոն ուղարկեց Սիրանուշի, առանց մտածելու անոր հետեւանքներու մասին:

Որիորդ Սիրանուշ,

Սեծափարթամ զեղեցկուհի,

Ստացա Զեր նամակը, վորով սեր կը հայտնեյիք իմ հանդեպ: Կընդունիմ վոր յե՛ս ալ զեղեցիկ եմ յել Զեզի հարմար, բայց դժբախտաբար չպիտի կրնայի Զեր բոցավառ սիրույն դրականորեն պատասխանել: Եթ՛ս, վորոշ պատճառներով, ստիպված եմ վոտքի տակ տալ ընտթյան ամնադթելի յել ամենահզոր հզորությունը յեզ մերժել Զեր ակեր-

սանքները: Իմ մեջ յեռացող ազնվական արյունը չի կրնար զո՞ւ ըլլալ փոքր նպատակներու, վորովհետեւ յե՞ս կոշկած եմ կյանքի մեջ մեծ գործեր տանելու:

Անոնք վշտակրությամբ

ԲՈՒՀԻՌԲՄՆ

Այս նամակը ստանալուն Սիրանուշի գլուխը սկսավ պտույտ դալ, շփոթվեցավ, ձեռքերը դարկավ ճակատին և չկրցավ յեզրակացության մը զալ: Առաջին անգամ կարծեց զոհ ըլլալ թյուրիմացության մը, բայց ծրարին վրա կարդաց իր անունն ու ազգանունը, հետո մեջտեղն եր այն իրողությունը, վոր նամակը տըրված եր իր քըոջը, թյուրիմացություն չկար: Բավական մտածելե հետո՝ վորոշեց նամակը տանիլ և հանձնել Միս Տենեսին:

Միս Տենես կոլեջի աղջկանց բաժնի պառավ տեսչուհին եր և սարսափելի տեսակեն տղամարդատյաց մը, ինչպես ծերացած կույսերը կըլլան:

— Բայց ձեր սիրո արտահայտության պատասխանն եւ այս նամակը, որիորդ Սիրանուշ, ըսավ առաջին առիթով Միս Տենես նամակի ընթերցումին հետո, խոժոռ, բարկացած և տեսլությամբ լեցված պառավի աչքերով:

— Եեւ վոնե նամակ չեմ գրած և վոնե սիրո մասին ալ չեմ մտածած, Միս Տենես, պատասխանեց Սիրանուշ և սկսավ դառնորեն արտասավել:

Միս Տենես պահ մը լոեց, ապա հարցումներ ըրավ թե ով քերավ, յերբ, ինչպես, ապա նայեցավ ծրարին վրա և տեսնելով, վոր նամակը ուղղված եր ճիշտ ու ճիշտ Սիրանուշին՝ սկսավ զըլուխը յերերցնել և համոզվիլ: Վոր Սիրանուշ սուտ կը խոսեր:

— Որիորդ Սիրանուշ, շարունակեց Միս Տենես, յեթե պ. Բուրբոն ձեզ շի սիրեր, ձեր հեկեկանքները ոգնության չեն կրնար համանիլ ձեզի:

Սիրանուշ ընդուած իր աշքերը սրբեց և փութաց թյուրիմացությունը պարզել:

—Միս Տենես, դուք ինձ չհասկցաք, կը կրկնեմ, վոր յես վոնեք մեզին նամակ գրած չեմ, այդ նամակը բերած եմ ձեզ, վորպեսզի դուք դատեք և պատժեք այն տղան, վոր այդպիսի անիրական նամակ մը գրած ե.

Միս Տենես բոլորովին մատնված եք շփոթության, վորովհետեւ չեր կարող ըմբռնել, վոր աշխարհի մեջ, և ան ալ իրենց վարժարանի սահմանին մեջ, գոյություն ուներ մի մարդ, վոր կապըեր յերևակայությամբ։ Անիկա յերկար լուսութենե հետո՝ ըսավ.

—Դուք դացեք, յես ինպիրը կը հասկնամ։

Հաջորդ օրն իսկ Միս Տենես մարդ ուղարկեց Բուրբոնի յետեն հրավիրելու զայն իր զբասենյակը շշատ կարևոր և անհրաժեշտ գործի մը համար։ Բուրբոն յերբեք մտքեն չանցուց, վոր Սիրանուշի նամակին առթիվ կարող եր կանչված ըլլալ, Անիկա աղջկանց հարկաբաժինը մտնելու ատեն մասնավոր հոգածությամբ գլուխը վեր բռնեց, նայվածքը շեշտակի, արհամարհելով իրեն ուղղված բոլոր բարի կամ չար նայվածքները։ Միս Տենեսի զբասենյակը մտնելե, բարեկելե և նստելե հետո՝ տիրեց լուսություն։

—Պ. Բուրբոն, սկսավ ամերիկուհի պառավը, այս նամակը դժւք եք գրած որիորդ Տիգրանյանին, ցուցնելով Բուրբոնի զըրած նամակը։

—Այն, պատասխանեց Բուրբոն առանց տառամսելու։

—Ինչու դրած եք այս տեսակ նամակ որիորդի մը, վոր ձեզի վոչ մի արտահայտություն չե ըրած սիրո մասին, դուք մինչեւ անգամ ծանոթ չեք այս որիորդին։

—Յես պատասխանած եմ իր նամակին, որիորդ Տենես, հարեց Բուրբոն առանց վոնե մտահոգության։

Որիորդ Տենես շփոթեցավ և սկսավ ջղային զրգութեր ունենալ, վորովհետեւ հաստատ համոզված եր, վոր Սիրանուշ կը ստեր պարզապես։

—Դացեք, պ. Բուրբոն, պատասխանեց տարորինակ շեշտով մը Որ. Տենես ինքզինքը զտնելե հետո։

Բուրբոն յելավ սենյակեն դուրս, միշտ քիթը դեպի յերկինք և քալեց փողոց։

Բուրբոնի յերեակայության մեջ թանձրացյալ կերպով գոյություն ուներ այդ սերը։ Անիկա ընդունած եր այդ սերը, սերժած, տառապած, զիշերներ անքուն անցուցած։ Վատ նպաստակ մը չուներ Բուրբոն։ Յերեակայած եր, ուրեմն իրական եր։

Յերեակայությունը Բուրբոնի ներքին բովանդակությունն եր։ Համաձայն Դեկարտի գիլիսոփայական հայտարարության թե՝ «Քանի վոր կը խորհիմ» գոյություն ունիմ»։ Բուրբոն պիտի հայտարարեր. «Քանի վոր կ'երեւլակայեմ»։ կը գործեմ»։

Յերեակայությունը իր աներեակայելի վոլորտին մեջ, ահա Բուրբոնի ապրումներուն ամենեն իրական պատկերը, Անիկա քաղաքի փողոցներուն մեջ քալած ժամանակ կ'նրեվակայեր, վոր ունկնդիրներու ամբոխ մը կսպասեր իր ճառախոսության, կը լսեր վորոտընդուած ծափեր, պատուհաններեն ծաղիկներ կը թափեյին իր վրա և ինք վոգեռված և տեղի տալով ամբոխի պահանջին՝ կը կենար փողոցի մեջտեղը, հպարտությամբ շալը կը դիտեր, ծնոտը կ'ուղղեր յերկնքին, լուռ ճառախոսություն մը կ'ըներ հոետորական շարժումներով և ապա կը շարունակեր իր ճանապարհ։ Զինք տեսնողները ամեն տեղ և միշտ կըսեյին, «Ճառ կը պատրաստեալայց միամիտները չեյին գիտեր վոր Բուրբոն ճառ չեր պատրաստեր, այլ ճառ կ'արտասաներ իրենց—զինք տեսնողներուն։

Մեկ քանի որ հետո որ. Տենես խնդրեց պ. Բուրբոնին Սիրանուշի գրած նամակը բերել, բայց Բուրբոն շատ փնտռեց իր թուղթերուն մեջ, զբքերու և թերթերու մեջտեղերը և հակառակ իր անկեղծ... ցանկության Սիրանուշի «Նամակը» շկրցավ գտնել և հայտնեց, վոր կորսնցուցած եւ կոլեջի քրիստոնյա տեսչությունը վրանեց Սիրանուշը վարժարանեն «անբարոյական արարքի մեջ գտնված ըլլալուն» համար։

Ավարտական տարին Բուրբոն ընդհարումներ ունեցավ ուսուցիչներու հետ «Քրիստոսի աստվածության և մարդեղության» շուրջը։ Հայտնի չեր թե այդ ուղղությամբ Բնչ զիրք եր կարդա-

ցած, պատահմամբ անիկա հարց բարձրացուց Քրիստոսի եյության մասին։ Բուրբոնի մատանովությունը Քրիստոսի ինչ ըլլալը չեր, անոր միակ նոպատակն եր... ճառ արտասահնելու։

Քրիստոս մարդ թե Աստված, միևնույնն եր անոր համար։

Բուրբոնի կողմենն Քրիստոսի աստվածության շուրջ կասկածելը՝ պատճառ դարձավ զոր զայն արգիլեն վարժարանի շրջափակին մեջ ճառ խոսելու։

Յեփրատ Կոլեջը զրեթե միջնադարյան համալսարան մընեք։ Գիտության և արվեստի ոլորֆեսորներ կիրակի որերը իրենց շուրջը կը հավաքեյին կանայք բողոքական ժողովարանին մեջ և գասախոսություն կը կարդային «Քրիստոսի անքննելիության» մասին, և «Սուրբ հոգի» կը բաժնեյին։

Բուրբոն ըմբոստացավ այս փիլիսոփայությունների գեմ, ժողովարանի մեջ մարդիկ ազատ եյին զանազան կարծիքներ հայտնելու։ Կիրակի որ մը Բուրբոն ձայն ուզեց խոսելու Անիկա փաստեր շուներ, Միայն կը ճառեր, Մեջրերումներ կըներ այնպիսի զրեերե և այնպիսի խնդիրներու շուրջը, վորոնք յերբեք կազ շունեյին շոշափված հարցի հետ։ Պրոֆեսորները մեծ բողոք սարքեցին Կոլեջի Ամերիկյան տեսչության մոտ Բուրբոնի դեմ, վորոգնետն վստահ եյին, վոր հասարակությունը կրնար համոզվի Բուրբոնի ըսածներուն այնքան անքննադատառեն, վորքան իրենց կեղծ քարոզներուն։ Քիչ մասց Ամերիկյան տեսչությունը վորնատեր Բուրբոնը վարժարանեն, յեթե քաղաքի ազգեցիկ մարզոց միջամտությունը չըլլար, բայց Բուրբոնի վիճակվեցավ տոկալ ահավոր զրկանքի մը՝ արգիլեցին Բուրբոնը շրջանավարտից ճառ արտասահնելը։

Յեփրատ Կոլեջի սիրելի ազանգություններեն մեկն եր վկայական առնողներուն ճառ արտասահնել տալ շորս հինգ լեզուներով։ Բուրբոն զրկվեցավ այս շնորհքեն։ Պետք ե ուժ տալ յերեսկայության կարենալ ըմբանելու համար այս անարկու զրկանքը, վոր յեղավ Բուրբոնին, վորուն համար անիկա պատրաստված եր մեկ քանի տարիներե իվեր։ Բուրբոնի մտադրությունը յեղած եր յե-

ըսեան գալ հուտորտկան գերազույն թափով, խոսիլ դանագան լեռուներով:

Բայց դժբախտաբար ուսանողի մը թույլ կը տրվեր միայն ճառախոսել մեկ լեզվով:

Բուրբոնին խորհուրդ տրվեցավ զիմել կոլեջի նախագահության ներողության արժանանալու համար, և այս հերետիկոսության կը ներվեր, բայց անիկա յերբեք չի ցանկացավ զիշանիլ:

Արդյոք Բուրբոն մոռացավ և հաշտվեցավ այդ զրկանքին հետո կը մոտենար շրջանավարտից հանդիսի որը, Սաղիկներով և դալարյա ճյուղերով կամարներ շինելու կը պատրաստվելին: Իզական հարկարաժնի որիորդներ ծաղկեփունջերու և ծաղկեպսակներու նորագույն տեսակներ կը մտածեյին հնարել, նվիրելու համար զիայական ստացողներուն:

Փառքի համար ալեկոծվող Բուրբոնի հոգու մեջ ահեղ փոթորիկներ կառաջանային, բայց վոչ վոք չեր տեսներ այս թեև Բուրբոնի հոգու բոլոր արարվածները պարզ եյին բոլորի առաջ, բայց անիկա այս անգամ ծածկեց իր բոլոր հուղումները, այս անգամ անիկա լուսություն պահեց, ատելություն և խորամանկություն չի մատնող լուսություն մը:

Մինչև այդ թվականը գավառը անտեղյակ եր ազգային ամբոխավարության: Բուրբոն առաջինն եր, վոր հիմք պիտի գներ ամբոխավարության յուրահատուկ ձերին, վոր վերջը արդեն դարձավ ընդհանուր ձև: Բուրբոն ամբոխավարության փորձեր ըրած եր—զրքերու մեջ՝ կարգացած դանագան հակադիր վարկածներ իրարուխանելով, պատմական թվականներ մեկը մյուսի յետեն շարելով առանց կապակցության,—բայց զործնական ամբոխավարության փորձին չեր մղված:

— Յեզիպտական փարավոն Ռամսեսն մինչև Բիդմարք և Նապուհոն Բոնապարտ և Շեյկորիք, կ'աղաղակեր նա իր ճառերուն մեջ առանց մտահոգվելու այդ անձնավորություններու տարրերության և անոնց ժամանակագրության:

Որինակի համար կըսեր. «Սուրբ Ոգոստինոսը և Սավոնառուան, Ծիլիս և Միրապո, Շեյկորիր և Տոլստոյ»:

Այս կարգի ամբոխավարությունը չի կրցավ գոհացնել մեր Բուրրոնի հոգին և դիմեց ազգային ամբոխավարության:

Անիկա հավաքեց շմշկածազցի հայրենակից ուսանողներեն մեկ քանին իր սենյակին մեջ և անոնց խօսեցավ իր Խորունկ հառաերեն մեկը: Թեև Բուրրոնի սենյակին մեջ գտնվող ուսանողները թվով 4 հոգի եյին, բայց Բուրրոն հանդիսավոր կերպով վտարի կանցնեցավ, սեղանին տեղը փոխեց և բարձրաձայն արտասանեց հետեւյալ ճառը.

Հայրենակիցներ և ընկերներ, սկսավ անիկա, յես շմշկածազցի յեմ և ատար համար ե, վոր բոլորը ինձ կը նախանձին: Դուք զիտեք թե ինչպես յես կարողացած եմ պապանձեցնել բուլոր իրրե... շմշկածազցի, դուք զիտեք թե յես փառքն ու պարծանքը յեղած եմ մեր հայրենի զավարին, թերեւս դուք չեք զիտեք, վոր միայն իմ, Բուրրոնիս, մզած ջանքերով դուք չվանտվեցաք վարժարանեն (բոլորը իրարու յերես սկսան նայիլ, տեղեկություն շանենալով մի այլպիսի հարցի): դուք զիտեք թե ինչպես յես, Բուրրոնս, հակածառած եմ բոլորին և հաղթած անոնց, ճակատներուն տալով արդարության թուքն ու մուրը, դուք զիտեք թե յես ինչպես պաշտպանեցի յերկու ամիս առաջ խաչյալ... Քրիստոսը, դուք չեք զիտեք թե ինչ ստորին զրպարտություններ յեղան մեր հայրենակից ուսանողներու հասցեյին, բայց յես պաշտպանեցի, յեթե յես չըլլայի, յես, յես, յես չըլլայի հիմա դուք փողոցները կը թափառեյիք: Այս բոլոր առնելի ճակատամարաններու համար կուեցի Փակուլտետն ինձ կը զրկե կիրակի որպան շրջանավարտից հանդեսի ճառախոսության փառքեն: Այս բոլոր զրկանքը ձեր յերեսեն: Ահա կը զիմեմ ձեզ առաջանալ ինձ, կը հրամայեմ ձեզ պաշտպանել ինձ:

Ուսանողները իրարու յերես նայեցան: Բոլորն ու համոզված կը թվեյն Բուրրոնի փաստերով: Մեր մոլորակի մարդոց շատ բնտրյալ թիվ մը կարող է դիմանալ ուժեղ առաջամարտ ինձ, կը հրամայեմ ձեզ պաշտպանել ինձ:

թյան։ Անոնք արդեն համոզված ելին, վոր իրենք պետք եր վարնապամած ըլլային, յեթե Բուրբոն և անոելի ճակատամարտները չի մղեր հոգուոտ իրենց։ Հայրենասիրական զգացումը և կոավ յեռալ իրենց արյունին մեջ։

—Պ. Բուրբոն, հարեց անոնցմեր մեկը, մենք կը պաշտպանենք քեզ, յեթե ցույց տաս մեզ այն կերպը վորով կարող կը լանք ոգտակար ըլլալ։

—Ի՞արկե, իհարկե, ավելացուցին մյուսները գըեթե միաբերան։

Բուրբոն հրահանգեց անոնց, վոր ամեն մեկը հանձն առնե զանել տասնական հայրենակիցներ և քերել հանդեսի սրանը և պատվիրել անոնց, վոր մյուսներու ճառերը ավարտելե հետո՝ բոլորը միասին սկսին պոռակ և աղմկել։ «Բուրբոնը թող խոսի, մենք Բուրբոնը կուղենք լսել», խոկ մեացածը թողուլ իրեն—Բուրբոնին։

Ուստանողները խոստացան և հրաժեշտ առին խոկույն և եթ գործի սկսելու։

Բուրբոնի ճառ անտասանող ընկերները ներքին կեղտուու զոհունակությամբ կը դիտեյին Բուրբոնը, վօրուն զրկված եր հանդեսի շնորհը, բայց անիկա ծանը արհամարհանքի նայվածքով կը պատասխաներ անոնց զոռողություններին։

Հասավ հանդեսի մեծ որը։ Բուրբոնի հայրենակիցներեն հավաքված ելին յերկու հարյուրե ավելի բազմություն, բացի Բուրբոնի անձնական վաշ-հայրենակից համակիրներեն։ Անոնք իրենց հետ բերած ելին տասնե ավելի ծաղկեփունջեր։ Բուրբոն իր բաղդավոր դասընկերներու հետ միասին յեկավ և բազմեցավ բեմին վրա։ Ամեն անոնք, վորոնք լուր չունեյին, վոր Բուրբոն զրկված եր ճառ խոսելու իրավունքեն, կարծեցին, վոր Բուրբոն առաջին ճառախոսողը պիտի ըլլար, վորովհետեւ հաճախ կոկորդը կը մաքրեր բարձր աղմուկով։ Ֆակուլտետն աղշեցավ, վոր Բուրբոնի վրա վոչ մի աղղեցություն չեր գործած այդ զրկանքը։ անոնք համոզված ելին, վոր Բուրբոնը ներկա չեր ըլլար և մինչեւ անդամ վորոշած ելին հանդեսեն հետո իր վկայականը մեկի մը միջոցավ

ուղարկել, Այդ թվականին դավառի մեջ վոչ վոք ամբոխավարության մասին ծանոթություն չուներ:

Կեցցեներու մեջ բեմ հրավիրվեցան վկայական առնող պարոնները, թվով 7 հոգի, զորոնք արտասանեցին իրենց ճառերը մեջ ընդ մեջ թրբերեն, ֆրանսերեն, անգլերեն և հայերեն լեզուներով: Յերբ յոթ ճառախոսներն ալ վերջացուցին իրենց ճառերը և իրենց բարեկամներեն կանխորոշված ծաղկելունջերը ստացան՝ Բուրբոն անավոր անհանգստության մեջ եր, սպասելով... ցույցին: Յերբ կոլեջի նախագահը կը պատրաստվեր վկայականները բաժնելու՝ կոպիտ մարդու մը ձայնը լսելի յեղավ, վոր կը պոռար.

—Պ. Բուրբոնը պետք ե խոսի, մենք Բուրբոնին ճառը կուղենք:

Այդ կոպիտ ձայնին հետեւցան հարյուրեւ ավելի ձայներ: Տիրեց ընդհանուր շփոթ, իրարանցում, աղմուկ, շարժումներ, կանչվրուառք: Կոլեջի ֆակուլտեն, վոր բեմի մոտը տեղ եր բռնած՝ մատնվեցավ ապշության, բայց հանկարծ հասարակությունը լոեց, վորովհետեւ Բուրբոն արգեն ցատկած եր բեմը և կը... ճառեր:

—Հանդիսականներ, կ'աղաղակեր անիկա, այսպես ե տիեզերական պատմությունը, արդարությունը, զիտությունը, միշտ զիտություն Արարշին հետ և Արարիչն ալ մարդուն հետ միշտ հաշտ, ուրեմն կեցցե զեղարվեստը և զեղարվեստի հանճարեղ ներկայացուցիչներ Դարվին և Լուգեր (ծափեր): Յեզ որ մընալ Աստված խոսեցավ և ըստավ մարդուն. «Խուն պիտի ըլլաս Աստված, յեթե ինձի շափ խելք ունենաս», հետեւաբար պետք ե խելք ունենալ, խելք, միտք, ուղեղ և իմացականություն, ով այս բռլորեն չունի՝ չի կրնար Աստված ըլլալ:

Բուրբոն ճառախոսած ժամանակ վեր վեր կը ցատկեր, բազուկները բացած, կը նայեր առաստաղին, մազերը թափած իր ճակատին վրա, յերբեմն մեջբերումներ կ'ըներ Դուրյանի բանաստեղծություններեն.

«Փշը խոկն հսկա, Աստված վոխերիմ»:

Բուրբոն թերևս այսպիսի ճառ արտասանելու վորոշում տված չեր մինչև անգամ... ապագային: Դուրյանեն կը ցատկեր Թայրընին

«Roll, thou ocean, roll», կ'արտասաներ ֆրանսերեն, անգլերեն և հայերեն լեզուներով։ Իր ըսածներուն շեշտ և ուժգնություն տալու համար կը հայտարարեր. «Այսպես կը մտածե նուև ֆրանսացի նշանավոր փիլիսոփիա մը»։ Բուրբոնի համար գրականության, գեղարվեստի, գիտության և փիլիսոփայության մեջ տարբերություն չիկար, անոր համար ամեն ինչ փիլիսոփայություն եր, բոլոր մեծ մարդիկ փիլիսոփիա եյին, վորեն պատմական անուն, վորուն հանդիպեր գրքի մը անկյունը՝ անիկա Բուրբոնի համար անպայման փիլիսոփիա յեր, Ավելորդ ե ըսել, վոր Բուրբոնի ճառին զիխավոր պահասածը նյութն եր—ինչպես ոկսավ, ինչպես ընթացք տվավ իր ըսելիքներուն և մեր վերջացուց և ինչու վերջացուց։

Յերբ Բուրբոն հոգնած և քրտնած լրացուց իր խոսքերը՝ ծաղկեփունջերու տարափ մը ոկսավ զինք վողողել, իր հայրենակիցները շափազանց գոհ մնացեր եյին այդ ճառեն։ Ֆակուլտեյի այն անդամները, վորոնք ամերիկացի եյին և լավ չեյին տիրապետեր հայերեն լեզվին՝ հիացեր եյին այդ ճառին վրա։

Բուրբոն վկայականը և տիտղոսը առավ և դուրս յելավ կոլիջի շրջափակեն անգամ մընալ շվերադառնալու յերդումով։

Բուրբոն այդ որ մեծ ճաշկերույթ սարքեց իր հայրենակիցներուն համար, վորոնցմե ներկա եյին 30-ե ավելի, անոնց ներկայության շարունակեց իր հաղթական ճառախոսությունները անվերջանալի վոգեսրությամբ։

Յերբ անիկա վերջացուց իր ճաշկերույթները՝ մտածեց իր տիտղոսի մասին։ Բուրբոն արդեն յերկար մտածելե յետք՝ հասած եր յեզրակացության—պիտի կոչվեր դոկտոր և դոկտոր կոչվելու համար պետք եր անպայման մեկնիլ Բեյրուտ—բժշկական վարժարան։

Յեփրատ կոլեջի իր վկայականը առնելե հետո՝ անիկա նամակ գրեց իր հորը և մորը և հայտնեց իր մտագրությունը։ Բուրբոն նամակին տակ ստորագրեց «Ձեր վորդին Տ. Բուրբոնյան. A. B.» Ամբողջ տունը հավաքվեցավ այդ լատինական տառերու իմաստը հեղեղու, բայց բան մը դուրս չեկավ։ Բուրբոնի հայրը կանչեց ա-

վանի քահանան և անոր հմտության հանձնեց լատինական գրերը, բայց քահանային ալ անդժմանալի թվեցավ, մեկու մը, վոր կրնար լուծել քրիստոնեյական խորհուրդները և մեկնաբանել ավետարանական առասպելները, մինչև անդամ... անապական հղությունը:

Վերջը վերջը Բուրբոնի վոչ պակաս խելացի հայրն եր, վոր գտավ այդ լատինական տառերու իմաստը:

— Քրիստոսի խաչին վրա զրված Հ. Ն. Թ. Հ.-ի պես բան մընե, ըստավ անիկա:

Բուրբոն իր նամակին մեջ գրած եր, վոր չեր կրնար այցելել իր հայրենի գյուղը, վորովհետեւ անմիջապես պիտի մեկներ դեպի Բեյրուտ: Ծնողները շատ խնդրեցին իրենց պատասխանին մեջ գալ և զիրենք տեսնել և ապա մեկնիլ, բայց Բուրբոն չլսեց:

Բուրբոն մեկնեցավ Բեյրուտ, ճանապարհին հանգիպելով Տիգրանակերտ, Աւրֆա, Այնթապ, Հալեր, արտասանելով ամեն մեկ քաղաքի մեջ վոգեռորիչ ճռեր, թողլով խոր տպագորություն:

Բեյրուտ հասնելուն՝ Բուրբոն զարմացավ. անիկա կը սպասեր տեսնել գավառական քաղաք մը, ուր կարենար աշքի իյնալ: Բեյրուտ իր տեսած բոլոր քաղաքներեն ավելի աղմկոտ և բազմամարդ եր, անոր պակսեցան այնտեղ ճառի ամենորյա առիթներ: Բուրբոն իր ստացած Ա. Բ. տիտղոսով, առանց քննության ընդունվեցավ Բեյրուտի ամերիկյան բժշկական համալսարանը իրեւներքին հիվանդություններու ուսունող: Իր դասընկերներն ալ դրսեն յեկած եյին և անծանոթ եյին քաղաքին: Որ մը այցելեց իր դասընկերներեն մեկուն սենյակը և տեսավ որիորդի մը լուսանկարը անոր սեղանին վրա:

— Ի՞նչ լուսանկար ե այս, հարց տվավ իր դասընկերին:

— Իմ սիրուհիս ե, պատասխանեց դասընկերը:

Բուրբոն այս պատասխանին վրա հիշեց Սիրանուշը, վորուն իդուր մերժած եր իր սերը: Իր յերիտասարդի արյունը սկսավ յեռալ և սկսավ կարոտիլ... սիրու:

Անոր համար պուրակները լեցուն եյին սիրով, թափուտներու ճիշերը կը դողդողացնեյին անոր սիրալ: Մեկ քանի անդամ փոր-

ձեց յերթալ ծովի ափը և հռետորություն ընել, բայց ծափահարություններ չլսեց: Միայն արժանացավ ալիքներու արհամարհնքին:

Սիրել կը ցանկար...

Բուրբոն յերկարորեն Սիրանուշինամակը վնասուց Խարբերդեն բերած իր նամակներուն մեջ, գժրախտաբար չգտավ:

Որ մը, յերբ իր սենյակին լուսամուտի առջև նստած եր, սուրբացի աղջիկ մը յերեցավ զիմացի պատուհանին մեջ: Բուրբոն խոռվեցավ, հուզվեցավ, կարմրեցավ, տժունեցավ, սենյակին մեջ զնաց և յեկագ և զգաց, վոր... կը սիրել:

Գիշերը հայելիին դեմ կանգնած՝ վեր տռավ թևերը, ողը սեղմեց իր կրծքին, սիրո յերգումի յերկար ճառ մը արտասանեց:

Այս ճառեն հետո անիկա արդեն բուռն կերպով սիրահարած եր, կը սիրեր մեկը, վոր զեղեցիկ եր Բիատրիչի պես, վոր զինք կառաջնորդեր լուսեղեն վոլորաներ, ուր կունկնղբեր յերկնային նվազներու:

Բայց Բնչ եր սուրբիացի գեղեցիկ աղջկան անունը — չեր գիտեր: Ցեթե հարցներ, այդ կըլլար իրական, բայց Բուրբոն պետք եր յերեկայեր, վորպեսզի իրական դառնար:

Հանիֆե՛ ... այսպես յերեակայեց սուրբիացի աղջկան անունը:

Բուրբոն պատրաստ եր զոհվելու Հանիֆեյի համար:

Մեկ բանի որ հետո յերեակայեց, վոր իր սիրուհին կակնկալեր իրմե սիրո համար ծովը նետվիլ: Դնաց ծովեղերք, վորոշեց անմիջապես ինքնինք հանձնել ծովի անգութ ալիքներուն, բայց վերջին բոսեյին մտածեց, վոր զեթ վերջին անգամ պետք եր տեսնել Հանիֆեն և ապա... մեռնիլ:

— Վոչ, վոչ, պետք ե վերջին անգամ տեսնել, աղաղակեց ինքնիրեն և վերադարձավ ծովեղեն դեպի սենյակը:

— Հավիտյան, հավիտյան հավատարիմ կը մնամ քեզ, կը փոխմեմ ծովերու և գետերու ընթացքը, յեթե այդպես կամենաս, ով Հանիֆե, կը մոլուար ինքնիրեն կես զիշերեն հետո:

Որ մը, յերբ իր առանձնասենյակին պարտեզի կողմի լուսամուտը նստած վերջալույսը կը դիտեր՝ սկսավ թևի հանդիսավոր

շարժումներ ընել, կարծես մեկու մը հետ խռակցության մեջ եր: Յերբ բավական մթնեց և լուսինն ալ կորսվեցավ ամպին յետե՝ ճրագ զառեց և իր այդ որվան որագրության մեջ արձանագրեց հետեւյլը.

Հինգշաբթի. 3 մայիս, 1907

«Այսոր Հանիֆեյի հետ եյի մեծ խնճոյքի մը մեջ: Անիկա իմ կողքին նատած՝ սիրազին կը հնվար յեվ կը յերգեր: Ենս կատաղի կերպով կը սիրեյի զինքը յեվ մեղմով կը շոյեյի իր վարսերը: Բոլորը կը նախանձեյին ինձ: Ենս բաժակ՝ առաջարկեցի իմ Հանիֆեյի կենացը յեվ իր շրթունքներուն մնչեն խմնցի յերկնային նեկտարը: Յերբ յես խռացա, բոլորը կը ծափանարեյին: Ենս նոզմած՝ եյի, իսկ Հանիֆեն յերշանկութենեն խնլանեղ կարտապեր, լեցնելով իր ծեռցին բռնած վակյա բաժակը» մվ Հանիֆեն, յերկնային թնվավոր հրեշտակ, դուն իմս ես հավիայան յեվ յե՞ս, յե՞ս քուրդ եմ համբաւած...»

Բուրգոն վերեի որագրած դեպքը միայն յերեակայեց...

## 2

1908-ի գարնան, Բեյրուտ ժամանող Փրանսական շողենավեն դուրս կելեր միջահասակ, նիհար, ոև և իմաստուն աչքերով, արտաքինով շափազանց խեղճ, 40-ի մոտ մարդ մը: Մոտիկեն զըն: Նող աչք միսկ չեր կարող դուշակել այս մարդու ներքինը և իր առաքելության նպատակը: Անիկա իր ձեռքին կը կը եր պայուսակ մը, զորուն մեջ իր ձերմակեղեններեն և անցազըն բացի վոչինչ չկար: Այս մարդը շոգենավեն դուրս գալուն պես, իր քայլերը ուղղեց դեպի քաղաքամեջը, վարձեց անշուք հյուրանոցի մը փոքրիկ սենյակը և ըլլալով հոգնած, պառկեցավ ու քնացավ:

Հաջորդ առավոտ իր առաջին դործը յեղավ հասկնալ Բեյրուտի մեջ հաստատված Փրանսական և ամերիկյան բժշկական վարժարաններու հասցեները և ուղղվեցավ դեպի ամերիկյանը:

Այս մարդը, վոր կը կոչվեր Սարգիս Սավարյան, հայ մըներ, ուղարկված Շվեյցարիայի ժընս քաղաքի մեջ հրատարակվող «Դը-

բոշակ՝ թերթի խմբագրության կողմեն Բեյրուտի հայ ուսանողության մեջ հեղափոխական սերմեր ցանելու համար։ «Դրոշակ» թերթը պաշտոնական որդանն եր հայ Հեղափոխական Դաշնակցության, վորուն զործունեցությունը կը տարածվեր Կովկասի և տաճկական Հայաստանի հյուսիսային դաշտաներու մեջ։ Սարգիս Սավարյան կուղար իր կուսակցության համար նոր դաշտեր գտնելու։ Այս մարդը նվիրված եր այդ կուսակցության հոգեին, լինելով կուսակցության հիմադիրներն մեկը։

Սավարյան քիչ խոսող մարդ եր, իր խոսելակերպը՝ համակրելի և գրավիչ։

Այդ առավոտն իսկ անիկա ծանոթացավ հայ ուսանողի մը, վոր իր կարդին զինքը ծանոթացուց մեկ քանի ուրիշ ուսանողներու։ Սավարյանը յերբեք չտառամսեցավ իր առաքելության նպատակը բացորոշ զնելու այդ մեկ քանի նոր ծանոթացած ուսանողներու առջե, վորոնք բուռն խանդավառությամբ ընդունեցին դայն։ Սավարյան առաջարկեց այդ ուսանողներուն իր նպատակը պարզել ընկերներու և առաջարկեց զադանի ժողով մը սարքել, ուր պիտի խոսեր ինքը հայ, ժողովուրդը թրքական լուծեն ազտելու մասին։

Գաղտնի ժողովը տեղի ունեցավ։ Յերեք ժամ ամբողջ Սարգիս Սավարյան խոսեցավ աշխարհի բոլոր հեղափոխությանց պայմանն պատճառներու և գործելակերպի մասին։ Ամփոփ կերպով ներկայացուց իր պատկանած կուսակցության պատմությունը, իր ընկերներու հերոսական սխրագործությունները, տերրորները, պետությանց հետ ունեցած բանակցությունները, 1905 թ. Պոլսի մեծ մահափորձը, Շովասարի կոկոները, իր կուսակցության առմայշա և ազագա ծրագիրները, Ուսանողները անկեղծ խանդավառությամբ մտիկ ըրին Սարգիս Սավարյանը։

Սավարյան իր ըսելիքները լրացնելե հետո՝ խոսք տվագ նաև ունկնդիր ուսանողներու իրենց տպագործությունը հայտնելու և առհասարակ արտահայտվելու։ Ուսանողները բոլորն ալ լուռ եյին և ինկած խոր խաներու մեջ, բայց անոնցմե մեկը, վոր Սավա-

ըյանի զրույցի ամբողջ ընթացքին անհանդիսա շարժութեր կ'ըներ, վոտքի կանգնեցավ շատ հանդիսավոր կերպով և խոռելու պատրաստ՝ իր շուրջը սկսավ դիտել: Այդ ուսանողը կ'ըլլար քսան-և հինգը անցած, կարճահասակ, սրունդները անհամեմատ կարճ քան իրանը, բայց չորցած սյունի պես ուղիղ, թերը անհանդիսա շարժման մեջ, աշքերը խոչոր և բոցավառ, պեսինը զլխիվայր զարձ-ված հակա ստորակետներու նման իր քթին յերկու կողմերը տրն-կըված: Հակառակ այս նկարագրության անիկա մինչև անգամ զե-ղադեմ յերիտասարդ եր:

Հայաստանի ազատագրության մեծ ուխտավոր, սկսավ ա-նիկա, և դռւք, ուսանող պարոններ, ՅԵՇԱ... յե՛ս անհուն տենչան-քով կսպասելի այս յերջանիկ որվան տարիներեւ ի վեր: Հայաս-տանի ազատագրության իգեալը յեղած եմ յերազներուս բոցավա-սության բուն շարժառիթը ՅԵՇԱ յերջանիկ եմ այսոր և յս կուզեյի, վոր բոլորդ ալ ըլլաք յերջանիկ: Մեզ մոտ յեկած ե հայ ազգի պար-ծանքը, մեծն Սավարյանը (Բեյրուտի մեջ վո՞չ վոր լսած եր Սավար-յանի անունը յեզ Սավարյան ինքը վոչինչ խոսած եր իր մասին), մենք կերպնունք, յե՛ս կերպնում իր առջև մեալ հավատարիմ այն սրբա-զան կրակին, վոր այսոր վառեց պարոն Սավարյանը մեր հոգիներու մթության մեջ: Մենք կ'երթանք, յե՛ս կ'երթամ վրեժ լուծել, զա-վաթ զավաթ խմել առշմանի արյունը և ապա յե՞ս կը մեռնիմ:

Ավելի պիտի շարունակեր, յեթե Սարդիս Սավարյան չընդ-հատեր ճառը՝ հիշեցնելով, վոր զադանի ժողովի նստած եյին և կարելի չեր այդքան բարձրակոչ արտահայտվիլ:

Յե՞ս շնորհակալ եմ, ընկեր ստուդենտ, ձեր ցույց տված խանդավառության հանդեպ. յերբ ինձ ուղարկում եյին Ժընեվց այստեղ՝ զգում եյի հեռվից այս խանդավառությունը, յե՞ս շատ ուրախ եմ, վոր իմ և իմ ընկերների հույսերը ի դերեւ չպետք ե յելլեն, պատասխանեց Սավարյան:

Սարդիս Սավարյան կը խսեր հեղափոխորն—կովկասյան հայ բարբառով:

Սարդիս Սավարյան դարձյալ դիմեց ուսանողներու արտա-

հայտվելու համար, բայց վոչ ուզեց տեղեն շարժիլ, այս անգամ զարձյալ մինուույն անհանգիստ ուսանողը ուզեց ցատկել և խոսիլ, բայց իր ընկերները չթողուցին. Սավարյան տեսնելով այդ՝ ուզեց հանդարտեցնել և ըսավ.

—Բավական ե, ընկեր, արդեն մենք առիթը ունեցել ենք լը-սելու ձեզ և թափանցելու ձեր յեռանդին:

Այս անհանգիստ ուսանողը մեր Բուրբոնն եր: Բայց Սարգիս Սավարյանի «ընկեր» հորջորջումը յեռացած ջուրի վրա սառ ջուր լցնելու պես բան մըն եր, վորովհետեւ Բուրբոնը թեե վեց ամսոր-վան թժշկական ուսանող եր, բայց արդեն տուշը զրած նամակ-ներուն մեջ—Յես, ձեր վորդին, կամ ձեր յեղբայրը՝ դոկտոր Բուր-բոնյան—կստորապերեր:

Սարգիս Սավարյան ուսանողական կոմիտե մը ընտրեց, վոր կոչվեցավ—Զրաբաղարի Դոնակ Կոմիտե:

Յերեք որ հետո Սարգիս Սավարյան դնաց ֆրանսական հյու-պատոսարանը, անկից ժընեեն ստացված «հեղափոխական» հրա-տարակությունները առավ և բերավ հանձնեց Զրաբաղարի «Եռ-հակ» կոմիտեյին և ինքը մյուս որը մեկնեցավ դեպի կիլիկյան ափեր մինուույն վողին տարածելու համար, ուր հայ հեղափոխու-թյան նվիրված մյուս կուսակցությունները արդեն կենարոնացու-ցած եյին իրենց ուժերը:

Սարգիս Սավարյան շատ խոր տպավորություն ստացավ Զրա-բաղարի հայ ուսանողությունն, բայց Բուրբոնյանը գամմած մը-նաց իր մտքին մեջ իրեն իր կուսակցության «տիպիկ» շրջուն պը-րոպականդիսաւ:

—Ամենահարմար տիպն ե զա, կը մտածեր Սավարյան, պիտի գործածել զրան:

Սարգիս Սավարյանի առաքելությունը Բուրբոնի յերևակայու-թյան մեջ սաեղծեց նոր փոթորիկներ:

Բուրբոնը կը շարունակեր սիրել Հանիֆեն իդեալական սիրով, բայց Սավարյան ազգաբարած եր, վոր ուսանողները պետք եյին հրաժարիլ աշխարհիկ կյանքե, մեկ զի թողուզ կյանքի բովանդակ

կրակը, յերիտասարդության խոլական խաղերը և նվիրվիլ առավածային վողերությամբ հեղափոխության վիճու ճանապարհին:

— Պիտի ապրել հոգեկան աշխարհում, հայտարարած եր Սավարյան:

Համաձայն ամենատարրական տրամարանության՝ Հանիֆեյի սերը վորեն կատ չուներ աշխարհիկ կյանքի հետ և Սավարյանի «աշխարհիկ» գարձավածքը չոլիտի խանգարեր մեր Բուրբռնի ուրապդառնական սերը: Ատիկա այդպես եր համաձայն... տրամարանության, բայց Բուրբռնը չեր տրամարաներ—Բուրբռնը կերևակայեր, հետևաբար կը գործեր, անիկա կյանքի ամեննեն իրական սահմանին մեջ եր: Անիկա ուրեմն կը վայելե՞ր... աշխարհիկ սեր, կը գրկեր և կը սեղմեր իր կուրծքին Հանիֆեն, կը համբուրեր դայն, անվերջ կը համբուրեր, յերբեմն նույնիսկ մարելով և իյնաւլով գետին անոր սիրո ազգեցության տակ: Որվան բոլոր ժամանակը Բուրբռն նվիրած եր Հանիֆեյի հաճոյակատար ըլլալու ծառայության: Անոր հետ զիշերները խնճույքի մեջ կը գտնվեր, կը դինունար անոր սիրույն համար:

Կես զիշերն հետո Հանիֆեն կուզար... իր սենյակը, շոյելով և փայփայելով անոր խոնջած ճակատը: Մթնշաղին կը մեկներ պարտեզի գուռնեն իր տունը, վորպեսզի մարդիկ չի նշմարեյին, տանելով իր հետ մեր զինով, արբշիո Բուրբռնի սիրո ազապատանքներն ու պաղատանքները:

Այսպես կ'երեակայեր անիկա:

Բուրբռնը սկսավ լուրջ մտածել կնոջ և հայրենիքի մասին: Սավարյան բոցավառ ճառերով պատկերացուցած եր Գարիբալդիները, Վաշինգտոնները, Անդրանիկներն ու Սերոբները, Կոչ եր ըրած յերիտասարդ ուսանողության հողին՝ նվիրվելու հանրային դատին և դոհվելու:

Կ'սկսեր խոսիլ ինքն իր դեմ շատ անգամ, իր սենյակին մեջ կամ ծովեղբը:

ՍԵՐ թէ հայրենիք—այս եր Բուրբռնի յերեակայության առնցանքը:

Արդարեն, Սավարյանի հեղափոխականացումենք հետո Բուրբոնի մեջ տեղի ունեցած եր նոր յերեակայության հրդեհ, վորպինքը կը բարձրացներ իր համար մինչև այդ թվականը անծանոթ հորիզոններ։

Անիկա մտածեց կախաղանի մասին, բայց իրեն դաժան շլթվեցավ, վորովհետեւ Սավարյան պատմած եր զանազան դյուցադշական մահերու մասին։ Անիկա չսարսափեցավ բանտի հեռապատկերներեն, վորովհետեւ։ Սավարյան կոչ եր ըրած ասպետի վայել հոգիով տոկալ վորձանքներու, դիմադրավել հեղափոխական մահցու վառնգները։ Բայց մյուս կողմեն կը տեսներ Հանիֆեն ծունկի յեկած իր առջե, աչքերը դարձուցած արտասուրի աղբյուր, կը լսեր անոր յերգը, վոր հավիտենական հեծեծանքն եր սիրոթշառության, բայց Սավարյանի պատգամը կը հնչեր. «Մի մուռնաք, ընկերներ, վոր յերը ձեր կյանքը զոհում եք մի աղջկան համար, ձեր քույրերից հուզարավորներ գնում են անողոք յաթղանի տակ»։

Բուրբոնը պետք եր միայն մեկ վորոշում տար,— կամ մնալ Բեյրուտ և սիրել Հանիֆեն և կամ ձգել վարժարանը և յերթալ զյուղերն ու քաղաքները քարոզելու հեղափոխություն և ժողովուրդը ըմբռստացնելու բռնակալության դեմ։ Վարժարանը զյուրությամբ կրնար լքել, վորովհետեւ իր պատանեկության ամենաեւարմիը յերազը-կոչվիլ դոկտոր—իրականացած եր, բացի իր նամակներուն տակ և Դոկտոր Բուրբոնյան ստորագրելը, այցետոմուտպագրել տված եր, չորս լեզուներով միենույն հորջորջումով։

— Տիտղոսը ստանալես հետո պետք է նվիրվիմ... վորոն, դրժմար եր պատասխան տալ—Հանիֆեն և Հայաստան, — յերկուքն ալ այնքան տեսլական, այնքան շողով և քաղցրությամբ լեցուն։

Անիկա կրկնապատկեց իր ծովեղրյա պատույտները և ավելի կատաղի կերպով կը ճառախոռներ... ալիքներուն, Մերթ կը մրուտանար տիրող պետական կարգերուն դեմ, կը տեսներ, վոր հարյուրավոր մարդիկ շղթայված՝ սուխններով կը քշվեյին դեպի բանտ կը տեսներ, վոր ձորի մը մեջեն հայդուկներ զենքը ձեռքերնին,

աշչքերնին տատղերով լեցուն» դեպի լեռը կը բարձրանային, և կը պոռար վորոտընդուստ.

—Եթո ձեզի հետ կուգամ, յես լեռ կելլեմ, յես զենք կառնեմ, և յես ձեզի ոգնության կուգամ, յես՝ դոկտորս, կարհամարհեմ ամեն ինչ, և փառք, և հարստություն, և սեր, և հանգըստություն:

Տուն վերադարձին կերեակայեր, վոր Հանիֆեն արցունքներու մեջ կը խեղզվի, ոգնություն կաղերսե, կը մարի, կիյնա, կը գառանցե:

Ահա Հանիֆեն՝ մազերը թափթփած իր ուսերուն վրա՝ աշքերը դիշերի շափ մութ և աղերսազին՝ ինկած և Բուրբոնի անկողնի վրա և բազուկները պարզած՝ կը պոռա. «Ինձ ծովը նետեցեք, մարեցեք իմ հոգիի հրդեհը, բռնեցեք մազերս և քաշեցեք փողոցներուն մեջ».

Տակավին շատ յերկար պիտի տեսյին Բուրբոնի յերեակայության շարչարանքները, յեթե նոր պատգամ մը չի գար և կշխռքին մեկ կողմը դգալապես չժանրացներ:

Ամառվան արձակուրդնեն քանի մոր տռաջ Զբարադարի «Կոհակ» կոմիտեն գաղտնազիր նամակ ստացած եր ընկեր Սավարյանեն, վորուն համար ուսանողները ժողով ունեցան. Մեկ քանի հոգիներ իրարու քով յեկան և սկսան գաղտնազիրը հեղել և դասավորել կարդալու համար ժողովին առջե, վոր առեն դոկ. Բուրբոնյանը սենյակին մեջ անհանգիստ պառույտներ կըներ ծանրակշիռ լուր մը լսելու կանխահոգությամբ:

Կը դաբնեն, կը թալանեն, կը սպանեն, աղատորեն վոճիբներ կը զործ վին, յես անոնց կը սովորեցնեմ, յես կը նվիրվիմ անոնց աղատազրության, կը խօսեր ինքնիրեն Դոկտ. Բուրբոնյանը:

—Ահավասիկ, պոռաց ուսանողներեն մեկը վոր ժողովի քարտուղարն եր և սկսավ կարդալ.

—«Սիրելի ընկերներ, նոր ուխտի զինվորներ, յես զրում եմ ձեզ այս նամակը Հայաստանի «Ժայռ» բայոնից, ուր յես բաց եմ արել զործունեյության նոր ասպարեզ: Վաղի հայ տառապած ժողո-

վուրդը ձեր ոգնությանն և սպասում, դուք պիտի լինիք հեղափոխության և հայրենիքի աղը: Պիտի ստեղծել ժողովուրդին մեջ հեղափոխական տենգենցներ: Յես առաջարկում յեմ «Ղուկաս» կոմիտեյիդ արձակուրդի առաջին իսկ որից ընկեր Բուրբոնյանը ճամբար հանել դեպի Հայաստան, բոլոր զյուղերում ու քաղաքներում քարոզելու հեղափոխություն: Իր հետ միք մոռանա տալ «Խրոշակ»ի հրատարակություններից, վոր ստացել եյլիք իմ միջոցով ժընեից: Պրօպականդան պիտի լինի խիստ զաղանի ընկեր Բուրբոնյանի կողմից: Մազմում եմ ձեզ յեռանդ և ընկեր Բուրբոնյանի անսահման անձնագոհություն, համբուրելով՝ ձեր հեղափոխականի անըիծ ճակատները: Լուսկյաց»:

Նամակի ընթերցումը լրանալեն անմիջապես հետո՝ ընկեր Բուրբոնյանը ցատկեց վոտքի և կոխոտելով իր հեղափոխականի վոտքերուն տակ Հանիֆեն և կյանքի բոլոր վայելքները, սկսավ վոգեորիչ ճառ մըսել: Անիկա փրփրած և կատաղած եր:

—Կեցեք բարով, ընկեր ուսանողներ, ըսավ անիկա, յես կերթամ դեպի բանա և աքսոր, դեպի մաս ու կախաղան, դեպի փառք ու յերկինք, դեպի Հայաստանի լեռները, դուք, ով բոլոր բռնակալներ այս աշխարհին, դողացեք, սասանեցեք, գուշակեցեք այն բոլոր սարսափիները, զոր յես պիտի ուղարկեմ ձեզ, իմ հեղափոխականի անըիծ ճակատը յերբեք շպիտի խոնարհի ձեր առջե, անիկա, իմ հեղափոխականի սեզ, վսեմ ու մաքուր ճակատը պիտի հայի աստղերուն, կեցեք բարով, ընկերներ, յես կը համբուրեմ ձեր ճակատները, դուք ալ համբուրեցեք իմ բոցավառ ճակատը: Յես կերթամ. դուք կը մնաք հոս. յես կերթամ, դուք կարտասվեք հոս. կեցեք բարով, կեցեք բարով:

Տակավին շատ պիտի յերկարեր, յեթե լուրջ ուսանողներեն մեկը Սավարյանի նման շընդհատեր զայն հիշեցնելով զաղանի ժողովի հանգամանքը: Ուսանողներեն մեկ քանին այնքան հուղված եյին, վոր սկսած եյին արտասվեր: Բուրբոնյանը իր ճառը բարձրագույն հռետորական արվեստով լրացնելե հետո՝ բռնեց բոլորին ձեռքերը

և պինդ-պինդ համբուրեց բոլորին ճակատները։ Ուսանողներն ալ փոխազարձաբար համբուրեցին ընկեր դոկտոր Բուրբոնյանի հեղափոխականի անըիծ ճակատը։

Փիշերը ուշ առեն ցրվեցան՝ ճանապարհորդության բոլոր ծրագիրները մշակելեն հետո։ Բուրբոնյանը մերժեց ծովով ճամբորդել, վորովհետեւ կուղեր ցամաքով յերթալ՝ արարական նժույգի վրա նստած։ Ուսանողները համաձայնեցան այդ ցանկության։

Կես գիշերեն հետո առն վերագարձին՝ յերեակայեց փողոցին մեջտեղը կանգնած հանիֆեն, վոր վհուկի մը պես աշխերը վոլորած, մագերը ցանուցրիվ, զգեստները պատառառուն, թևերը պարզած՝ իրեն կաղերսեր և կաղաղակեր։

—Մի ըլլար այդքան անգութ, ով իմ սրտին ծաղիկը, յես ալ կուգամ քեզի հետ դեպի սարեր ու ձորեր, յես ալ կընկերանամ քեզի, քու բանտերու շարչարանքներուդ, յես մինակ եմ այս ամայի աշխարհին մեջ, վոչ վոք ունիմ զիս սիրող, դժւն ես իմ արեց, դաւն ես իմ թագավորը, արքայից արքան, և ինկավ Բուրբոնի վոտքերուն։

Բուրբոնը արհամարհեց այդ բոլորը, անիկա վորոշում տված եր նվիրվիլ և դոհիվիլ հայրենիքին համար և կին մը յերբեք արգելք շպիտի ըլլար իր հեղափոխական քայլերուն։ Անիկա առանց տառամաելու, հպարտորեն և վեհորեն թողուց խեղճ, սիրավառ Հանիֆեն ամայի փողոցին մեջ և յեկավ առն մեկ քանի որեն մեկնելու համար գեպի... հեղափոխություն։

Բուրբոնյան արարական ձի մը գնեց և ճամբա ինկավ գեպի հալեր, Անիկա հագված եր արար ձիափորի նման։ Առաջին օրեն իսկ անիկա սկսավ մտածել կարևոր բանի մը մասին։ Այդ բանը դարձավ հոգեկան տանջանք իր համար։ Զրաքաղաքի «Եղիակ» կոմիտեն իրեն պատվիրած եր հեղափոխական քարոզչությունը առնիւ խիստ զաղունի, տված եյին անոր հեղափոխական արվեստի բոլոր նրբությունները, ինչպես պետք եր մանել քաղաք, ինչպես պետք եր ծանօթանալ հեղափոխական աիպերու հետ, բայց Բուրբոնյանը անոնց եւ և վոչ մեկուն կարևորություն չտվավ։

Նոր հեղափոխականին տանջանքը այն եր, վոր քարոզչությունը պիտի տարվեր խիստ գաղտնի, ուրեմն անիկա զրկված եր... ճառախոսութենեն:

Յեթե մեկը ըլլար, վոր իր ճառախոսությունը սաստեր և կասեցներ զայն, գեթ ինք կընար յերբեմն-յերբեմն սկսիլ և մեկ քանի վայրկյան վայելչորեն... ճառախոսուեր:

Ճանապարհին ձիուն վրայեն ամայի արանետներու մեջ բավական գոհացում տվավ իր տոշորող մարմաջին, ճառախոսուելով համարձակ և հեղափոխականացնելով... լեռներն ու ձորերը; Հանկարծ ուրիշ միտք մը սկսավ տանջել զինք, վոր տիպար հեղափոխական ըլլալու համար պետք եր բանտ մանել ჩեռիներու, Յերկաթներու, Փինթի Մինասներու, Սյունկի Ավետիքներու, Զան-Թասներու, Դժոխքներու, Նժդեհներու պես, Առանց այդ բանտային արկածի ինք չեր կընար ըլլալ հեղափոխական հերոս, հետեաբար վորոշեց սարսափելի բայլեր առնել փութացնելու համար արկածը, վորուն յետեն պիտի համներ փառքը և հեղափոխական մեծ վայելչությունը:

Յերբ անիկա մոտեցավ Հալերին, արդեն ինքզինք կղզար հոգնած և աշխատանքի ծանրության տակ ընկնաված... Զին կապեց ծառի մը և ստվերին տակ ընկողմանեցավ հանգստանալու: Յերկու ժամվա մրափե մը հետո, վոր ատեն զառանցաներ կըներ և թեկերու ու զլուխի անհանդիստ շարժումներ, աչքերը բացավ և տեսավ յերկու թյուրք ժանդարմեր, վորոնք իրենց ձիերուն վրա հեծած կամաց կամաց ճանապարհը կը կտրեյին: Յերբ անոնք մոտափորապես հիսուն քայլ հեռու ելին՝ հեղափոխականը (տակալին հերոս չեր) վոտքի կանդնեցավ և սաստեց անոնց կանգ առնել:

— Ուր կերթաք, հարցուց անոնց:

Անոնք իրարու յերես նայեցին և անմիջապես չպատասխանեցին: Ընկեր Բուրբոնյանը անհամբեր՝ քաշեց իր ձիու արձաթազոծ մարակը (այն ատեն չուներ վոչ մի զննը) և սպառնալով՝ վրանին խուժեց: Ժանդարմերը կարծելով զայն արար բարձրաստիճան սպա,

ահարեկված՝ իրենց ձիւրը մղեցին քառատրոփ փութկոտության և փախան։ Յերբ անոնք կտրվեցան տեսողութենք՝ Բուրբոնյանը վերադարձավ իր ձիւն քով և ճառախոսեց այսպես։

— Ո՞վ հայրենակիցներ, ով տառապյալներ, յես յեկա ձեզ փրկելու, յես ազատագրեցի ձեզ յերկու սագայելներեւ։ Անոնք իմ շնորհիվ հավետ... կորած են, Անոնց սուրը այլիս չկընար բարձրանալ ձեր մամեդ վիզերուն վրա։ Յես կազատագրեմ ձեզ բալոր խուժութ, ցածողի ժանդարմներ, կեցցե՛ հեղափոխությունը, կեցցե՛ հերոսությունը։

Ընկեր Բուրբոնյան այլևս հերոս եր, միայն աշխարհահռչակ զառնալու համար պետք եր բանտ մտներ։

Իրիկունը ուշ ատան անիկա մտավ քաղաք և զնաց ընկեր լինելու ատակ յերիտասարդի մը տունը, վորուն հասցեն արված եր իրեն «Կոնյակ» կոմիտեյեն։ Այս յերիտասարդը անըմբռնելի յերկշոտությամբ ընդունեց հերոսը։ Գոցեց դուրսի դուռը, փակեց լուսամուտի փեղկերը, վորպեսզի, Աստված մի արասցե, դուրսին մեկը շտեաներ այդպիսի հեղափոխական տարագով մեկը։ Տնեցիները նշմարելով իրենց տղամարդու անսահման զգուշավորությունը, իրենք այ սկսան ցած ձայնով խոսիլ, գրեթե փսփսալ իրարու։

Յերկյուղը իր գաղաթնակետին հասավ, յերբ հերոս Բուրբոնյանը պատմեց իր ազատագրական տուաջին ակտը։ Հյուրասերը տենչալով տենչաց առավոտը վորպես զի կերպով մը ազատվեր իր հյուրեն։

Դոկտոր Բուրբոնյանը Հալեր քաղաքը մոտենալու ճանապարհին հայտնարերած հերոսությունը պատմելեն հետո, պատմեց և ուրիշներու հերոսությունները հեղափոխականացնելու համար իր շրջանակը։

«Իշերը անիկա յերազեց, վոր բռնակալ կառավարության կողմեն է երրակալեցին զինը, նետեցին բանտ... «առանց քննության՝ յերկու ժանդարմներ ռումբով սպանելու ամբաստանությամբ»։ Բանտի մեջ սարսափելի տառապանքներու յենթարկեցին զայն, մեխերու վրա նստեցուցին, յեռացած հագեիթներ դրին թևերուն

տակ, տաքցած յերկաթներով այրեցին մարմինը և անիկա հերոսաբար զիմադրեց բոլոր շարչաբանքներուն և, հակառակ այնքան խոստումներուն, վոյելե հեղափոխական դադանիք չտվավ. Հիշեց իր հանգիստ ուսանողական որերը, հիշեց Հանիֆեն, անոր արքունքները, բայց հպարտ զգաց իր տանջանքներուն համար, վորովհետեւ ամեն մեկ աւանջանքով կազատադրեր հազարավորներ իր յեղբայրներն և քույրերեն. Միայն անհունորեն կը տենչար, վոր իր հեծեծանքները, իր հեղափոխականի վայել ընթացքը համներ Սավարյանին և արժանի ըլլար անոր կեցցեյին:

—Այդ լուրը յես շուտով կը հասցնեմ անոր ականջին, կը մըտածեր ինքնիրեն բանտի... խճը լուսնթյան մեջ:

Առավոտուն անիկա արդեն լրիվ հերոս եր.

Յերիտասարդ հյուրասերը, վոր հեղափոխությունը և անոր քարոզչությունը այդ ձևով շեր հասկնար և լուռ աշխատանքի մարդեր, նախաճաշը ընելեն հետո, դառնալով դոկտ. Բուրբոնյանին,

—Ընկեր Բուրբոնյան, ըստավ լրջորեն, յես լուր ստացա, վոր Տիգրանակերտի մեջ ձեր ներկայությունը շատ զգալիյէ, այնտեղ դործը բավականին քայլայված ե և կառավարությունը զիմած և ամենեն անմարդավայել միջոցներու ձերբակալելու համար հայժողովուրդի մեծամեծերը. Մենք հոս բավականին առաջ տարածենք կազմակերպության գործը, իմ և իմ ընկերներու կարծիքը այն ե, վոր դուք հիմա ճամբար յելլեք դեպի Տիգրանակերտ՝ ուր մեծ կարիք կա նոր և տիպար հեղափոխականի.

—Եես իսկույն կը մեկնիմ հօն և կ'ազտառազրեմ բոլորը.

—Միայն թե, ընկեր Բուրբոնյան, լավ... լավ չեր ըլլար վոր... զիտեմը մենք շատ հայ ազգաբնակչություն չունինք Հալերի մեջ, դուք պետք ե յերթաք ավելի հայաշատ դավառներ:

—Ճիշտ ե, յես Հայաստան կերթամ, պատասխանեց տիպար հերոսը և կազտառազրեմ բոլորը:

Յերիտասարդ հյուրասերը շհամարձակեցավ ըսել թե ավելի լավ կըլլար արարական զգեստները փոխել, վախճակով, մի՛ գուցե, վոր որ մը ավելի կենար իր տանը նոր հազուսաներ պատ-

բաստելու համար, բայց ընկեր Բուրբոնյանը յերբեք մտադիր չեղի իր տարապին դպչիլ — իդուր եր յերիտասարդի վախը:

1908 թ. հուլիսի 14-ին, ոսմանյան սահմանադրության նախորին, դոկտ. Բուրբոնյան տակավին Տիգրանակերտ շեր հասած և Մշերիկ դյուզի մեջ զբաղված եր հեղափոխական կազմակերպության գործով:

Այսպեսուեր իր կազմակերպելու ձեռք — կը կանչեր դյուզի յերիտասարդներեն մին, առաջին անգամ կը պատմեր Հայաստանը աղտոտագրելու իր առաջին ակուր, ամենն անգամ զարգարելով, ամեն անգամ ավելի խոր գույներ տալով պատճերներուն, կը նկարագրեր իր բանտարին տանջանքները և վողերությամբ կոչ կըներ նմանիլ իրեն:

— Քուք պետք ե նմանիք ինձ՝ Արքայագնիս (այս եր իր հեղափոխական՝ պրոպագանդիստի ծածկանունը), կաղաղակեր:

Այդ մեկը կը խոստանար նմանիլ Արքայագնին, կը կանչեր մեկ քանի ուրիշ յերիտասարդներ, անօնց ալ կը պատմեր միննույն պատմությունը քիչ մը ավելի զարգարված քան առջինը: Անոնք կը խոստանային նմանիլ... իրեն: Բոլորին մեկանց յերդում ընել կուտար մի վոյեն Հեղափոխական-հերոսի անհետ կորած սրբազն գերեզմանի անունով և վերջացած կը նկատեր իր գործը: Մեկ քանի դյուզերու մեջ զնաց յեկեղեցին և արտօնություն խընդրեց ճառախոսելու: Անիկա արևու ժադումը նկատելով իրեն հեղափոխության այլաբանություն՝ ճառախոսեց յերեան բերելով ուսանողական շրջանի նման անուններու և պատմական թվականներու այնպիսի մեկին խառնիճաղանճություն, զորմե խեղճ զյուղացիները ափուրերան մասցին առանց քան հասկնալու, խոստավանելով նորեկի «յաման» ճառ խոսելու կարողությունը:

Այս արարողություններեն հետո Արքայագնը 1907 թվին Համբդի բեժիմը տապալելու համար Փարիզի մեջ գումարված կռնդրեյի թռուցիկը կը բաժներ՝ ավելցնելով:

— Յես յեկած եմ տապալելու Համբդյան բեժիմը, հույս մեծ ունեցեք, յես կը հաջողիմ իմ հեղափոխական-հերոսի վշտու ճանապարհին:

Տակավին Մշերիկ գյուղի մեջ եր, յերբ տարտամ լուրեր յեկան ոսմանյան սահմանադրության հոչակըման մասին, Առաջին անդամ բավական զսպեց ինքզինք, բայց հետզնետե սկսավ յերեակայել...—Կոնգրեն գումարվեցավ, ամբողջ Թյուրքիան հեղափոխականացավ, ինքը արդեն հեղափոխական սերմեր տարածած եր Բեյլուտեն մինչև Մշերիկ գյուղը և... ազատությունը յեկավ։ Անիկա ձին հեծավ և քառատրոփ հասավ Տիգրանակերտ։ Քաղաքի մեծ պարիսպեն դուրս տեսավ գյուղացիներ վոր կը փութային գեղի ներս՝ սահմանադրական թափորներուն մասնակցելու համար։ Յերբ դոկտ. Բուրբոնյանը ներս մտավ, հանդիպեցավ այդ թափորներեն մեկուն, վոր գինովցած որվան ազատութենեն, վորովհետեւ բանտերեն և դժոխային զնդաններեն դուրս եյին յեկած հեղափոխական հինավորց զործիչներ, զլիսարկները ողին մեջ ճոճեցուցին էլեցցե՛ պոռալով։

Ծնկ. Բուրբոնյան փութաց իրեն վերադրել այդ ցույցը, կանգնեցուց իր ձին, արարական զլիսանոցը հանեց զլուխեն ճոճելով ողին մեջ՝ սկսավ... ճառել,

—Վողջույն ձեղ հանուն Հեղափոխական Դաշնակցության, հանուն Ժընե քաղաքին, Այս ազատությունը վոր կը վայելեք այսոր, դուք, յերեկիվան ստրուկներ, զործն և մերայնոց։ Ծնորհակալ եմ ձեր ուրախության արտահայտությանց համար, վոր կը պոռթիան դուրս մեր կուրծքերեն ի պատիվ ինձ, անտեղի չե այդ և անպատող շնար յերբեք, Բոլոր հեղափոխությանց մեջ այսպես յեղած ե, ինչպես Գարիբարդին—ֆրանսական մեծ հեղափոխության հերոսը։ Յես լսեցի Հայերի մեջ, վոր Մեծն Տիգրանի այս քաղաքը գտանգված ե պաշտոնյաներու կողմեր, վազեցի և յեկա կոտրելով անցնելով հազար ու մեջ խոչընդուներ, Հիմա կը տեսնեմ, վոր կը ծափահարեք, և յերախտապարտ եք...»

Այսաեղ Բուրբոնյան քիչ մը կանգ առավ և սպասեց... ծափահարության, բայց վոչ վոք չի ծափահարեց։ Այս անդամ առաջի ձայնով դռաց,

—Կեցցե՛ ժողովուրդը։

— Կեցցե՛ հեղափոխությունը։

Այս անգամ ժողովուրդը արդեն զգաց և ծափահարեց յերկար և վորոտընդուառ։

— Կեցցե՛ մեր հերոսը, արձագանքեցին անոնք։

— Մենք տապալեցինք ոսմանյան բռնապետությունը, մենք իշխաններ Հայաստանի թագավորությունը, ավելցուց անիկա իր ձափին մեջ։

Իր առաջին աղատ ճառերու մեջ նաև հայտնեց իր հեղափոխական-հերոսական ծածկանունը։

Դոկտ. Բուրբոնյանը ինկավ ժողովուրդի առաջը խելով դրուցակներն մեկը և բանելով իր ձեռքը, անցավ փողոցներով։

Քրիստոսի Յերուսաղեմ մտնելու որը միայն մեկ բանով կը տարբերեր — Քրիստոս նստած եր իշու վրա, կրելով իշու վրա նըստած ասպետի վայել համեստությունը։

Թափորը հանդիպեցավ ուրիշ թափորի մը, Բուրբոնյանը, այս անգամ աղատության դրոշակը ձեռքը, յերկրորդ անգամ ճառախոսեց զրեթե միննույն նյութի մասին, ավելի վողեռորդած, ավելի հուզված, կոչականներով և շվոնքերով լեցուն, պատմեց դարձյալ աղատադրության իր առաջին ակտը և բանտային չարչարանքները։

Ժողովուրդը յերբեք չը կասկածեցավ անոր հեղափոխականության մասին, ընդունեց զինքը իր հերոսներն մեկը, ծաղկեփունջեր նվիրելով անոր։ Այս որվան ծնված բոլոր աղամանուկները ութին որ հետո մկրտվեցան և անվանակոչվեցան Բուրբոնի հիշտատակ մեծ հեղափոխական հերոսին։

Հերոս Բուրբոնյանը չրավականացավ ճառախոսություններով, զորոնք արտասանեց զանազան փողոցներու մեջ և մեծ հրապարակներու վրա, այլ միացած թյուրբ-բաղաքական աքսորական-ներու հետ՝ ժողովուրդը զբանեց ընդդեմ նախկին բեժիմի պաշտոնյաներու և հրապարակ բերելով զանոնք՝ հանձնեց ժողովուրդի դատաստանին։ Շատերը ծեծվեցան, մեկ յերկութը սպանվեցան, մեկ քանին անհետ կորան քաղաքին մեջ։

Թափորները և ցույցերը լրացնելե հետո, հեռազիր մը խըմ-  
բագրեց և անմիջապես ուղարկեց Ժընեի «Դրոշակի» խմբագրու-  
թյան:

Հեղափոխական ընկերներ,

Ենք ազատությունը գործադրեցի Ծիզրանակերտի մեջ, քշեցի  
բուրու նախկին վտանգավոր մարդիկը յեվ կառավարությունը առի  
իմ ձեռքին մեց: Կ'անցնիմ՝ ուրիշ քաղաքներ:

Կեցցե՞ ազատությունը:

Կեցցե՞ մեր գործը:

ԴՐԱՑ. ԲՈՒՐԲՈՄՆՅԱՆ

Յեկըորդ որը, ի պատիվ դոկտ. Բուրբոնյան հեղափոխական-  
հերոսին, Տիզրանակերտի բարձր դասը և մտավորական յերիտա-  
սարդությունը ճաշկերույթ մը սարքեցին մեծ սալոնի մը մեջ,  
ուրտեղ ներկա եյին յեզրոպական պետությանց հյուպատոսները  
և ամերիկյան միսիոնարական ներկայացուցիչները: Ներկա եյին  
նաև ոտարականներու տիկինները և որիորդները և մեկ քանի ա-  
զատամիտ հայ զարժուհիներ, Բուրբոնյանը սալոնին մեկ անկյու-  
նը ջղային շարժումներով շուրջիններուն կը պատմեր իր կոփէ-  
ները թյուրք ժանդարմններուն հետ, իր հարաբերությունները ար-  
տասահմանի հեղափոխականներուն հետ, կը պատմեր մեծ հիա-  
ցումով և խոր հարգանքով ընկեր Ս. Սավարյանի մասին, վոր  
զացած եր ամբողջ կիլիկիան հեղափոխականացնելու Արդեն նըս-  
տած եյին ճաշի և բոլորը հերթով իրենց բաժակները կը պար-  
պեյին ի պատիվ իրենց մեծ հյուրին, վոր հերոս եր և փրկած եր  
Հայաստանը գիշատիչ պաշտոնյաներն, յերբ հանկարծ մեկ քանի  
բուրժուատ տղոց հետ ներս մտավ շիք պարոն մը, կեղծ ծիծաղ մը  
իր դեմքին վրա:

Եթե պարոնը միջահասակ եր, լայն ճակատով, վոր կը վերա-  
գրըվեր ավելի ճակատի մազը կանխառառբեն թափելուն քան  
իմացական լայնաճակատության, քիթը քիչ մը հակած զեպի աջ  
կողմը, կը խոսեր ռնգային և կանացի խեղդված ձայնով, խոսած

ժամանակն ալ ուսերը քիչ մը վեր կառներ, տեսակ մը կիսայելլը բողականացած զավառացիի ձախավել արտահայտությամբ, հազած եր սև սեղինդոթ, լամբակին վրա զետեղած եր մեծ ներմակ ծաղիկ մը, մատները անցուցած մեկեւ ավելի խոշոր ակով մատանիներ, նայվածքի կապկություններով, իրեն ընկերակցողներեն մեկը ներկայացուց կոչնականներուն նորեկ շիք պարոնը.

— Ձեզի կը ներկայացնեմ պարոն Տիրան Դալանյան, հայանի Թանթաղիոն, վոր յերկար տարիներ, հակառակ իր յերիտասարդության, ծառայած ե հեղափոխության և հայրենիքին:

Թանթաղիոն մոտեցավ առաջին անգամ աիկիններուն և համբուրեց անոնց ձեռքերը ի զարմանս տեղացի կոչնականներուն, վորոնք առաջին անգամ կը տեսնեյին այդպիսի բան, հետո հերթով սկսավ պարոններուն ձեռքը սեղմել ամեն մեկուն արտասանելով իր անունը.

— Թանթաղիոն, étudiant en droit.

Յերբ կարդը յեկավ դոկտ. Բուրբոնյանին, Թանթաղիոն զըննողաբար դիտեց, վորովհետև մեր հերոսը տակավին չեր փոխածիր արարական ձիավորի տարապը:

— Դուք կը ներկայանաք զնկանը Բուրբոնյանին, արտասանեց մեր հերոսը քիթը անկած վեր, առանց ձեռք յերկարելու:

— Դուք կը ներկայանաք Թանթաղիոյին, étudiant en droit, պարոն, պատասխանեց շիք պարոնը առանց ձեռքը յերկարելու և զբաղեց իրեն հրամցված աթոռը:

Եատերուն այնպես թվեցավ, վոր Թանթաղիոն և Բուրբոնյանը իրարու արդեն ծանոթ եյին և անցյալին մեջ զժաված, բայց չուղեցին ուրիշներու ներկայության զդացնել և այդպիսի տարրորինակ ձևով ներկայացան իրարու. Թանթաղիոն և դոկտ. Բուրբոնյան իրարու յերբեք ծանոթ չեյին, բայց առաջինը Տիգրանակերտ մտնելուն պես լսած եր առաջի որդիան թափորի և Բուրբոնյանի ճառաերու մասին:

Թանթաղիոն հինգ տարիի ի վեր գտնված եր ժընեւ և Փարիզի իրավաբանության ուսանող. Իր իրավաբանական ուսանող

ըլլալը կը կայանար այն իրողության մեջ, վոր այցետոմս տպել տված եր իր անունով և ծածկանունով, ավելցնելով տակը—էս-դիանտ en droit, Ժընե և Փարիզ, Զենը սխալիր, յեթե ըսենը, վոր պատահաբար ներկա գտնված եր, հինդ տարիներու ընթացքին, մեկ յերկու իրավաբանական դասախոսությանց։ Իր բովանդակ հմտութունն եր թե՝ որենքը հիմնված ե իրավունքի վրա, թե կա օդ Նապոլեոն-ը, թե՝ յեզրոպական արդի որենքի հիմքը կը կադմեյին հոռվմեյական և զերմանական որենքները, Անֆիա իրքի շրջանավարտ վերադարձած եր Մալաթիա, իր ծննդավայրը, անհուն ուրախություն պատճառելով իր ծնողներուն։ Վկայականի մասին անիկա... վկայած եր, վոր յետքը սիտի զրկվի իրեն համարաբանեն։ Հայրը վաճառական մարդ և թանձրացյալ բաները սիրող, հարցուցած եր թե՝ վնր համալսարանին մեջ ափարտած եր ուսումը իր սիրասուն վորդյակը, անիկա պատասխանած եր, վոր ափարտած եր թե Ժընեի և թե Փարիզի համալսարանները—փոխն ի գործ։ Ֆանթազիոն այս պատասխանով չեր կրնար շգարմացնել նույնիսկ գավառի մեծ մտավորական մը, ուր մնաց իր քիչ զարգացած վաճառական հայրը։

Մալաթիա հասնելուն՝ հայրը ուղարկեց դայն Ռազդատ առետրական գործով։ Դեպի Բաղդատ ճանապարհին հոչակվեցավ ոսմանյան սահմանադրությունը։ Ֆանթազիոն Ժընեի մեջ շատ մոտ յեղած եր հեղափոխական գործիչներուն, վորոնք առանց յերկընչելու և յերկմտելու «կարմիր նամակներ» կը գրելին թերթերու մեջ՝ ուղղված— Ցըլարզի մեծ հիվանդին, անդուլ և անդադար սպառնալիքներ տեղալով թյուրք բանակալության հասցեյին։

Ֆանթազիոն մոտեն ծանոթ եր 1905-ի մահափորձին, մեկ քանի տերրորներու (վոլ թե զործադրությանց, այլ հղացման շշուկներուն) և տեսած եր բոլոր այն գործիչները, վորոնք յեկած և անցած եյին Ժընենն, շատերը նույնիսկ հյուր ըլլալով Ֆանթազիոյի սենյակը։ Ումանյան սահմանադրության հոչակմամբ Ֆանթազիոն մոռցավ հորը իրեն հանձնած առետրական առաքելությունը և ինքնարերաբար գարձավ հեղափոխական գործիչ և Տիգրանակերտ մը-

տովի իրրե այդպիսին։ Զինքը ծանոթացնողները, յերբ հայտնեցին թե անիկա յերկար տարիներ ծառայած եր հեղափոխության և հայրենիքին՝ իր մասին վոյեն ոտար աղբյուրներ չունեյին բացի իր պատմածները։

Հերթը յեկավ գոկտ. Բուրբոնյանին բաժակ առաջարկելու Տանտերը, վոր հաստավիդ փաստաբան մըն եր և ամբողջ ճաշկերույթի ընթացքին ուրիշ բան չուներ ընելու, յեթե վոչ իր ծառաներուն և մեծ տղուն վրա բարկացիուտ աչքեր ուտացնել, արդեն պատրաստ եր մեծ հարգանքով և հապարտությամբ ընդունել բաժակը, վոչ վոք կը կարծեր՝ թե հերոսը պիտի մոռնար հիշել տանտերը։ Դոկտ. Բուրբոնյան վոտքի կանոնեցավ և սկսավ։

Ազատ քաղաքացիներ, այս բաժակը (ըսլորին թեվերը իրենց ողիի լեցուն բաժակներով յերկարեցան դեպի Գաբրիել եֆենտին, վոր արդեն կանգնած եր—պատրաստ), յես կ առաջարկեմ խմել այս բաժակը բոլոր հեղափոխական-հերոսներուն ի պատիվ, վորոնք ինչկան և վորոնք կանգնած են։ (Փանթագիռն, վոր մինչեվ այդ խոսքը՝ նստած եր... փութաց վոտքի կանգնիլ)։ Թևերը քաշվեցան յետ և վորմանք ուղղվեցան դեպի առաստաղը, վորմանք դեպի Բուրբոնյանը և մեկ քանին ալ գեպի Ֆանթագիռն։

Դոկտ. Բուրբոնյանին մտքեն չեր անցներ յերբեք ուրիշ նսեմացնել, բայց Ֆանթագիռն զգաց, վոր պետք եր դարմացնել կոչնականները և ուշաղբությունը շրջել իր կողմը։ Ֆանթագիռն սպասեց իր հերթին, մինչև այդ շաղակրատելով յեվրոպացի տիկիններու հետ Փարիզի, Լոնդոնի, Նեյապոլի, Ջուրիխի, Մյունիսինի և Մոնտե-Կարլոյի մասին ֆրանսերն լեզվով, ծաղրելով անզլերենը և Շեքսպիրի լեզվին միմիքը ընելով իր քիչ մը դեպի ձախ հակած շրթունքներու տանջալից շարժումներով։

Դոկտ. Բուրբոնյանը դարձալ խոսք առավ և պատմեց իր քաջադրությունները, վորոնց բոլորը մտիկ ըրին—ապշաման և հետո մատի շարժումով կանչեց ծառաներե մին և անոր պատվիրեց լավ նայել իր Փայլակին։ (Փայլակը իր ձիու անոնն եր։)

— Շատ լավ, եֆենտի, պատասխանեց ծառան։ Բուրբոնյանը

քիչ մը բարկացած, բայց զսպելով իր բարկությունը, մի գուցե ուրիշները լսելին, ըստ ժառային թեթև հանդիմանանքով մը.

— Յես դոկտոր եմ, կը հասկնամա:

— Եաւ լավ, շատ լավ, դոկտոր եֆենտի, պատասխանեց ծառան և յետ-յետ գնաց հանդիպելով Դարրիել եֆ.-ի բարկութիւններ վոլորտապատույտ աչքերուն:

Կարգը յեկավ Ֆանթագիոյին: Անիկա վուաքի կանգնեցավ, լուռ կեցավ ովհ մը, ուսերը բարձրացուց վեր՝ պոլսահայ դերասանի անհաջող շարժումներով և սկսավ իր կանացի խոպոտ ձայնով:

— Տիկիններ (խոնարինելով մինչև զետին) և պարտներ, (առանց խոնարինթյան), դոկտ. Բուրբոնյանի քիչ առաջ պատմած դեպքը ունի բոլորովին անհատական և փոքրիկ բնույթ. յես ձեզի պատմեմ թե ինչպես տեղի ունեցավ 1905-ի մեծ մահափորձը:

Բոլոր նստարանները շարժեցան, դավաթները վար դրվեցան, ծառանները ֆեսերնին վար առին և սկսան ապշած և բերանարաց մատիկ ընել: Ֆանթագիոն պատմեց նախափորձները, նախածրագիւնները և հետո ամբողջ դեպքը, ինքզինքը ներկայացնելով կենտրոնական դեմքը, ներկայացուց որ. Բուրբոնյան, բաղդատելով զայն ֆրանսացի ժան դ'Արկի հետ և բաժակ առաջարկեց Բուրբոնյայի կենացը: Բայ իր պատմության Բուրբոնյան չեր մասնակցած մահափորձին, բայց վոչ վոք անդրադարձավ այդ իրողության: Հանկարծ ընդուած վեր ցատկեց դոկտ. Բուրբոնյանը և բաժակ առաջարկեց խուլացի կառապանի հիշատակին: Գարրիել եֆենտին տեսնելով Ֆանթագիոյի հուգմունը և զայրույթը դեպի Բուրբոնյանը (Բուրբոնյան յերթեր չեր նայեր Ֆանթագիոյի կողմը), առաջարկեց խմել յերկուքին ալ կենացը: Իզնուք Ֆանթագիոն ջանաց ըսել, թե մեկը մեռած ե, իսկ մյաւար՝ վողջ, արդեն գավաթները պարզված ելին և Ֆանթագիոն գավաթը ձեռքը՝ տատանեցավ և նստավ:

Յեւըսպացի կոչնականները վերջին անգամ հաջողություն մտղեցին ոսմանյան սահմանադրության, շնորհակալ յեղան Գարրիել եֆենտին և առանց յերկու մեծ հյուրերուն ակնարկություն ընելու՝ հրաժեշտ առին և զացին:

Յերկրորդ որը դարձյալ տեղի կունենար մեծ խնճույք մը Ֆանթազիոյի նշանախոսության առթիվ։

Տիրան Ղալանյանի նախկին, բայց շատ սիրելի և հուղիչ սովորությունն եր նշանվիլ հասած հարուստ աղջկան հետ, կորդելով մեծ գումար իր աներօշմեն զանազան սուստ պատրվակներով և անցնիլ ուրիշ քաղաք։

Գաբրիել եվենստիփ գուստը, 18 տարեկան գեղանի որիորդ մը, վերջընթեր զոհերեն յեղավ Ֆանթազիոյի այս սովորության։ Անիկա կը խարեր աղջիկները այն թեթևասրտությամբ, ինչ թեթևասրտությամբ վոր մարդիկ առհասարակ հոտավետ ծաղիկ մը կը փրցնեն իրենց լամբակները զարդարելու։

Վոչ վոր տեղեկություն ուներ Ֆանթազիոյի անցյալ կյանքի մասին, վոչ վորեւ ալ չուղեցին աղջկան ծնողները տեղեկություն առնել, վորովհետև Ֆանթազիոն կը նկատվեր իդեալ փեսացու։

Նշանախոսությունն անցավ նշանակելի, Դոկտ. Բուրբոնյանը, վոր հրավիրված եր նշանախոսության հանդեսին, վողեորված ճառ խոսեցավ Ֆանթազիոյի իմացականության և անոր հեղափոխական փայլունության մասին։ Առջի որվան խնճույքին՝ Ֆանթազիոյի լեցված եր ատելությամբ Բուրբոնյանին դեմ՝ բայց այդ իրիկուն բարեկամացան և քաշվելով անկյուն մը՝ յերկար խոսեցան իրենց նախկին հեղափոխական սխրագործություններեն...

Դոկտ. Բուրբոնյան ցույց տվավ այն նամակը, վորով ինք կը նշանակվեր շրջուն պլրոպագանդիստ, ստորագրված Սավարյանի կողմէ։

Ֆանթազիոն ինքն ալ իր գրալանի թուղթերուն մեջ շատ փրնտուեց համապատասխան վավերաթուղթ մը, բայց դժբաղդարար չի կրցավ գանել, ըսելով վոր կորսնցուցած եւ։

\*  
\* \*

Բուրբոնյանը նախ քան գյուղ մը կամ քաղաք մը մտնելը՝ մարդ կը դրկեր ծանուցանելու ժողովուրդին, թաղականներուն մասնավորապես, վոր հեղափոխականը կուգա և պետք ե գիմավորել։

Ազատությամբ զինով ժողովուրդը այս լուրին վրա թափոր կը կազմեր և մեծ շքով կընդուներ դոկտ. Բուրբոնյանը Փայլակին վրա նստած, հոխորտ և արհամարհուտ, քիթը այնքան վեր, վոր կը- դակը զուգահեռական մը կը կազմեր իր ուսերուն հետ.

Բուրբոնյանը Տիգրանակերտեն դուրս յեղելուն փոխեց իր ա- րարական ձիավորի տարազը յեղորպացի վորսորդի տարազի հետ, բայց շատ զղաց, վորովհետև ճանապարհի վրա հանդիպած միա- միտ մարդկանց զարմանքը կորսվեցավ:

Յերբ գրոշակակիր թափորներով կը դիմավորեյին զինքը, Բուրբոնյանը, ըստ սովորության, վողջույններ կուտար հանուն հե- ղափոխության և ազատության, հետո՝ պերճախոսության այն ա- տենվան գերազույն ձևով, կը պատմեր իր կափները վայրեվայր ձևափոխելով, զարդարելով և զարմացնելու, ապշեցնելու բոլոր հնարավոր մանրամասնություններ ավելցնելով։ Փոքրիկ քաղաքի մը մեջ պատմեց, առաջին անգամ ըլլալով, վոր ինք յեղած և այս- ինչ խորամական ուխտատեղին ողը հանողը։ Քարտեղի վրա այդ- պիսի ուխտատեղի չի կար, բայց անիկա ողը հանած եր զայն... մեկ քանի անգամներ Դոկտ. Բուրբոնյանը սուտի մասին գաղա- փար չուներ։ Իր համար ամենաիրական բանը իր յերեակայու- թյունն եր և այն, ինչ վոր կը պատմեր ու կը պատկերացներ՝ իր աշխարհի յեղելություններն եյին։

Զինքը դիմավորող թափորները կառաջնորդեր դեպի կառա- վարական շենքը և կոչ կըներ ժողովուրդին մատնանշել այն բոլոր հին պաշտոնյան երուն անունները, վորոնք անիրավություններ գոր- ծած եյին, վորոնք այսպես թե այնպես խժդժություններ ի զործ դրած եյին խեղճ, խաղաղ ժողովուրդի վրա։ Ազատությամբ զինով ժողովուրդը կը թվեր անունները բոլոր անոնց, վորոնք խօսապես նախակին բեժիմի որով սիրտ և խիզ չեյին ունեցած։

Բանի ուժով գոկտ. Բուրբոնյանը դուրս կը կանչեր այս մար- դիկը և կը հանձներ ժողովուրդի զայրույթին։ Ապա թափորը կա- ռաջնորդեր, ինք միշտ ձիուն վրա նստած, դեպի բանտը, մի դու- ցե տակավին մնացած ըլլային ներսը քաղաքական բանտարկյալ-

ներ, իր վերջին ճառը կը խոսեր այդանդ՝ պատմելով իր բանտարյին հուշերեն, իր անլուր չարշարանքներեն, պոռալով.

—Կեցցեն բոլոր նախկին բանտարկյալները:

Արարկիրի մեջ դոկտ. Բուրբոնյանը ճառախոսելու մարմաջեն՝ հանդիպեցավ անմահորեն ծիծաղելի պատահարի մը:

Իր Արարկիր մտած որը հուզարկավորությունը պիտի կատարվեր Գալուստ հֆենտի Յամանյանի, բայց իր գալստյան առթիվ հետաձգվեցավ հաջորդ որը: Հանգուցյալ Յամանյան հֆենտին մոտիկ բարեկամները գացին Բուրբոնյանի և ինդրեցին գալ թաղման հանդիսին և գամբանական մը խոսիլ: Դոկտորը այդպիսի առաջարկ մը մերժելու ուժ չուներ:

Հաջորդ որը անիկա ներկա շգանվեցավ պատարագի, բայց յերբ հուզարկավոր թափորը հասավ գերեզմանատուն, դոկտ. Բուրբոնյանը ձիուն վրա նստած՝ հասավ վայրը, իջավ ձիեն, (ծիսն սանձը ըսնելու համար քանիներ վազեցին, բայց մեկին միայն՝ բախտը շնորհվեցավ), մոտեցավ դագաղին, հանդիսավոր կերպով իր զիլարկը հանեց և կանգնեցավ սպասելով յերգեցողության լրացնալուն: Առաջին անգամն եր, վոր մարդիկ տեսան թե դոկտ. Բուրբոնյանը կարճահասակ մարդ եր, յերբ անիկա ձիեն վար իջավ: Իրանը զրեթե համահավասար մեծություն և լայնություն ուներ բարձրահասակ և միջակ մարդոց իրաններու հետ, բայց սրունքները ծիծաղելիորեն կարճ եյին:

Դոկտորը, յերգեցողությունն յետքը, սկսավ իր դամբանականը, պատմելով հայ հեղափոխության պատմությունը և հանգուցյալը ներկայացուց իրը զոհը այդ հեղափոխության: Դոկտ. Բուրբոնյանը յերբեք չը խորհեցավ թե հանգուցյալի մասին ինք վոշինչ չը գիտեր, կասկածելի յեր թե անունը իմացած եր, կարծեց թե մեռյալը դաշնակցական եր և ներբողը կարդաց Դաշնակցական կուսակցության, վոր այդպիսի անձնվերներ մեծցուցած եր իր ծոցին մեջ:

Եեվ վորովհետեւ հանգուցյալը կը պատի աներ Հնչակյան կուսակցության, աղմուկները ծայր տղին, անլուր հայոյանքներ ըստ

կրսան տեղալ որվան ճառախոսին, մեկ քանիներուն քիթեն արյուն հոսեցավ, վորովինետե Բուրբոնյանի պատկանած կուսակցության մարդիկը մեջ ինկան և հուղարկավորությունը վերածվեցավ ՀՀ տեսնված կոմեդիայի մը:

Հանգուցյալին մոտիկ կիներ և յերեխաներ դառնորեն կարտասվելին և կազադակելին:

Այդ բոլոր խայտառակության մեջ միայն հանգուցյալն եր տնպարտ և արդար, զոր անտարեր կերպով կը ննջեր պատանքներուն մեջ:

Ավելի լուրջ մարդիկ կերպով մը կըցին կոփվը դաղբեցնել, վորմե հետո դամբանախոսը նստավ ձիուն վրա և հեռացավ առանց վայրկյան մը իսկ մտածելու հուղարկավորության լրջությունը խանգարած ըլլալուն:

Դոկտ. Բուրբոնյանի համար կարենորը —իր ճառախոսած ըլլալն եր:

Ամբողջ որը զբեթե ձիեն վար չիջավ, պատեցավ փողոցները, բոլորը պատուհաններեն և դուռներեն մատով կը ցուցնելին տարութինակ ձիավորն Արարկիրի փողոցներուն մեջ:

Դիշերը հավաքվեցան Հնչակյանները և դոկտ. Բուրբոնյանին դաշնակցական կլուրեն դուրս յելլու ատեն հետեւցան անոր և մութ, յետ ինկած փողոցի մը մեջ հարձակեցան վրան և ծեծելով՝ կիսամեռ թողուցին և հեռացան:

Եերկրորդ որը դոկտ. Բուրբոնյանը պատմեց գեպքը զինքը այցելողներուն բոցավառ գույներով, թե ինչպես 150 հին բեժիմի ժանդարմեր հարձակած երին իր վրա, թե ինչպես ինք դիմադրած եր անհավասար կովի մեջ և փախցուցած եր բոլորը առանց անդրադառնալու իր յերեսին և կոնտակին վրա տակավին չի չորցած արյան հետքերուն և վոչ վոր ալ չը համարձակեցավ հարցուփորձել:

\* \*

Ֆանթազիոն Տիգրանակերտեն վերադարձավ Խարբերդ, Առաջին որը հյուր յեղավ Արփիարյան ընտանիքի տունը, ուր հավաք-

ված եր մեծ բազմություն։ Ֆանթագիռն հարստացուցած եր իր դեմքի միմիքը և պատմությունները։

Աղատամառության իրրե առաջին քայլ — հրավիրված եյին կիւներ, վորոնք սալոնին մեջ առանձին նստած, բայց կը մասնակցեյին յերեկութին։ Ֆանթագիռն պատմեց հանդիսավոր կերպով թե ինչպես ինք հեղափոխականացուցած եր բովանդակ Տիգրանակերտը, թե աղատության և հեղափոխության ինչ մեծ խանդավառություն կը տիրեր այն տեղի հայ և թյուրք ազգաբնակչության մեջ։

Պատմեց անիկա իրեն ծանոթ հեղափոխականներու մասին, վորոնք պատկառանքով մոտեցած եյին իրեն, իրրե ժընե և Փարիզ տեսնող մեկը, իրըն ամենամոտիկը հեղափոխության ուանդիբաններուն։ Հիացումը և աղջությունը կատարյալ յեղափ, յերբ Ֆանթագիռն անդրագարձավ դարձյալ 905-ի մեծ մահափորձին։

Ֆանթագիռն իր բոլոր ըսելիքները լրացնելե հետո՝ բաժակ առաջարկեց զեղեցիկ սեռի կենացը։

Կոչնականներու մեջ կային մարդիկ, վորոնք մինչեւ անգամ չհասկցան «գեղեցիկ սեռ» բացարությունը, բայց վորովհետեւ շատերը դարձան դեպի կիները՝ կիները զլուխնին վար կախեցին և ամեն ինչ լուցց։ Ֆանթագիռն հեղնական քմծիծ աղով մը շարունակեց իր խոսքը։

— Հելենական և հոռվմեյական կյանքի մեջ, ըսավ անիկա, և նույնիսկ մեր նախակին թագավորության ժամանակ, յերբ տակավին իսլամները չեյին արշաված մեր սրբազն և անպարտելի լեռները, սովորություն կար, վոր կիները և տղամարդիկ զիրար կը համբուրեյին բազմության ներկայության և բաղնիս կերթային միամին, իսկ իսլամները...

— Պ. Ֆանթագիռ, նկատեց ամենածեր կոչնականներեն մեկը, անցնենք ուրիշ նյութի։

— Դուք շատ նեղ կը մտածեք, ընկեր, պատասխանեց Ֆանթագիռն, պետք և թօթափել հինը և զգենուզ նորը — յեկվոռպական վերջին խոսքը, Յեվրոպայի մեջ հիմա այլևս ամուսնություններ

անգամ չկան, ով ինչ կը ին վոր կուզե, կառնե և կը տանի իր սենյակը:

Այս խոսքին վրա շատերը ծիծաղեցան, բայց հանկարծ լսվեցավ մեծ աղմուկ: Ներկա յեղող ջղային մարդոցմեն մեկը, վոր յերք չեր կը նար հանդուրժել այդպիսի միտք՝ առավ ողիի շիշը և նետեց ֆանթազիոյի ճակատին: Ֆանթազիոյի ճակատեն արյունը ըսկը ըստ հոսիլ: Շիշը նետողին մոտիկ մարդիկ բռնեցին զայն մինչ ուրիշներ ալ կաշխատեցին ֆանթազիոն տանել ուրիշ սենյակ մը անախորժության վերջ տալու համար:

— Դուք վայրենիներ եք, դուք հականեղափոխականներ եք, հին բեժիմի գործակատարներ, սրիկաններ եք, աղաղակեց ֆանթազիոն:

Կախվը կերպով մը դադրեցուցին ֆանթազիոն տանելով մյուս սենյակը: Եիները սարսափելի կերպով վախցած՝ կամաց կամաց քաշվեցան դացին: Սեղանը մնաց մեջտեղը: Մյուս և նյակին մեջ ծխախոտ վառեցին և դրին ալ: Ֆանթազիոյի վերքին վրա, ուրկե արյունը կը կաթկրթեր: Յերբ առավտուն արթնցավ, թուղթ, թանաք և զրիչ ուղեց և հետեյալ հեռազիբը խմբազրեց զրկելու համար Պոլիս՝ Ալզատամարտ»-ի խմբազրության:

«Ենիւս Խարբերդ բարոզելու համար նեղափոխության խորը, բայց վայրենի հակատակնորդներ իմ ճակատը ծակեցին: Այս տիպի մարդոց պահանջն և նախակին կառավարության ճնշվը յեվ նախակին պաշտոնյաներու վերապրավամը իրենց աթոռներուն: Նեղափոխությունը վտանգի մեջ և, նեռազրեցն թե ինչ կերպ վարվելու յեմ»:

Կեցցե՞ Ազատությունը:

Կեցցե՞ Հեղափոխությունը:

Փանթազիոն

(Etudiant en droit).

Ֆանթազիոն տակավին անկողնի մեջ եք և դուքս չեր յելած իր վերքը չը ցուցնելու համար, յերբ հեռազիր ստացավ Դաշնակցության Պոլսի պատասխանառու մարմիննեն հետեյալ բովանդակությամբ.

«Շնկեր Փանթազիո,

Տեղվոյդ հեղափոխական ուժերու աշակցությամբ բանտարկեցն ը յել իստիվ պատճեցն ք այդպիսի տիպն ը:

Կեցցե՛ Ազգությունը»:

Պոլսի պատասխանառու մարմինը նաև զիմեց Պոլսի իթթի-հատ վե թերագոջ ոսմանյան կոմիտեյին հեռազրելու Խարբերդի իր մասնաճյուղին աջակցելու համար ընկեր Ֆանթազիոյին, Խար-բերդի իթթիհատականները իրենց Պոլսի մարմինն հեռազրելը ըս-տանալուն պես՝ փութացին գանել Ֆանթազիոն:

Ֆանթազիոյին շիշ նետող մարզը, Ազնավուրյան եֆենտին՝ իր բոլոր արբանյակներով մյուս որը բանտ քշվեցավ, բայց այդ զիշերը Ֆանթազիոն վախնալով ժողովուրդի ցասումն փախավ ուրիշ քաղաք:

### 3

Դոկտ. Բուրբոնյանը մտադրեց մտնել իր ծննդավայրը, Անի-կա փոխեց իր զգեստները, դարձյալ հազար արարական ձիավորի տարազը և մտածեց ինչ ձևով ներս մտնել:

— Բոլորը ինձ պիտի հնազանդին, սկսավ խոսիլ ինքնիրեն, ամբողջ քաղաքը պետք և դաշնակցական ըլլա և ինձ ծաղկեփունջեր նվիրե, ինչպես առաջ, յերբ տակավին յես զոկոր չեյի:

Մտածեց նաև իր ընտանիքը փոխադրել տալ մի ուրիշ տուն, բայց բարերազդաբար գտավ, վոր իրենց տունն ավելի լավ տուն չի կար փոքրիկ քաղաքին մեջ, Կանչեց դյուդացի մը և անոր հը-րամայեց.

— Եերթաս մեր քաղաքը, կը հասկնամ:

— Հրամայեր եք, եֆենտի:

— Դնկտոր եֆենտի, սաստեց Բուրբոնյանը խեղճ շինականին: (Շինականը կանգնած տեղը ցնցվեցավ յել ինքնաթերաբար արտա-ռանեց, — Դոկտոր եֆենտի): Կերթաս մեր քաղաքը, կը տեսնես թա-ղականները և բոլոր մեծավորները և կը սես անոնց, վոր դժկոնը

Բնուրբսնյանը վաղը պիտի ժամանե, յերկուեռ վարժարանի բոլոր աշակերտությունը ծաղկեցիունջերով ինձ դիմավորելու կը հանեն, տեղվույն առաջնորդը ինքը անձամբ կը դիմավորե ինձ, հրաման կընեն, վոր ներս մտած ատենո յերկու յեկեղեցիներու զանգակէները դողանջեն և յեկեղեցիներու յերգեցիկ խումբերը խառն յերգեն «Մնը Հայրենիքը», կը հասկնառ, հիմար, այսպիս՝ կերթաս և կը պատվիրեն, յեթե վոչ զլուխդ կը թոցնեմ:

— Հրամայեր եք, եֆեն... զոկտոր եֆենտի:

— Հիմա ճամբա կելլես և կերթաս, հեռացիր. Շինականը հրաժեշտ առավ և ճամբա յելավ դեպի Զմշկածաղ, վոր հազիվ յերկու ժամ հեռավորության վրա յեր:

Մեր Բուրբսնյանը գիշերն ամբողջ չը կրցավ քնանալ և ծրագրեց մեկ քանի տեղեր ճառեր խոսիլ և մեծ հանդիսավորություն ստեղծել, Անիկա Յեփրատ Կոլեջի մեջ զրեթե անդիք ըրած եր Քրիստոսի պատմությունը: Իր մուտքը դեպի իր ծմնդավայրը նմանցուց Քրիստոսի Յերուսաղեմ մտնելուն: Անիկա առաջին անգամն ըլլալով կասկածեցավ Հիսուսի այն նշանավոր խոսքին վրա թե, Մարգարեն պատիվ չունի իր գավառին մեջ:

— Հիսուս արքան մեծ մարդ եր, բայց վերջապես հյուսնի մը վորդին եր, ատոր համար իր գավառին մեջ պատիվ շուներ, մտածեց անիկա:

Վորպեսպի նմաներ իր Զմշկածաղ մտնելը Քրիստոսի Յերուսաղեմ մտնելուն, մտածեց Փայլակը փոխել ավանակի մը հետ, բայց յերբեք չը կրցավ այդ մտածման հետ հաշումիլ:

— Յես... իշու վրա նստած... այդ գարը անցած ե, մտածեց և բոլորովին դուրս վանտեց եշը իր խելապատակեն:

Խանին տերը լսեց շինականին աված պատվերը և վեշերը իրարու թերագ: Առաջ, վոր Բուրբսնյանը կը նկատեր իրը և հասարակ ճամբորդ մը և իր տանուտերի սովորական հարգանքը կընծայեր, այս անգամ սկսավ վախնալ: Յերբեք չկրցավ հասկնալ, թե ինչ տիպի մարդ կրնար ըլլալնա, վորուն համար ամբողջ քաղաքը պաշտօնապես բարի գալուստի պիտի գար, յեկեղեցիին զանգակ-

Ները պիտի դողանջելին, յերգեցիկ խումբը և առաջնորդը նույնիսկ պիտի դային դիմավորենու:

— Իմ տեսած բժիշկներուն համար այդ տեսակ ցույցեր չեք սարգած, ուսուցիչ մը այսքան փառասեր չեք կրնար ըլլալ, կը մտածեր խանի տերը, Յերբեք չը գուշակեց իր հյուրին ինչ տեսակ մարդ ըլլալը, վերջերս շատ եր լուծ հեղափոխականներու մտին, բայց նայելով Բուրբոնյանի հասակին, վոր շատ կարճ եր, խանի գեղջուկ տերը չեք կրնար կարծել, վոր այդ հասակով հեղափոխական կրնար ըլլալ։ Անիկա կերնակայեր տիտանյան հասակ, սադայելական նայվածքներ, սարսափելի ձայն մը, վոր քարայրի մեջ հնչող պղինձի նմաներ և անպայման մեկ քանին պետք եր մինչեւ այդ ատեն ծեծ կերած ըլլային իրմէ։

Իրիկունը, յերբ անիկա դոկտորին տված բոլոր պատվերները յերկյուղածորեն կատարեց՝ հանդոնեցավ մոտենալու իր հյուրին, վորուն համար վաղը զանդակները պիտի դողանջելին, Անիկա հագուստի և վեղը բորելով մոտեցավ դոկտոր Բուրբոնյանին, վոր ատեն դոկտորը պեխերը կոլորեր։

— Դոկտոր եֆենտի, ուրիշ պատվերներ ունի՞ք։

— Վաչ, Այս խանը քու սեփականությունող ե, հարցուց հանկարծորեն։

— Զեր շնորհիվ, պատասխանեց գեղջուկը, բայց սարսափած, վոր մի դուցե անհարմար ըլլար շիտակ խոսիլը։

— Կարգված յես, մանուկներ ունիս, լավ դրամ կը շենես, հը ինչպես ե զործու։

— Լավ ե, շատ լավ ե, եֆենտի, բայց ասկե առաջ շուները համ չելին տար։

— Հիմա ինչպես են, Յերպիս յեղան, չե։

— Հիմակուհիմա ակուս շեն կրնար սեղմել, կըսեն վոր մեր ֆիտայիները յեկած են Ստամբուլ և գործը լավ կերթաւ։

— Այս, յեկած են, բոլորն ալ ցըված են յերկրի չորս կողմերը, Յես ալ յեկած եմ հոս, յես բոլոր ժանդարմներուն քիթը կոտրեցի, յես ահավոր չարչարանքներ քաշած եմ, բանտերուն մեջ

պիտի փոտեյի, այլևս դուք ազատ եք, յես ազատությունը բերի այստեղ. Հըլլա, Հըլլա վոր շուներուն մեկ խոսքին ականջ կախեք, յեթե անոնք համարձակին վոյնե իրենց նախկին սովորություններեն կրկնել՝ յե՞ս հոս եմ, յե՞ս, յե՞ս հոս եմ: Հետո դոկտ. Բուրբոնյանը շարունակեց պատմել խանին միտմիտ տիրոջը իր ավելի ճշխացուցած հեղափոխական-հերոսական սխրագործությունները, վորոնց խանին տերը մտիկ ըրավ ապշությամբ և յերկյուղածությամբ, բայց յերբ դոկտորը զիմեց իր պատմությանց փոքրիկ մանրամասնությանց, խանին աէրը, վոր առավտան մինչև իրիկուն հոգնած եր, սկսավ քնել, բայց յերբեմ քնուսուտ կը ցատկեր, յերբ դոկտորը կը կրկներ իր ժանդարմաներուն և զանազան զինվորական ներուն հետ ունեցած կոփներու աղաղակները:

— Հեյ, եշեկ հերիֆ, յես կը պատմեմ և դու կը քնանաս, այդպես ե, վոր շուները ձեզ կը հալածեն, յերբ չես կրնար լսել ազատազրության հրաշալի պատմությունները, զնա, կորիր այս տեղեն, սաստեց դոկտորը հոգնած խանի տիրոջը, վոր վոաքի յերավ, — ներողություն կընեք, եֆենտի, — ըսավ և զնաց քնանալու:

— Հեղափոխական ե յեզեր, յեզրակացուց ինքնիրենն.

Գիշերն ամբողջ կեցցեներու և ծափահարությանց ձայներուն ունինդրեց Բուրբոնյանը:

Հաջորդ առավոտ իր պատվերին համաձայն հետ յեկավ իր դրկած շինական պատգամափորը և լուր բերավ վոր մինչև անգամ պետք չի կար ընդունելության կանխավ թելադրությանց:

— Ցերը խոսքս բացի, վոր դուն պիտի մտնես Զմշկածաղ, դոկտոր եֆենտի, ըսավ շինականը, ամբողջ մեծավորները թունդ յելան, դոկտոր եֆենտի, ավելորդ եր ըսելու թե դուն կօւզես, վոր քեզ մեծ շբով զիմավորեն — դոկտոր եֆենտի, ամբողջ քաղաքը իրար խառնվեցավ, դոկտոր եֆենտի, յերբ առաջնորդին քով զացի լուր հաղորդելու, դոկտոր եֆենտի, գեղնեցավ մնաց, դոկտոր եֆենտի, անմիջապես կանչեց բոլոր թաղականները, դպրոցներուն տեսուչները, քահանաները և պատվիրեց, վոր տռնախամբության պատրաստ ըլլան, դոկտոր եֆենտի, ալ ի՞նչ ըսեմ, դոկտոր եֆեն-

տի, ամենքն ինձ պատիվ կուտային, վորովհետեւ յես բաղդը ունեցա առաջին անգամ հաղորդելու լուրը, դոկտոր եֆենտի, յես քու վոտքերուն դուրսպան, դոկտոր եֆենտի:

Յերբ շինականը կը խոսեր, դոկտոր Բուրբոնյանը կոկոզավիր դունչը յերկինք ցցելով՝ իր պելիքն հետ կը խաղար, աշխատելով ստորակետներու ուղղությունը պահել և հասցնել մինչև իր բիբերուն դեմք դիմաց:

— Առաջին անգամ, վոր գացիր, ինչ ըստի, հարցուց մեկենի մեկ մեր հերոսը:

— Դոկտոր եֆենտի, ըստ վոր դոկտոր եֆենտին կուգա, դեմքեկը:

— Զը հարցուցին քեզի թե վար դոկտոր եֆենտին եւ:

— Յերբէք, դոկտոր եֆենտի, ինչ համարձակությամբ:

Դուրսը արդեն հիվանդներու պոչը ավելի կերպերեր և խանին տերը հազիվ համարձակությունն ունեցավ գալու և հայտնելու. Սովորություն կար Հայաստանի զյուղերու և հետ ընկած քաղաքներուն մեջ, վոր յերբ բժիշկ մը կը հայտնվեր, բոլորը կը փութային ինքզինքնին ըննել տալ — հիվանդ կամ վոչ հիվանդ և կամ կարծեցյալ հիվանդ: Բուրբոնյան ամեննեն շատ հանդիպեցավ այս սովորության, վորուն կը համբեքեր մեծ հաճույքով:

Ինչպես մենք տեսանք, Բուրբոնյանը հազիվ տարի մը մնաց բժըշկական ֆակուլտետին մեջ և չեր կընար տարրական լուծողականի մը գեղագիրը պատրաստել և վորպեսզի առաջը առներ այս անհարմարության, անիկա ստիպվեցավ խորապես հավատալ առանց դեղի բժշկության մեթոդին: Իբեն այցելող բոլոր հիվանդներուն բազերակը կը նայեր, սիրաը մտիկ կըներ և մեկ յերկու վայրից ին խորհելե հետո, կըսեր.

— Որական յերեք անգամ մաի ջուր խմե, կամ որական յերեք անգամ բացոյա պատույտներ ըրե, կամ միս մի ուտեր, կամ կը թելագրեր հավկիթ, մածուն ուտել և կաթ խմել և զանազան այս տեսակ զյուղացիները ապշեցնող բժշկություններ: Մանը հիվանդներուն չեր այցելեր, պատճառաբանելով վոր ժամանակ չու-

նի, թե աղդային հեղափոխական գործը յերեսի վրա կը մնա, իսկ վիրաբուժության համար՝ գործիքները գժրադդաբար հետը չեր առաջ:

Հիվանդները քննելե հետո, կես որին ճամբա յելակ գեղի իր ձննդավայրը:

Չմշկածագցի Քրիստոսը կը մտներ իր Յերուսաղեմը:

Մեկ յերկու ժամեն արդեն Բուրբոնյանը հասած եր քաղաք: Հեռույյեն յեկեղեցու մեծ դանդանեները կը դոդանջեյին ժանուցանելով այդ բնափայրի ամենախոշոր գավակին հաղթական մուտքը: Մեկ քանի ժամվան մեջ արդեն ստեղծված եյին այլ և այլ առասպելներ Բուրբոնյանի շուրջը: Անոր արտակարդ մանկությունը կը պատմի արենելյան գույներով, զինքը մկրտող Մամբրե քահանան, վոր հիմա յեկեղեցիի իր բոլոր իրավունքները, խոր ծերության պատճառով, զիջած եր նորընծայի մը, յերջանիկ հիշատակներով կը պատմեր փոքրիկ Բուրբոնի ծնունդը, անոր արտակարդ ընդունակությունները: Բուրբոնյան տան դրացիները բոլորն ալ վերհիշեցին զայն և ամեն անհնք վորոնք ավելի շատ բան կը հիշեյին, ավելի բաղդավորված կը զգային ինքնինքնին:

Տեղիույն առաջնորդական տեղապահ Բառնաբաս վարդապետ Տեր-Կարապետյան, վոր Արմաշի դպրեվանքը յերկու որվատեսած ըլլալուն համար ամեն որ և ամեն մարդու հպարտությամբ կը պատմեր, իր փոքրավորով և քարտուզարով, զեմ եր յեկած վեղաբը զլուխը և զավադանը ձեռքը: Յերբ հանդիպեցավ թափորին վորուն մասնակցողները կեցցեներ կը գոռային և վարդապետին հրամանով ուռիի ճյուղեր բռնած եյին իրենց ձեռքերուն մեջ, պետերը ավելի սրեց, ծնուռը ցցեց զեղի յերկինք և ազաղակեց:

— Կեցցե՛ ազատությունը, կեցցե՛ Դաշնակցությունը: Ժողովուրդը ինքնարերաբար կրկնեց և քաղաքին բոլոր անկյունները արձագանքեցին այդ յերջանիկ աղաղակը: Բուրբոնյան Քրիստոսի նմանելու համար մեկ բան կը կարոտեր — իր զիխուն շուրջը չուներ լուսեղեն պսակ: Դժվար է արձանագրել այստեղ թե մեր հերոսը այդ մասին մտածեց թե վո՞չ:

Յերջանիկ ամբոխը շրջապատեց Բուրբոնյանը, Յերգեցիկ խումբը դիմումը առաջնորդեց դեպի յեկեղեցին, Շանտապարհին վրա, անիկա պետք եր անցներ իր պատեհական տան առջևեն. Իր հայրը և մայրը մասցած եյին տունը և յելած եյին տանիքը, դիտելու տեսարանը. Իսկ իր մեծ յեղբայրները իրենց արտակարգ յեղբոր ձիուն յերկու կողմերեն կը քաշեյին ձիուն ասպանդակները բռնած:

Յերբ հասավ հորենական տան առջև, խոնարհություն ընելով և փողջույներ ուղարկելով բոլորին, իր ծնողները տանիքին վրա ուրախութենե կուլային. Նախ փողջունեց իր ծնողները, վորոնք բավականին ծերացած եյին արդեն, առանց ձիեն վար իշնելու յերկուորդ անգամ ըլլալով աղաղակեց.

— Կեցցե ազատությունը, կեցցե հայրենիքը. Ամբոխը դարձյալ կը կնքեց ավելի ուժ զին և խելահեղ:

Թափորը հասավ յեկեղեցին, Բուրբոնյանը իջավ ձիեն, մտավ մատուոր և խաչակնքեց իր յերեսը. Մոտիկ յեղողները նշմարեցին արցունքի քանի մը կաթիլներ իր աշքերուն մեջ:

Յերգեցիկ խումբը սկսավ յերգել — «Ուրախ լի եր, ըերկրյալդ» — մինչ զուրսը ամբոխը կը շատնար և ներս մտնելու հնարավորություն չկար:

Բուրբոնյանը ձիուն մտրածիր ձեռքը, արարական շորերով, բարձրացավ խորան և սկսավ արտասանել մին իր նշանավոր ճառերեն.

— Հայրենակիցներ և ազատ քաղաքացիներ, ազատությունը կը կայանա այն բանին մեջ, վոր ամեն մարդ... ազատ ե, վոր ամեն մարդ ազատ ե (այս վերջին խոսքերը հատիկ հատիկ յեվ մանր շնչառերով կրկնելուն պատճառոր այն եր, վոր դոկտորը կասպանը բռնն ծափանարության, բայց ծափանարության փոխարձն տիրեց լորջ յեվ ծանը լուսթյուն): Հայ հեղափոխությունը և հատկապես Հայ հեղափոխական Դաշնակցությունն եր, վոր բերավ ազատությունը և հեղափոխությունը մինչե այս հետ ինկած անկյուններուն մեջ (դարձյալ լուսթյուն, բայց այս անգամ՝ Բուրբոնյանը Խշն գայն ցառումնի): Կեցցե Հայաստանը, կեցցե Հայ հեղափոխությունը (այս անգամ՝ վորոտնդոստ ծափեր): Մեր ճառախոսը փոքրիկ

հազով մը իր կոկորդը մաքրեց և շարունակեց փրփրած և կատաղած.

— Մեր դարերու սարկությունը այսոր անդառնալի կերպով կը սրբի մեր ճակատներուն վրայեն։ Ազատության մըրիկը կը փշե Պոլսեն մինչեւ Բաղդատ և Վասպուրականեն մինչեւ Մեքքե Մեղինե։ Մեր նահատակներուն սրբազան վոսկորները կը շարժին, հոգին տակեն ահավասիկ կը պոռան։ Դուք հանգչեցուցիք մեր հոգնած և ջարդված վոսկորները — ձւր եր դուք, վոր ավազ, չը տեսած ազատության և հերոսության արշալույսը վոր բարձրացավ Արարատի ձյունապատ կատարեն և մեզ բոլորս վողողեց իր կաթողին ճառագայթներով։ Յես ձեզի բերած եմ, ով իմ սիրելի հայրենակիցներ, այդ ճառագայթը, այդ արեւ։ Այսոր աշխարհի բոլոր պատմաբանները իրենց աշքերը անկած են մեզ, վորովհետև մենք յերեան կը բերենք տիեզերքի ամենամեծ յերկութը։ Հեղափոխություն, ապստամբություն, մահ բոլոր հին բեժիմի մարդոց և անոնց զավակներուն։ Ինչ վոր դարեր քարոզեցին աշխարհի մեծ մարդիկը՝ Թաղես, Սոլիքատ, Վաշինկուն, Լութեր, Դարվին, Լուդովիկոս Փէն, Քրիստոաֆորներ, Հեղելներ, Շոպենհաուերներ և Նիշշեներ, այսոր մենք, դաշնակցականներս կը գործադադրենք մեր սրբազան յերկրին մեջ։

— Ո՞վ ազատ քաղաքացիներ, դուք կ'ապրեք աշխարհի պատմության ամենայերջանիկ դարու մեջ, ձեր պատերը ստրուկ մեռան, դուք ստրուկ ծննջաք, դուք ազատ պիտի մեռնիք և ձեր զավակները ազատ պիտի ծնին, կեցցէ ազատությունը։ (բայն յեզ յերկարաւոնի ծափեց)։ Անիծ վի այն մարդը, վոր ազատության կը կասկածի։ անիծ վի այն մարդը, վոր հեղափոխության ընդդեմ մատաներ կունենա։ Այդ մարդոց զլիսուն մենք պատրաստ ենք մեր անարեկիչներու գնդակը իջեցնել։

Այսուհետեւ ըստ իր սովորության, պատմեց յերկարորեն և սաղմական ճիշճերով «Դաշնակցություն» կուսակցության պատմությունը, անոր հերոսներու սիրադործությունները, իր բանտային շարշարանքները, ժանդարմերու հետ ունեցած կոից-

ները, իր հաղթությունները, զանց առնելով և գտղանի դիվանագիտության մանրամանությունները, վորոնք չեյին պատկաներ ժողովուրդի լայն խավերուն։ Կոչ ըբավ զինվորագրվիլ իր կուսակցության։

Դոկտ. Բուրբոնյանի մաքին մեջ տակավին թարմ եր իր մանկության պատմությունը իր ծննդավայրին մեջ։ Անիկա հիշեց վորանակեղ կային կաթոլիկ հայեր, թփով մոտավորապես 50 տուն, վորոնք կը դաշտանեյին, թե իրենք հայ չեն, այլ կաթոլիկներ։ Անիկա պատեհ առիթ համարեց խոսիլ հայ կաթոլիկներու մասին և սաստել զանոնք դառնալ հայ լուսավորչականներ և ընդզըռկել Հ. Հ. Դաշնակցության տաշխարհահոչակա ծրագիրը։ Այս առենն եր, վոր Պոլսի մամուլին մեջ կը հուզվեր հայ-կաթոլիկներու խնդիրը, և իր ծննդավայրի մեկքանի կաթոլիկ տուններ ունեցած եյին գեղի իրենց մայրենի յեկեղեցին զիրկը դառնալու ջերմագին մատղրություն։ Անիկա խոսը ուղղելով հայ-կաթոլիկներուն, ըստվ։ — Հայտատանյաց կաթողիկե յեկեղեցին և, վոր պահած և գարերե ի վեր մեր ազգային դադաֆարը, մենք կը պարտինք այս յեկեղեցիի սյուներուն մեր այսորվան ազգային ազատազրության վոզին և տենչանքը, պետք և խորթ չմնալ մեր յեկեղեցին, պետք և առանց մտածելու թոթափել պապականության լուծը և վերադառնալ բան Քրիստոսի, հայ հեղափոխության զիրկը։ Մն, յես, յես կոչ կընեմ ձեզի հետեիլ ինձ։

Յերբ այս աղաղակը վերջացուց, բոլորը մեկանց սկսեցին ծափահարել։ Ազմուկին մեջեն կը լսվեյին մեկ քանի յերիտասարդներու ձայները, վոր կը պոռային։

— Մենք կը վերագառնանք մեր մոր զիրկը, մենք կը թոթափինք անարդ պապականությունը։

Ժողովուրդը «կեցցեաներով զուրս բերավ դոկտ. Բուրբոնյանը։ Անիկա անմիջապես հեծագ իր ձին, վորովհետեւ ամբոխին մեջ շափազանց կարճ կերներ։ Թափորը դարձյալ շարժեցավ գյուղաքաղաքին նեղ փողոցներեն և հասավ գերեզմանոցը։ Դոկտ. Բուրբոնյանը իր ձիուն զլուխը ուղղեց գեղի հին յերկու նահատակնե-

ըու շիրիմներու մոտ, ուր թափորին առջևեն քալող ժողովուրդը խռնված եր, կիներեն վումանք կուլային իրենց ուրախություննեն, աղջիկները տանիքներու վրային յերեսնին լաշակ մը ձգած, զաղտագողի, բայց բուռն տենչանքով կը դիտեյին որվան հերոսը, այդ ձիուն վրա նստած յերիտասարդը, վորուն մանկության արտակարգ պատմությունը խսկապես համապատասխան եր իր այսորվան փառանեղ մուտքին և քաջազործությանց:

Դոկտ. Բուրբռնյանը առանց ձիուն վրային վար իշխելու ըսկըսավ հուզված և արտասվաթոր աշքերով ճառել յերկու նահատակներուն վրա.

Դուք, սրբազան նահատակներ, Մարտիրոս և Գարեգին, վոր հիմա կը դիտեք ազատության արշալույսը, վոր յես բերի այստեղ. Յես զիտեմ, վոր ձեր հոգիները հանգիստ են և ձեր վրդովմած զանգերը չեն թափառիր ուրվականներու պես մթության մեջ. Յես ինքս վրեժ լուծեցի ձեր սրբազան մարմինները հոշոտող ժանդարմներեն, բացեք ձեր պայծառ աշքերը և տեսեք թե ինչպես անոնք կը հեծեծեն մութ բանակու մեջ, տեսեք թե անոնք ինչպես հալածված են լուսավոր աշխարհնեն և արենու լույսին կարուտ կը մնան. Հանգիստ, խաղաղ և անզորը քնացեք դուք ձեր գերեզմաններուն մեջ, ով նահատակ յեղայրներ, Մարտիրոս և Գարեգին, վորովհետեւ իմ ձեռքով ձեր վրեժը լուծված ե:

Ճառախոսուր իր ամբողջ թույնը թափելե հետո հին բեմիմին վրա՝ վերջացուց այսպիս:

— Մենք կը տանենք, մենք կը շարունակենք, յես կը խոստանամ բոլորին առջև, ձեր գործը ամենայն հավատարմությամբ, հարգանք և յերկրպագություն ձեր թարմ շիրիմներուն:

Դոկտոր Բուրբռնյանը յերբեք չը հիշեց, վոր շիրիմները 27 տարվան հնություն կը ներկայացնելին:

Բոլորը կուլային, բոլորը կը հեկեկային:

Թափորը առաջ շարժեցավ, դոկտ. Բուրբռնյանը արդեն շափաղանց հոգնած՝ իր ձիուն քայլերը ուղղեց դեպի իր հայրենի

առւնը։ Յերբ հասավ զբան առջե, ձիուն վրային անդամ մըն ալ աղաղակեց։

- Եեցցե՛ Ազատությունը,
- Եեցցե՛ Հեղափոխությունը,
- Կեցցե՛ Զմշկածագը,
- Ամբոխը խելահեղորեն՝ պոռաց.
- Եեցցե՛ դոկտոր Բուրբոնյանը։

Դոկտորը խօնարհություն ըրավ և ձին բշեց դեպի ներս, զրբեթե փակելով ձիու քամակին՝ մի՛ գուցե՛ զլուխը դարներ զբան առիրին։ Անոնք, վորոնք շատ մոտ երին Բուրբոնյանի տան՝ մտան ներս անձամբ տեսնվելու։ Առաջնորդը իր ամբողջ կազմով առանձնապես զնաց ժամանումը շնորհավորելու և իր հոտին վողջույնը մատուցանելու։

Հետզհետե նոր ամբոխ հավաքվեցավ զբան առջե և անհանդիսա՞ տեսնելու դոկտ. Բուրբոնյանը։

Հայրը խնդրեց իր տղային յելլել տանիքը, վորակեազի զինքը տեսնելու համար անհանգստացող ամբոխը գոհացում ստանար։ Դոկտ. Բուրբոնյանը անմիջապես ցատկեց դեպի տանիքը և վողջույնելով ամբոխը՝ ըստի անոնց։

— Ես շատ զգացված եմ, վոր դուք այնքան խանդավառորեն կուզեք ինձ տեսնել, մեկը՝ վոր ձեզի բերած և աղատությունը։ Դուք ազատ եք համբաւյան, վոչ վոք կընա դիպչիլ ձեր քաղաքացիական իրավունքներուն։ Դուք այլիս պյուղացիներ չեք, այլ քաղաքացիներ։

Գյուղացիները դարմացան...

Իրիկունը հայ-կաթոլիկներու կողմեն իր մոտ յեկավ հինգ հոգիե բաղկացյալ պատգամավորություն մը և հայտնեց վոր հիսուն տուն հայ-կաթոլիկները կը դառնային իրենց մայր յեկեղեցին զիրկը և կընդգրկեյին Դաշնակցության ծրագիրը։

Դոկտ. Բուրբոնյանը կարծեց ամենամեծ հաղթությունը տարած ըլլալ և անմիջապես հեռագիր մը խմբագրեց Պոլսի «Ազատամարտ» թերթին հնատեյալ ըովանդակությամբ։

\*Ազատամարտ\*-ի Խմբագրություն,  
Գաղափարի ընկերներ,

Ենս հասա իմ ծննդավայրը, ազատությունը տարածեցի բոլորին վրա, և նժամ մեծ շքով ընդունեցինս: Հայ-կաթոլիկ հիսուն տուն վերադարձնել տվի Մայր Հայաստանյայց Կաթոլիկե յեկեղեցին զիրկը յեվ ընդունել տվի Հ. Հ. Դաշնակցության ծրագիրը:

Մենք նվաճեցինք Հռովմի,  
Անկցի՝ պապականությունը,  
Կեցցե՛ Դաշնակցությունը:

Անձնվեր ընկեր Աքրայազն

Դոկտ. Բուրբոնյանը իր ծձնդավայրին մեջ «Ռազմիկ» Դաշնակցական խումբը կազմակերպելէ հետո՝ անցավ Խարբերդ: Իր ականջին արդեն հասած եր ռուսական ցարիքմի ճիրաններուն մեջ խեղղվող իր ընկերները՝ լուրը. անիկա «Ազատամարտ\*-ի մեջ կարգաց. «Մի ժողովուրդ մեղադրական նստարանի վրա: Հոդվածաշաբթը, ուր անձանոթ հեղինակավոր մարդ մը կը պատմեր հարյուրավոր ռուսահայ մտավորականներու ձերքակալումը»:

Այսոդի գիշեր մը չկըցավ քնանալ այդ հոդվածաշաբթի ընթերցումնեն հետո, նույնիսկ գիշերը զառանցեց — կը բռնեն, կը դատապարտեն, կը կախեն, վողջ-վողջ կը թաղեն: Առավոտ, յերբ արթնցավ, Հոդե գյուղին մեջ եր (15 տունով գյուղ մը), կանչեց այստեղի մեծերը, թաղականները և քահանան և հրամայեց հավաքել բոլոր գյուղացիները բողոքի ցույց կազմակերպելու համար ընդգեմ ցարիքմի բռնություններուն: Բոլորը հնազանդեցան, վորովինետե դոկտ. Բուրբոնյանը առաջին հեղափոխականն եր, վոր կը մաներ Հոդե գյուղը:

— Ըսեք բոլոր գյուղացիներուն, վոր հավաքվին յեկեղեցիի դրան առջև, ով վոր անհնազանդ զանվի, զլուխը կը թացնեմ:

Եերկու ժամեն բոլոր գյուղացիները հավաքված եյին յեկեղեցիի դրան առջև: Բուրբոնյանը յեկեղեցիի կողքին գտնված սեն-

յակեւ մը դուրս յեկավ, բարձրացավ ժամուն բակը գտնված «Բարերար»-ի մը բարձր գերեզմանին վրա և սկսավ խոսիր:

Ճառը յերկար եր և շատ հուղված: «Մի ժողովուրդ մեղաղբական նստարանի վրա հոգվածաշարքի պարունակությունը ծայրել ծայրի պատմեց և կոչ ըրավ: — բողոքի ձայն բարձրացնել ոռւսահայ յեղբայրակից մտավորականներու համար, վորոնք ոռւսական սարսափելի բանահերու մեջ կը տառապելին, ձայն բարձրացնել Ահարոնյաններու, Ոհաննայաններու, Խաչակյաններու համար:

Հողեւ զյուղացիները անդիտակ ըլլակով «բողոքի ձայն բարձրացնելու» մասին, սկսան վորոտընդուս և աղմկալից աղաղակել:

— Անկցի՛ ոռւսական ցարիկմը, անկցի՛ ոռւս թագավորն ու բռնապետական կառավարությունը:

Այս աղմուկներուն մեջ դոկտ. Բուրբոնյանը իր գրպանեն հանեց թուղթ մը և մատիս մը և խմբագրեց հետեյալ բողոքի «սուր բանաձեռ»: «Մենք, Հողեւ գյուղի հայ թնակիշներս, բուժն կերպով կը սողոքենք ոռւսակալ կառավարության կողմեն, մեր հայրենակից մտավորականներու հանդեպ ի զործ դրված տառապանքներուն յեվ անլուր շարշարաններուն համար: Կուխտներ անոնց վըրեժը շմոռնալ մեր կյանքին մեջ յեվ հատուցանել ինչպես վոր հարկն ե:

Անկցի՛ ոռւս ցարիկմը,

Կեցցե՞ Հայ Հեղափոխությունը:

Հողեւ գյուղի հայ թնակիշներու կողմեն Դմիտր. Բոհուրիսնան

Այս բողոքի հեռագիր-բանաձեռ լրացնելե հետո, դարձյալ բարձրացավ գերեզմանին վրա: Աղմուկները լուցին, անիկա կարդաց: Ժողովուրդը կրկնեց:

— Անկցի՛ ոռւս ցարիկմը:

— Կեցցե՞ Հայ Հեղափոխությունը:

Յերկու որինակ դրվեցավ այդ հեռագիր-բողոք-բանաձեռն, մեկը ուղարկվեցավ «Ազատամարտ»-ի խմբագրության, իսկ մյուսը Հ. Դաշնակցության Պոլսո պատասխանատու մարմինին: «Ազատամարտ»-ի խմբագրությունը հարմար դատեց «կուխտնք այդ վը-

բեմը չմոռնալ մեր կյանքին մեջ և հատուցանել ինչպես վոր հարկըն եւ խոսքերը հրատարակության շատալ։ Այդ գիշերը դոկտ. Բուրբոնյանը շատ զոհ եր, վորովհետեւ անիկա խորագույն հավատքն ուներ, վոր իր յեղբայրակիցներուն ցավը կը մեղմանար, և այդ որեն սկսյալ ցարիզմը լլջորեն նկատի կառնե Հոգե զյուղի զայրութը։

Դոկտ. Բուրբոնյան շարունակեց իր ճամբարդությունը ավելի և ավելի գունավորելով և խտացնելով զայն։ Անիկա կը զանվեր Այնթապի մեջ յերբ կիլիկյան յեղեռնը պատահեցավ։ Բուրբոնյանը արդեն մեծ անուն հանած եր Անատոլուի դավառներուն մեջ իբրև հեղափոխական պրոպագանդիստ։ Անիկա մյուսներուն նման իր վարկը և հմայքը չկորսնցուց իրքն հեղափոխական, վորովհետեւ մեկ վայրի մեջ չը մնաց, զիսավորի պես յերեցավ և անցավ։ Շատ մը տեղեր նույնիսկ փորձեր յեղան զինք դրկելու սամանյան պարլամենտ, բայց տարիքը և որինական պայմանները չներեցին։ Աղանայի ջարդերու լուրը առավ թե վոչ, փութաց մեկնել գեղի յեղեռնի վայրը։ Անիկա ցուցուց խոշոր ծառայություն խեղճ հայ ժողովուրդի ահարեկյաներուն հանդիպելով ամեն զյուղ և քաղաք և խոսելով միսիթարական ճառեր։ Ամեն քաղաքն և զյուղն իր պարտականությունը սեպեց հեռագիրներ ուղղել Պոլսի «Ազատամարտ» որաթերթին և սամանյան պարլամենտի հայ յերեսփոխաններուն։ Ե. Պոլսի հայոց պատրիարքարանի ցուցակներուն մեջ նըշանակված եր դոկտ. Բուրբոնյանը բժիշկներու կարգին առանց զիտալու, վոր Բուրբոնյանը բժիշկ չեր, այլ դոկտոր...

Ահավասիկ մեկ քանի նմուշներ իր քաշած հեռագիրներ։

«Ազատամարտ»-ի խմբագրություն.

Հասա Աղանա յեվ ականատես յեղա ահավոր յեվ անասելի կոտորածնն ազատած թեկողներու, վորոնք մերկ յեվ անողնական կը թափառեյին հրդեհված քաղաքի փողոցներուն մեջ։ Ենս կատարեցի

իմ ընկերական պարտականությունս մխիթարելով զանոնք յեվ արթընցնելով անոնց մեջ վրեժի զգացումը, Կաշխատիմ՝ զտնել հանցավորները յեվ անծամք պատժել, Հանցավորները հազարավորներ են: Ենս այստեղ բոլորին վրեժը կը լուծեմ: Ինձ ուղարկեցե՞ք պետք յեղած հեղինակությունը:

Արքայազն:

«Ազատամարտ»-ի խմբագրություն

Եես տեսա իմ աշքովս հարուստներ աղքատացած յեվ աղքատներ հավասարած հարուստներուն...

Մեզ թող կոտորեն, բայց մենք նորեն կը ծնինք:

Կեցցե՛ Կիլիկյան թագավորությունը:

Արքայազն:

Դոկտ. Բուրբոնյանը քիչ մը ընկճված յեղեռնի պատկերներեն, քիչ մըն ալ մխիթարական և հուզիչ ճառերու մեծ ամբոխ մը չգտնելու հուսախարութենեն, վորոշեց դուրս գալ Աղանայեն և յերթ ալ գարձյալ Տիգրանակերտ: Անիկա ու զեց պատճառարանել իր դուրս գալը և հեռազրեց դարձաւ «Ազատամարտ»-ի խմբագրության հետեւյալը.

«Ազատամարտ»-ի խմբագրություն

(Խիստ զաղունի)

Վորովինետեվ շշուկներ կան, վոր Տիգրանակերտի մեջ վոճրածին զանկեր կը հղանան մինվոյն հայկական աղեստը ի զործ զնել յես պարտք կը համարիմ՝ իմ հեղափոխական անվանս համար անմիջապես մե կնիլ Տիգրանակերտ: Վստահ յեղեք վոր յես կը զսպեմբոլոր վոճրական մօքերը յեվ կը հաստատեմ՝ խաղաղություն յեվ արդարություն: Ծուտով դրկեցեք այնտեղ հեղափոխական զինվորներ իմ հրամաններուս անսալու համար: Մենք կը կունենք յեվ կը հաղթենք:

Արքայազն:

Ցերք Տիգրանակերտ հասավ դոկտոր Բուրբոնյանը, անոր հանձնըվեցավ շտագողական հեռազիր մը, վորուն մեջ իրեն հրաման

կըլլար անմիջապես մեկնիլ դեպի Սերաստիա շատ կարևոր առաքելությամբ մը, զոր այնտեղ պիտի հայտնվեր իրեն:

Դոկտ. Բուրբոնյանը այս հեռազերը կարդալուն պես փութաց ձամբա յելլել փոքրիկ չափով մը իսկ չկասկածելով, վոր Սերաստիա դործ չի կար և Տիգրանակերտեն զինքը հեռացնելու պատճառք իր սասանեցուցիչ հեռազիրն եր, վոր ինքը հղած եր և Ազատամարտ»-ի խմբագրության ծանուցանելով իր Տիգրանակերտ գալուն պատճառքը: Բայց նախ քան Տիգրանակերտեն մեկնիլը՝ կանչեց իր ընկերները, վորոնք մեծ հարգանք կընծայելին ի հիշատակ իր առաջին մուտքին, և պատմեց անոնց Տիգրանակերտի մեջ կատարվելիք կոտորածի շշուկներու մասին, և վորովհետև ինք հեղափոխական դործով պետք եր մեկներ Սերաստիա, ինքնապաշտպանության և հերոսական դիմագրության գործը կը թողուր անոնց: Ընկերները յերբեք չմտածելով հավաքական կոտորածի մասին, ահարեկման յենթարկվեցան և իրենք իրենց մեջ ստեղծեցին խուճապ: Այդ գիշեր զանազան տուներ յերիտասարդներուն մեջ փսփսուկներ կային և վախ ու սարսափի նշաններ:

Դոկտ. Բուրբոնյանը անմիջապես մեկնեցավ Սերաստիա: Շահապարհին անիկա մեծ մտահոգության մեջ եր թե ինչպես պիտի դիմավորեյին ընկերները, թե ինչ հրդեհներ պիտի պատահեյին և ինչ հերոսական յերևույթներ տեղի պիտի ունենային: Անգամ մը լրջորեն մտածեց յետ դառնալ և մասնակցիլ ինքնապաշտպանության և ռազմական ընդունակությունները յերեան հանել, բայց մտածեց, վոր թերևս Սերաստիո մեջ ավելի կարևոր դործ մը կը պասեր իրեն:

Մաքաթիային հեռազրեց «Ազատամարտ»-ի խմբագրության հետեւյալը.

Վորքան վոր ծեր թելաղբանքներուն համաժայն յես նամբառ յելա Տիգրանակերտեն. բայց պետք յեղած թելաղբությունները յեվ ռազմական հրահանգները տվի ընկերներու ինքնապաշտպանության համար: Հիմա աղջեն կոխվը սկսած կըլլա յեւլ իմ այցելությունս ոգտակար կը հանդիսանա ընկերներուն:

«Ազատամարտ»-ի խմբագրատունն ալ մատնվեցավ խուճապի, վորովհետեւ Բուրբոնյանը կը հեռազրեր, վոր «Հիմա արդեն կռիվը սկսած կը ըլլա», և հեռազրողը քանի մը որ առաջ զանված եր Տիգրանակերտի մեջ՝ «Ազատամարտ»-ի խմբագրությունը դիմեց Հ. Հ. Դ. Պոլսի պատասխանատու մարմնին այս առթիվ. Մարմինը ստիպվեցավ հեռազրիք քաշել Տիգրանակերտի իրենց կոմիտեյին ուրվան կացությունը անմիջապես տեղեկացնելու։ Այս հեռազրին ի պատասխան Տիգրանակերտի «Սուրբ կոմիտեն հեռազրեց հետեւյալը.»

Սույժմ հանգիստ ենք յեզ խաղաղ։

#### 4

Ֆոկտ. Բուրբոնյանը կամաց-կամաց զգաց, վոր այս հեղափոխական-պրոպագանդիստի կյանքեն բան մը դուրս չդար—, յերեակայից ավելի գործնական միջոցներ ձեւք առնել ավելի ոգտակար ըլլալու համար։ Անիկա մտածեց բանակ կազմել և միշտ ունենալ այդ բանակը ձեռքի տակ։

Բայց այդ բանակը բնչի համար։

Ֆոկտ. Բուրբոնյանը այս բանակի ժամին պահեց արտասովոր դադանապահություն, բայց պարզ եր անոր հոգեթանությունը, Դոկտ. Բուրբոնյանը շատ շուտով նկատեց, վոր իր պատկանած կուսակցության սոցիալիստական ծրագիրը հոգ եր։ Այս կուսակցությունը կը հետապնդեր զուտ նացիոնալիստական մտքեր Դոկտ. Բուրբոնյանի մտքի մեջ հայ նացիոնալիզմը հայոց հին թագավորության վերահստատումն եր։

— Այս նոր թագավորության հիմնադիրը յես պիտի ըլլամ, մտածեց պահ մը և այդ մտածումին հաջորդեց իր բոցավառ յեւեակայությունը։

Անոր թվեցավ, վոր մեկը կը հականառե իրեն, զայրացավ, վատքերը գետնին դարկավ և աղաղակեց։

— Ո՞վ ե ինձ չի համուղը, յես եմ, և մտքին մեջ ըսավ. — հայոց Բուրբոնյան թագավորություն Քրիստոսի թվականին 19. . —

Հերցավ ճիշտ թվականը վորոշել և թողուց դայն մատավոր ազադային:

Բայց անիկա ուժեղ կերպով հետապնդեց բանակ կազմելու գաղափարը:

Բանակ կազմելու համար իր առաջին գործը յեղավ յերթալ շուկա և փոքրիկ սիրուն տետրակ մը գնել զինվորներ արձանագրելու համար: Անիկա սկսավ, իր ճառախոսություններու ընթացքին, կոչ ընել ունկնդիրներու արձանագրվիլ Հայաստանի ազատագրության համար:

— Ով վոր պատրաստ ե իր կյանքը զոհել՝ թող ձեռք բարձրացնե, կաղաղակեր իր ճառախոսության վերջը:

Հասարակության մեջ զտնվող հարյուրավոր ձեի մարդիկ կը բարձրացնեյին իրենց ձեռքերը: Դոկտ. Բուրբոնյանը աչքե կանցներ ձեռք բարձրացնողները և տետրակը հանելով իր զրպանեն տեղն ու տեղը կարձանագրեր:

— 150 քաջ զինվորներ Բեսիրիկ զյուղին մեջ, 200 անձնվեր զինվորներ Մարաշի մեջ, 3500 ռազմիկներ Սեբաստիայի մեջ (նահանգը), 7000 կրակոտ մարտիկներ Մուշի մեջ (գաշտը մեջը), 5600 անհաղթելի կտրիճներ Վասպուրականի մեջ, իսկ այսուեղալ (անմիջապես արձանագրելով տետրակին մեջ) Արարկիրի մեջ՝ 750 յերկաթե կուրք ունեցող ֆիտայիներ...

Հետզհետե այս թիվերը շատցան և դոկտ. Բուրբոնյանի յերեակայության մեջ սկսան զինվորական մարդանքներու Անիկա հաճախ կը ցատկեր վտաքի և կը պոռար ահուի ձայնով.

— Եցցե՞ բանակը:

Վոր բանակը, մւրտեղ, ինչու — ով եր հարց տվողը: Հասարակության պաշտօնն ե զարմանալ և անիկա... կը զարմանար:

Շուտով վրա հասավ իտալո-Թյուրք պատերազմը: Մազմական մարդոց համար հարց չկար թե՝ ինչու կը մղվեր այս պատերազմը: Պատերազմը ինքնին արամարանական եր: Դոկտ. Բուրբոնյանը առ ժամանակես լքած իր կազմած բանուկին նողատակը՝ յերեակայեց զործնական միջոցներ ձեռք առնել իր ռազմական

ընդունակությունները ցույց տալու ոգնելով... թյուրք բանակին:

Անիկա բացավի իր ծոցի տետրակը, աշքե անցուց իր արձանագրած հայ ռազմիկներու թիվը և անմիջապես թոռոցիկ մը խըմբագրեց և զրկեց զանազան դավառներ կոչ ընելով յերիտասարդության կազմելու համար կամավորական բանակ մը կռվելու իտալական վոանձությանց դեմ:

Թոռոցիկին մեջ հիշված եր, վոր ռդրականորեն պատասխանողները՝ պետք եյին շուտով մեկնիլ — դեպի Պոլիս՝ անկեց ալ դեպի ռազմաճակատ — և ինք մեկնեցավ անմիջապես թյուրքիու մայրաքաղաքը նախապես հեռազերով Ռսմանյան պետության պատերազմական նախարարության:

Իտալո — թյուրքական պատերազմի սկսելուն կը գտնվեր մեր հերոսը Յերզնկայի մեջ: Թյուրքական ք-րդ զորաբանակի հրամանատարը, վոգնորված հայու մը այս ժեստեն, փութաց նշան նվիրել դոկտ. Բուրբոնյանին Պոլիս մեկնելե առաջ: Յերզնկայի կառավարական շենքի մեծ հրապարակին վրա թյուրք հրամանատարը մեծ ցույց մը սարքեց, հրամայեց զինվորական յերաժշտախմբին գուրս դալ և նվազել: Բազմաթիվ ժողովուրդ հավաքված եր հրապարակը և դոկտ. Բուրբոնյան զինվորներու և իմարիչահրամայ շոք յաշաւ ովտանանաերու և ժողովուրդի կեցցեներու մեջ հրավիրվեցավ և նշան ստացավ: Դոկտ. Բուրբոնյան նշանը առնելե հետո՝ ցատկեց կառավարական շենքի սանդուխներու վրա և թյուրքերեն լեզվով արտասանեց վոգնորիչ ճառ մը, շեշտելով վոր — հազարավորներ՝ հայ յերիտասարդութենեն պիտի հետեին իրեն փշրելու համար իտալական գրոհները, վոտքի պիտի յելլեն, աղաղակեց տնիկա, հայ ռազմիկները Բեյրուտեն մինչև Վասպուրական և Իզմիրեն մինչև Բաշկալե — :

Ժողովուրդը ցրվեցավ, զինվորական յերաժշտախմբը նվազելով զնաց զորանոց, իսկ դոկտ. Բուրբոնյան տեղվույն առաջնորդին հետ հրավիրվեցավ հրամանատարին տունը ճաշի՝ ուր շարունակեց իր ճառերը, խօստանալով — կտոր կտոր ընել իտալական բանակները — : Յերեկութին անիկա իր ծոցի զրանեն տետրակ մը կը

հաներ և հաշիվներ կը բներ, Բուրբոնյանը կը հաշվեր իր ռազմիկ-ներու թիվը, Անիկա փոխանակ յեղած թիվը կրնատելու կեսի կամ ավելի պակասի, ընդհակառակը թիվերը կը բազմապատկեր յերկու-քով, յերեքով և ավելիով, կունենար հսկայական թիվ՝ զորու առ-ջե վոչ մեկ բանակ կը բնար դիմանալ — կը մտածեր անիկա, և հուղ-ված ու խելանեղ կառներ ողիին գավաթը և կը շարունակեր իր ճառը հավատացնելով մինչև անգամ... հայոց առաջնորդին, Ամենեն ավելի անիկա նկատի կառներ Յերզնկայի ռազմիկներու թիվը, զորոնք վաղն առավոտ պիտի հավաքվեյին զորանոցը, վորոնց ինք անձամբ պիտի բաժներ զենքերը, ինչպես թյուրք հրամանատարը խոստա-ցած եր:

Առավոտ վոչ վոք յերեաց զորանոցը, բացի էտրապետ անուն Խոլթենի - Բալանդացի մը, մեկ աչքը կույր, վորը պատրաստ եր կյանքը զոհելու և մեր հերոսին՝ համար: Դոկտ. Բուրբոնյանը առանց շվարելու՝ վոգեռությամբ և քաջալերանքներով ընդունեց Խոլթենի - Բալանդացի կարապետը, վոր իր տեղացիներն կը կոչվեր «Թեր տապանչա», և հուսաց վոր մինչև կեսօր բոլորը կուղային իր յերեակայության ահռելի պարապը լեցնելու:

Իզուր սպասեց մինչև յերեկո: Բայց վորովինետն ինք շատ չեր կը բնար սպասել, թուցիկները արդեն զրված եյին և յերկրի զանա-դան կողմերին արգեն կը փութային զեպի Պոլիս: Գիշերը նամակ մը գրեց թյուրք հրամանատարին, վոր ինք ստիպված եր շուտով մեկ-նիլ զեպի Պոլիս տեղափոքելու համար կամավորները: Իր յերկառո-ղով խնդրած եր հրամանատարին յեկող կամավորներու զենք բա-ժանել և սանմիջապես ուղարկել Պոլիս, ուր հարկ յեղած կարգա-դրությունները ինքը կը բնա: Կարապետը ընտրեց իրեն հավատա-րիմ և հլու ժառա և կես զիշերին յերկու ձիով մեկնեցավ դեպի Բաքերդ և անկեց ալ Տըապիզոն:

Յերբ ճամբար ինկավ դոկտ. Բուրբոնյանը՝ կարապետին տվալ հարկ յեղած ողին վորական հրահանգները.

— Կարո, ինձ նայիր, ինձ կը կանչես դոկտոր եֆենտի և միշտ բարե բռնած, ինչպես հլու, հնագանդ և կարգապահ զինվոր:

— Շատ աղեկ, դոկտոր եֆենտի, պատրաստակամ պատասխանեց Կարոն։

— Ուր վոր կը հասնինք, շաբունակեց Բուրբռնյանը, անմիջապես կը վագես և Փայլակիս սանձը կը բռնես, մոտիկ մարդոց նշան կընես ինձ մոտենալ պատկառանքով։ Ո՞վ զիտե, կընա ըլլալ մարդիկ պատահին, վոր ինձ չը ճանչնան...

— Զեզ չճանչնալ, դոկտոր եֆենտի, յես բոլորին ալ ճանչցնել կուտամ Զեզ։

— Աֆերիմ, Կարոն, աֆերիմ, իմ ծառայիս պարտականությունը այդպես պիտի ըլլա։

Մինչև այս Կարոն զիտեր, վոր ինք կամավոր զինվոր և և վոչ ծառա, ինչպես Բուրբռնյանը կը հորջորջեր, բայց նախընտրեց լուսթյուն պահել առայժմ։ Կարոն ինքն ալ իր անհատական կյանքին մեջ ինքզինք եփենտի կզդար, բայց բաղդը զինքը աղքատացուցած եր և հիմա ստիպված եր հերոս ըլլալ։ Բուրբռնյանի կոչը լավ առիթ եր, մանավանդ վոր մեկ աչքը չկար և հեղափոխական կեղծ անունն ալ պատրաստ երթեց Ցապանչաւ։

Բուրբռնյանը և Կարոն հասան Տրապիզոն, ճանապարհին ժամանակ չունենալով մեալ վորեն տեղ և ճառախոսել, զինվորներ հավաքել, վորովհետեւ, ինչպես Բուրբռնյանը ամեն վայրէյան կը կըկներ, ոգինվորներ հավաքված կըլլան Պոլիս և համապատասխան կարգադրություններ չեն ըլլար։ Անոնք ստիպված յեղան յերկու որ սպասել Տրապիզոնի մեջ, վորովհետեւ նավ չկար։ Բուրբռնյանը հարմար տեսավ հրապարակային միտինդ կազմակերպել և կոչ ընել «զիտակից յերիտասարդության» գալ իր յետեն և ջախջանել իտալական բանակները։

Համաձայն իր տեստրակին՝ Տրապիզոնը կուտար 50 ռազմիկ։ Առենին յերբ անիկա Տրապիզոն գնաց հեղափոխական պրոպագանդի՝ հուսահատ դուրս յեկագի Հիմա կոկորդը պատռելու չափ պոռաց և աղաղակեց, բայց մյուս որը Կարոյի չափ ալ արդյունք չափավ, բայց այս պարագան յերբեք հուսահատեցուց մեր հերոսը, վորովհետեւ Տրապիզոնը արդեն դրեթե դուրս եր ծրագրեն։ Ցերկու-

որ հետո նավը յեկավ և անիկա ուղևորվեցավ ոսմանյան մայրաքաղաք:

Յերկրորդ անգամ ըլլալով, հեռազբեց Թյուրքիո պատերազմական նախարարության և Հ. Հ. Դաշնակցության կ.-Պոլսի պատասխանատու մարմնին, կամ ավելի ճիշտ ե ըսել, Թյուրքիո և Հայաստանի պատերազմական յերկյակ նախարարությանց:

Առաջին որը Բուրբոնյանը իշեանեց Pera Palace սթելը, վարձեց վերի հարկի վրա սենյակ մը իր համար և վարի հարկը սենյակ մը՝ կարոյին համար։ Առաջին դիշերը ուղեց հանգստանալ և վայել պաշտօնական մարմնի լուր չտվագ իր ժամանելը։ Բայց իրիկունը՝ քնելե առաջ, յերեակայեց։

— Իմ դորբերը կը լան ավելի ուժեղ և թարմ, վորովհետեւ անոնք կուղան Հայաստանի անտոփիկ լեռներեն, խմած են հայրենիքի զով և կաղղուրիչ ջուրը, ծծած են առողջարար ողը։ Բաւլացիներու վրա տարած հաղթություններես յետքը յես շքով և փառքով կը վերադառնամ Հայաստան և իմ հաղթական լեզեռներով կը հայտարարեմ արևելյան Անատոլուի անկախություն։ Այդ հաղթություններես յետքը վոչ վոք կրնա իմ դեմ խոսիլ։ Կը փշքեմ բոլորը, յես հաղթական եմ, յես ջախջախեցի իտալական կատաղի դինվորները։

Տակավին շատ պիտի յերկարեր յերեակայությանց այս սարսափելի շարքը, յեթե հանկարծ կարօն ներս չմտներ և չընդհատեր։

— Դոկտոր հֆենտի, փաշավորթ կուզեն։

— Շատ լավ, կը հրամայեմ։ ինձ ներկայանալ և ստանալ։

Կարօն անմիջապես դուրս գնաց և հայտնեց Բուրբոնյանի կամքը։ Համաձայն իր տված պատվերներուն՝ կարօն աշալուրջ եր Բուրբոնյանը ներկայացնելու այնպես, վոր նոր տեսնողներուն պատկառանք և վախ ազդեց։ Կարօն ուրիշներու ներկայության Բուրբոնյանի տառիկ կը կենար այնպես, ինչպես մոմը աշտանակին վրա։

Ոթելին տերը ներկայացավ Բուրբոնյանին ամենախորին հարգանքով և ներողություն խնդրեց, վոր ինք սահմանական մայրաքաղաքի որենքներուն։

—Այս, այս, պետք եւ կետ առ կետ հետեիլ պետական որենքներուն, պատասխանեց գոկու. Բուրբոնյանը և զբանեն հանեց Յերդնկայի որտու գոմանտարիին արտօնագիրը:

Ոթելին տերը յերը կարդաց արտօնագիրը, ծռեցավ մինչեւ գետին հարգանքի լայն արտահայտությամբ և վերադառնուց թուղթը Բուրբոնյանին. Ոթելի տերը մեկ քանի անգամներ խոնարհություն ընելե հետօն գուրս յելավ:

—Կարո՞, աղաղակեց Բուրբոնյանը, ինձ մտիկ ըրե՛, հաղթություններես հետո քեզ մեծ պաշտօններու կը հասցնեմ:

Կարոն, վոր շատ խորամանկ մարդ եք և դիտեր այս բոլորին ունայնությունը, պատասխանեց.

—Եսո մեծ հույս ունիմ, դոկտոր Եֆենտի, վոր իմ վիճակը վերջը վերջը կը բարեկավիլի և յես ալ համեստ պաշտօնի մը կը հասնիմ ձեր շնորհիվ:

—Իմ շնորհիվ շատ բաներ կը տեսնես, Կարո, հույս ունեցիր, յես կը հաղթեմ և գու կը տեսնես:

—Կասկած չունիմ, վոր կը հաղթու և կը փշրես բոլորին բազուկները. Մեր զյուղին մեջ կոշկակար մը կար, վոր կը հավատար թե ինք ծնած է քահանա ըլլալու և ծառայելու տիրոջը, բռնորը վրան կը ծիծաղեյին, բայց յերը Տեր-Դրիդորը վախճանեցավ, զյուղացին գարձավ բերավ այդ կոշկակարին վրա միտք դրավ և քահանա ձեռնադրել տվավ, դոկտոր Եֆենտի, թերեւ կը ճանչնաս մեր Բալանդայի Տեր-Նշանը:

Դոկտ. Բուրբոնյանը շը սիրեց այդ կոշկակարի որինակը և անմիջապես խոսքը փոխելով հարցուց.

—Կոշկեներս ներկամծ ես, Կարո, զգեստներս արթուկել տված ես:

—Հրամեր եք, դոկտոր խումանատար:

Բուրբոնյանը քիչ մնաց ցատկեր և Կարոն համբուրեր, յերբ անիկա զինքը խումանատար կոչեց: Աչքերը փայլեցան, ուրախության ճաճանչներ գուրս խուժեցին անոր աչքերեն, բեխերը վալորեց, շտկեց ստորակետները և բարձրաձայն և վերջեն դտած աղնը վականի մը առնով ըստավ.

— Կարմ, կարմ, առակավին ի՞նչ բաղդավորություններ պիտի առանես իմ շնորհիվ:

Առավատ ժամը 9-ին փութաց դեպի «Ազատամարտ»-ի խըմքագրությունը, ուր ստացված էր իր հեռադիրը: «Ազատամարտ»-ի խմբագրագետը վողջունեց Բուրբոնյանի զալուստը և հայտնեց, վոր պատասխանատու մարմինները մեծ անհամբերությամբ կը սպասելին իր դաւատյան: «Ազատամարտ»-ի պետը ապշտոթյամբ դիտեց Բուրբոնյանը թրակական զինվորական ուսադիրներով, ձեռքը արծաթ կոթով մտրակ մը, մեջքը ատրճանակի կաշիյե աման մը:

— Իմ ռազմական առաքելությունը անշուշտ կանդրադառնամեր Հայաստանի պիճակին վրա և մենք աշխարհի առջև կը ցուցադրենք մեր ռազմական ընդունակությունները, Յեվրոպայի առջև բացի մեր դիվանագիտական, վաճառականական և փիլիսոփայական հզրությունները ի սպաս դնելեւ, կարեռ էր վոր ռազմորեն ալ մեր յերեսը ճերմակ ըլլար, — ճառի նման արտասանեց դոկտոր Բուրբոնյանը:

«Ազատամարտ»-ի խմբագրագետը իր մտքին մեջ կը շարչարվեր գտնելու դիվանագիտական, վաճառականական և փիլիսոփայական հզրությունները, յերբ Բուրբոնյանը իր ծոցի զրագունենանեց որտու գումանստարիին արտոնագիրը և յերկարեց խմբագրագետին: «Ազատամարտ»-ի դեկադալե հետո՝ հարեց:

— Բայց յերեք կարիք չկար, մոր մենք խառնվեյինք վոյես կերպով իտալիս գեմ մզված արդարացի պատերազմի մը:

— Ի՞նչպես թե արդարացի, իտալիա բացորոշորեն կը կողոպտե մեր յերկը լավադույն մեկ մասը, պատասխանեց զրգոված Բուրբոնյանը:

— Պետք է զիանալ թե Թյուրիխան վոչ մեկ կերպով ոդատեկար չե հանդիսացած Տրինոլիսի, ինչպես վոր առած էր, այնպես ալ, թերես անկե ալ ավելի ավերած, պիտի հանձնե իտալացիներուն, հականառեց լրջարեն «Ազատամարտ»-ի պետը:

— Յես կը փրկեմ զրությունը, իմ բանակը թույլ չի տար:

վոր թյուրքիան հանձնել Տրիպոլիսը իտալացիներուն, ընդուժմախոռնեց մեր ուղմագետը:

Խմբագրապետը ընկողմանեցավ իր աթոռին մեջ և սկսավ իտորը մտածել, վոր իր ուսչի կը զանվի սարսափելի յերազե մը արթընցող խելազար մը:

Անիկա յերբեք չնաևկցավ թե Բուրբոնյանը ինչ կը շարունակեր փաստաբանել, վորովնեան անոր չեր ունինդրեր, միայն ըսթափելի հետո՝ ըսավ.

— Ընկեր Բուրբոնյան, նախ քան ձեր մասնակցիլը այս պատերազմին՝ կուսակցության պատասխանատու մարմինը իր վճիռը պետք ե տա: Յես կը խնդրեմ ձեզնե չներկայանալ յերբեք պատերազմական նախարարության, մինչև այս իրիկվան պատասխանատու մարմին կարծիքը առնեք: Տակավին կամավորներ չեն յեկած և ինչ հարկ զիմել պատերազմական նախարարության առանց դինվորական վորոշ թիվ մը ներկայացնելու:

Բուրբոնյան խոստացավ չներկայանալ նախարարության, վոչ թե անոր համար, վոր կը սպասեր լսել պատասխանատու մարմինի կարծիքը և վճիռը, այլ անոր համար, վոր ինք թառոցիկներու մեջ՝ կամավորներու հացե աված եր «Ազատամարտ»-ի խմբագրատունը և վոչ վոք տակավին չեր յեկած:

— Զեղ հետ վոյնե կամավորներ ունի՞ք, հարցուց խմբագրապետը:

— Այս, կան և բոլորն ալ կարին աղաք են, կարոն հրաշալի զինվոր մըն ե, պատասխանեց դոկտ. Բուրբոնյանը:

«Ազատամարտ»-ի պետը կարծեց, վոր կարոն ամբողջ խումբի մը դեկավարն եւ:

Շաբաթներ անցան և պատասխանատու մարմինը չի համաձայնեցավ ընկեր Բուրբոնյանի պատերազմի մասնակցելու մասին վճիռ տալ, իսկ Բուրբոնյանը կուղեր, վոր այդ վճիռը ուշանար, վիճարանությունները վորչափ կարելի յեր յերկարին, վորովնեան հակառակ իր հսկայական բանակի թվին, մեջտեղը վոչինչ կար: Իր համբերությունը ջարդու փշուր յեղավ, աչքը դեպի նավահան-

զիստը հառած մնաց և մեկ հատ կամավոր չժամանեց։ Դոկտոր Բուրբոնյանը շարունակեց Պոլսի փողոցները պտտիլ զինվորական ուսադիրներով։ Պոլսի ժամանելեն մեկ քանի շաբաթ հետո իր ուսադիրներուն վրա նշանները փռնեց՝ կամովին բարձրացնելով իր զինվորական աստիճանը, որտու գումանատարիին այն խոսքին վրա, վոր և մեկ քանի շաբաթ հետո մենք կը բարձրացնենք Զեր աստիճանը։ Յերբեք կարելի չեր ըսել, թե առանց պատերազմի մեջ մտնելու անիկա իր աստիճանները բարձրացուց, վորովհետեւ Բուրբոնյանը կը գտնվեր դորձնական և արյունալի պատերազմերում։ Անիկա կոխվ կը մղեր և հաճախ կը հաղթեր, անիկա իր բանակով գրո՞ւ կուտար իտալական զինվորներուն վրա և անոնց ըստիպել կուտար անպատիվ նահանջել։ Թանի անդամներ վերք ըստացավ, յեկավ հիվանդանոց, թյուրք հանմեն իր վերքը լվացին, գեղեցին և կապեցին։ Ինք ճառ խոսեցավ անօնց, վոր ու կարող եր սրտեն վերք առնել և չմեռնել, անդամ մը ևս թշնամիին կուրծք տալու համար»։

Պոլսի դաշնակցական պատասխանատու մարմինը ի դուք կը չանալը արգիլել Բուրբոնյանին կոխվ հայտարարել իտալիո դեմ։

Պատասխանատու մարմինն ալ նվազ տառապանքի և յերեայության մեջ չեր։ Բուրբոնյանի նման խելացնորի բարձանքը նյութ գարձուց և կղղունքային հակայական զինաբանության, ցնցվեցավ, չղայնացավ, մերթ լրջորեն խորհեցավ, մերթ թեթևորեն, առանց վայրկյան մը իսկ անդրադառնալու, վոր կամավորներ շըկային և Բուրբոնյանի կամավոր յերթալը թրբական խարխունավի մը վրա դեպի Տրիպոլսի ափերը՝ իտալիան չեր կարող հուզել և շփոթության մատնել։ Պատասխանատու մարմինը թողուց իր բանն ու դործը և բոլոր ժողովներու որակարգի նյութ գարձուց «ընկեր Սրբայազնի պատերազմի մասնակցելու հարցը»։ Հեռազրվեցավ Փընե և Կովկաս, պատասխան ստացվեցավ։ «Խստիվ արգելել հայկական բանակ ուղարկել իտալական բանակներու դեմ»։

Այս զինաբանություններն ու հուզումները տակավին շատ պիտի յերկարելին և ստանային անիմանալի ծավալ և Բուրբոնյանը

իր ուսաղիքները պիտի փութար փոխել զինվորական ավելի բարձրագույն աստիճաններու, յեթե չպատահներ բարեբախտ դեպք մը.—Թյուրքիան պարտվեցավ և հաշտություն կնքվեցավ Իտալիա հետ Տրիակուսի կորուստով։

Այդ բարեբախտ դիպվածեն վոչ այնքան իտալական պատերազմական հրամանատարությունը և Թյուրքիո պատերազմական նախարարությունը հանդարտեցավ, վորքան Հ. Հ Դաշնակցության Պոլսո պատասխանատու մարմինը և խեղճ Կարոն, վոր ամեն զիշեր Բուրբոնյանի սենյակին մեջ դավագան մը ձեռքը (իօրեվ հրացան) Բուրբոնյանի հրամանները կը գործադրեր մերթ պառկելով անկյունը և նշան առնելով պատեն կախված պատկերներուն, վորոնք կը յենթադրվեյին իտալական բանակները ըլլալ և մերթ ցատկելով Բուրբոնյանի «մարշ» աղաղակեն՝ վար կը բերեր բոլոր պատկերները իբրև հաջող հարձակողականի մանյով։

Ահա Կարոն իրիկվան ընթրիքեն հետո կանգնած և Բուրբոնյանի սենյակին մեջ։ Բուրբոնյանը արծաթ կոթով մտրակը ձեռքը, վերեն վար զինվորական շրերը հագած, դիտակը կախած ուսուցն ի վար, սուրին և ատրճանակին կաշիները բոլորը իր տեղը առանց սուրի և ատրճանակի, ինչպես այլի կին մը, հանկարծ կը պոռա։

—Պատրամատ...

Կարոն կը փութա ձեռք առնել գավազանը, վոր ատեն Բուրբոնյանը զիտակը կը հանե և կը զիտե ուշի ուշով դեպի թշնամուրանակը—պատերը, պահ մը զիտելե հետո կը պոռա։

—Մարշ...

Կարոն կը վագե մինչեւ դիմացի պատը, Բուրբոնյանը յերբեք չմոռնար պատեն յերկու քայլ մնացած հրամայելու—պառկիլ—։ Կարոն կը պառկի և գավազանին ծայրը կը զպցնե պատին։

Բուրբոնյանը դարձյալ կը զբաղի զիտելու պատին վրա կատարված շարժումները իբրև թշնամիի հայտնի կամ գաղտնի շարժումներ և հանկարծ։

—Կը ակ, անգաղար կը ակ... կը պոռա։

Կարոն շատ լավ կը հասկնար և կը մքաներ այս մարդկային կատակերգության բովանդակ վայելքը և կը համբերեր, վորովհետեւ կը մտարերեր Խոլթեքենի-Բալանզայի մեջ կտոր մը շոր հացի կարոտությունը:

— Ժամ մը Բերա Պալասի մեջ ռազմական «մանյովը» և հրաշալի սենյակ, Պոլիս՝ մայրաքաղաքը, հրաշալի ուտելիք, հազվելիք և մեծ հրամանատարի ծառա, առանց վերք ստանալու, առանց ձյունին և անձրենին տակ զինվորական ծառայություն ընելու, ժամ մը մանյովը և ամեն ինչ...

Կը մտածեր Կարոն, — իմ բաղդես եր, կը փոփար ինքնիրեն, յեթե այս խենթը չըլլար, յես սատկեր եյի շան նման:

## 5

Դոկտ. Բուրբոնյան Իտալո-Թյուրք պատերազմը վերջացնելե հետո իր բանակին — Կարոյի հետ — վերադարձավ Անտոնլի, Մեր հերոսը ընկճված չեր, վորովհետեւ ինչպես մենք տեսանք, անիկա պատերազմեցավ, բայց Բնչ ընենք, վոր Թյուրքերը պարտվեցան:

Մինչև Թողար հասնիլը Բուրբոնյանի յերևակայությունը կը վառեր անկանոն կերպով՝ յերբ Թողարի մեջ հանդիտեցավ մեկուն վոր բարեբաղդաբար լուր ուներ անոր Իտալո-Թյուրք պատերազմի մասնակցության:

— Դոկտոր եֆենտի, ըսավ այդ մեկը, դուք ալ շկրցիք Փըրեկել պատերազմը:

— Անկարելի յեր, բարեկամ, պատասխանեց մեր հերոսը, յերբ իմ բանակս հասալի՝ արդեն գործի անհաջողության կեսը կատարված եր, անկարելի յեր փրկել, բայց մի սունաք, հարեց Բուրբոնյանը, վոր մեր ճակատամարտերը ահաելի բնույթ ստացան, իմ անձնվեր զինվորը ականատես յեղած և կորիվներուն, և ձեռքովը նշան ըրավ Կարոյին:

Կարոն անմիջապես հասկցավ բանի եյությունը և վերահաստատեց.

— Մանսավանդ մեր հինգերորդ օրվան կոփիլը, հարեց կարոն, ճակատագրական բնույթ ստացավ, մեր դիմացի պատին... ը ը ը, դիմացի նավուն մեջ ինչքան վոր մարդ կար ծովը թափվեցավ:

Բուրբոնյան կարոյի այս խոսքին վրա բոլորովին վողերպիցավ և անմիջապես վճռեց ողտագործել իր ռազմական համբավը, վոր անպայման տարածված կըլլար ամբողջ Անտոլիի մեջ, ի հաշիվ իր ապագա ծրագրին—հայոց թագավորության:

— Մեր ճիգերը իզնուր անցան, բարեկամ թյուրբիան ողարտվեցավ, բայց յետ ուրախ եմ. մին կործանեցավ, բայց մյուսը կը ծնի.

Ի՞նչ ե այս մյուսը, հարց տվակ խոսակիցը:

Բուրբոնյանը պեխերը վոլորեց, հպարտացավ, փքեցավ և իմաստություն համարեց չպատասխանել:

Մինչեւ Սեբաստիա հասնիլը՝ անոր յերեակայության մեջ հայոց թագավորությունը կանգուն եր, միայն կը մնար «չնշին» ձեւկանությունները կատարել: Սեբաստիայի մեջ, որ մը, հանկարծ կարոյին գառնալով՝ ըսավ.

— Կարս, ինձնայն, Բուրբոնյան թագավորություն, հը, ինչպես եւ:

— Ազեկ չհասկցա, դոկտոր եֆենտի, միտքս ուրիշ տեղ եր, մըթմըթաց կարոն:

— Տեր արքա ըսե, շունչանվորդի, տակավին շմոռցար դոկտորը:

— Ներեցեք, վեհափառ, իմ խելքը ուրիշ տեղ եր, պատրաստակամ պատասխանեց կարոն, զուշակելով վոր Բուրբոնյանը կը ցանկանար կաթողիկոս ձեռնադրվիլ, կարոն հայոց թագավոր մտքեն անցնելու շափ հիմար չեր:

Բայց կամաց-կամաց կարոյի համար պարզ յեղավ իր տիրոջ վճը հորիզոնները թեակոխած բլլալը, և սկսավ լրջորեն մտահոգվիլ իր բաղաքական վիճակի մասին:

Սեբաստիայի մեջ մեկ քանի գաղտնի ժողովներ հետո գահաժառանգ Բուրբոնյանը հայոց Արամյանց վարժարանի բակին մեջ հրապարակային միթինգ կազմակերպեց: Նախ քան միտին զը

գահաժառանգը մտավ յեկեղեցի և խորը աղոթեց, յերբ յեկեղեցին դուրս յեկավ, անիկա թողած եր իր արագ շարժուձները, լուրջ և գժգունած, պաշարված եր ծանր խորհուրդով։ Անիկա կղղար, վոր բավականին լուրջ և պատասխանատու գործի մը կը ձեռնարկեր։ Յերբ կարոն ձին մոտեցուց, վոր մոտիկ ապագայի արքան ցատկե վրան, արքայացուն նշան ըրավ ձին հեռացնել և քալեց հետիւու։

Մեծ բազմություն հավաքված եր հայոց Արամյանց վարժարանի բակը լսելու համար իրենց հին ծանոթ ճառախոսուր։ Յերբ անիկա մոտեցավ վարժարանի մեծ զրան, զլու խը կախ, բարձրանալու փայտե շինված բարձր պատվանդանի մը վրա, բազմությունը ապշանքով սկսավ դիտել անոր արտասովոր լրջությունը։

Գահաժառանգը բարձրացավ պատվանդանին վրա, ծանր և խորին նայվածքով դիտեց իր շուրջը և սկսավ... ճառախոսուել։

— Հայրենակիցներ, դարերը դարերու կը հաջորդեն, լեզուները՝ լեզուներու, ազգերը՝ ազգերու, ծովերը՝ ծովերու, պատերազմները՝ պատերազմներու, հրդեհները՝ հրդեհներու և... (քիչ մը կանգ առավ յեկ տոնը բարձրացնելով) թագավորությունները կը հաջորդեն թագավորություններու։

— Թագավորություն կը նշանակե ըլլալ պատվավոր՝ դարերուն և ազգերուն մեջ, կը նշանակե ունենալ փառք և հարստություն, բանակներ և նավատորմիղներ, մեծել պատերազմներ, ճակատ ճակատի դալ շըշապատված թշնամիներու հետ... կը նշանակե ապրիլ, կովիլ և... չմեռնիլ։

Դոկտ. Բուրբոնյան գահաժառանգը այստեղ քիչ մը մտահոգվեցավ, վորովհետեւ սպասած ծափահարությունը կուշանար, կարոն ամբողջ լսողություն եր կտրած հասկնալու խմասոր իր ռատիրոջ վերջին ցնորքներուն։

— Մենք, շարունակեց մեր ճառախոսը — կորսնցնելով մեր թագավորությունը, կորսնցուցինք մեր պատիմն ու փառքը, մենք պարտական ենք վերականգնել մոխիրներու տակեն մեր փառապանծ թագավորությունը, մեր սրբագան պարտքն և այդ։

Կարոն խորապես զգալով իր անձնական քաղաքական վիճակի վտանգը՝ անմիջապես ձին կապեց ծառի մը և կորսվեցավ ամբոխին մեջ։ Հասարակությունը սկսավ հարցականորեն իրարու նայիլ, բայց թիշ չելին նաև անոնց մեջ հայոց թագավորության վոգեկոչումով բացավագողները։ Բարձրացավ կարճիկ և վախճառ ծափահարություն և ամեն ինչ լոեց։ Մեր ճառախոսը շարունակեց, և իրքեւ փորձառու հռետոր, գիտցավ սթափեցնել և վոգեկորել։

— Այսոր, Աստուծո կամքով և իմ անձնական պատասխանատվության տակ, կը հռչակեմ հայոց թագավորության վերահաստատումը և յնս ինքը—Բուրբոնյանո—կստանձնեմ թագը՝ ամուր և անքակտելի հիմքերու վրա դնելու համար հայոց նորածին թագավորական տունը։

Այսուեղ քիչ մը կանգ առավ անթագակիր արքան և սպասեց կեցեներու Բուրբոնյան կը հավատար, վոր գեթ կարոն կսկսի և ամբոխը կը հնատեի։ Անիկա իզուր աչքերով կարոն վնասեց, բայց չգտավ։ Հասարակության այն մասը, վոր վտանգի ներկայությունն զգալու իմաստությունն ուներ՝ սկսավ հեռանալ Արամյանց մարմարնի բակեն, բայց տակավին բավական հասարակություն մնաց լսելու հայոց ժամանակակից արքան։

— Լսեցեք, իմ հավատարիմ հպատակներ, մեծ և Աստուծո կամքը, մեծ կըլլա և իմ ուժը կառավարելու, վերացնելու անարդարություններն ու թշվառությունները, մեծ կըլլա և իմ սիրու տոկայու արքայական բոլոր արտմություններուն, բոլոր զրկանքներուն։ Այս պատիվը, վոր դուք կընեք ինձ՝ ընտրելով ինձ ձեր թագավորը՝ կերպնում առաջի Աստուծո, վոր կը վարձատրեմ լիուլի, կը լեցնեմ ձեր ամբարները, կը ծաղկեցնեմ ձեր շուկաները և պատերազմ կը մղեմ բոլորին դեմ։

Հասարակությունը կամաց—կամաց ավելի հեռացավ, այնպես վոր ճառախ մինչև այս կետը ճառախոսին անդամ նկատելի դարձավ այդու։

— Իմ զինվորներս և պաշտոնյաներս, յերեք որեն կը կազմի կառավարություն, կորոշվի մայրաքաղաքը և թերես կառավարու-

թյան կաղմի հռչակման հետ միաժամանակ՝ յերջանիկ առիթը ունենալը պատերազմ հայտարելու նորածին թագավորության թշնամիներու դեմ:

Հանկարծ Արամյանց վարժարանի բակը լցվեցան հարյուրավոր թյուրք վոստիկաններ, պաշարեցին հայոց արքան և հասարակությունը: Անոնց հրամանատարը մոտեցավ արքա Բուրբոնյանին և շրամայեց հետեւի իրեն: Բուրբոնյան պատրաստվեցավ հարձակիլ վրան յերբ տասնեւ ավելի վոստիկաններ մոտեցան և շղթայեցին զայն, առա ձերբակալեցին համարակության մեջ քաղաքի աշբի ինկնող անձնավորություններեն 50 հոգի և ցրվեցին ամբոխ:

Յերբ Բուրբոնյանը դուրս կառաջնորդեցին բակի դռնեն, անիկա դարձավ իր յետել և ամբոխին վրա խոժոռ նայվածք մը պատցնելե հետո՝ աղաղակեց.

— Չեր արքան ե ձերբակալված, ստրուկ ժողովուրդ, ինչու եք վարաններ: Վոստիկանները լոեցուցին զինքը և տարին բանտ:

Քաղաքացիք խանութիները փակեցին և տուն մտան, ամբողջ զիշերը ահ ու սարսափի մեջ անցնելով:

Բուրբոնյանը բանտի իր խուցին մեջ հանդիպեցավ Ֆանթազիոյին, վոր հինգ տարվան համար բանտարկության եր դատապարտված դրամաշորթության հանցանքով: Յերբ Ֆանթազիոն տեսավ իր ծանոթ Բուրբոնյանը, անմիջապես մոտեցավ քովը:

— Բարեկ, բարեկ, դոկտոր, ինչպես ես, ինչու քեզ այստեղ բերին, հարցուց:

Բուրբոնյանը սուրի օկես կտրող նայվածք մը նետեց Ֆանթազիոյի յերեսին և պատասխանեց.

— Յես դոկտոր չեմ, ստրուկ, յես արքա յեմ:

Գիշերը, շղթայակապ, կը զառանցեր, անհասկանալի աղաղակներ կարձակեր, յերբ քովը պառկող բանտարկյալ մը արթնցուց զինքը: Բուրբոնյան վեր ցատկեց, շեշտակի նայեցավ զինքը արթընցնողին և զայրույթով պոռաց անոր վրա.


— Միթե առանց թագուհի ունենալու կարելի չե թագավոր ոծվիլ...



Այս վեպը առանձին գրքույկով տպագրված էր 1921-ին Պոլսի մեջ «Հայաստանի Տոն-Քիշոթը» անունով, բայց հեղինակի կողմեն արդիլվեցավ անոր հրապարակ դրվիլը տպագրական անճռոնի որխալներու պատճառով։

Դ. 10<sup>o</sup>.





{15n}

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220027970

27970